


ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ**1. ԷԼՄԻՐԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ**

Դատախրավական բարեփոխումների դերը
սահմանադրական բարեփոխումների ուղղությունների
կանխորշման հարցում

2

2. ԱՐԱ ԵՐԵՍՅԱՆ

Թրաֆիքինզի մեխանիզմը

10

3. ՕԼԻՄՊԻԱ ԳԵՂԱՄՅԱՆ

Ծրջակա միջավայրի առնչությամբ որոշումների
կայացմանը հասարակայնության նասնակցության
իրավունքի հասկացությունը և բովանդակությունը

15

4. ՋՐԻՍՔԻՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՉԼՄ-ների գործունեության վրա ազդող
հիմնական գործուները

25

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ >**5. ՍՈՒԱ ԹՈՐՈՍՅԱՆ**

Հասարակության անդամների քաղաքական
մշակույթի ձևավորման և հանրապետությունում
բացասական երևույթների դեմ պայքարի
հիմնահարցերը ՀՀ պարբերական մամուլի
քաղաքական հրապարակախոսությունում

30

6. ՄԱՐԱՏ ԱՏՈՎՄՅԱՆ

Մարդու տնտեսական, սոցիալական և մշակութային
իրավունքների վերաբերյալ դրույթները արտասահմանյան
երկրների որոշ իրավական հուշարձաններում

36

7. Գևել ՍուհնեզՅԱՆ

Վարչադատավարական գործընթացի վերաբենության
փուլի անհրաժեշտության հիմնախնդիրը Հայաստանի
Հանրապետությունում

42

8. ԳԱՐԻԿ ՍՏԱՎՐՈՂՅՅԱՆ

Անմիջական ժողովրդավարությունը Հայաստանի
Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության
տեղական ինքնակառավարման համակարգում

50

9. ԱՐԱՅԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ

Հափշտակության հանցակազմի սուբյեկտիվ կողմը

55

10. ՄԻԿԱԵԼ ՄԻՆԱԾՅԻՆ

Влияние Суда ЕС на правовое положение частных лиц

60

ԷԼՄԻՐԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ



**ԴԱՏԱԿԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ
ԴԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՈՒՂՂՈԽՅՅՈՒՆԵՐԻ
ԿԱՆԽՈՐԾՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ**

Սահմանադրական բարեփոխումները այս կամ այն չափով իրենց արտացոլումն են ստացել սահմանադրական գրեթե բոլոր հիմնադրույթներում, դրանք անխտիր առնչվել են Սահմանադրության սկզբունքային նորմերի հետ, ուստի, հիրավի բարդ խնդիր է դրանցից որևէ մեկին նախապատվություն տալը: Տվյալ դեպքում դատադրավական բարեփոխումների հասունագույն նշանակություն տալով, չենք փորձում նսեմացնել բարեփոխումների մյուս ուղղությունները, պարզապես հարկ ենք համարում ընդգծել, որ բարեփոխումների այս հատվածը հիրավի դարձել է սահմանադրական ողջ բարեփոխումների և գնահատման համընդհանուր չափանիշը և երաշխիքը, ինչպես նաև բարեփոխումների ուղղությունները կանխորշող առանցքային գործոնը:

Դատական համակարգի բարելավումը միջազգային համաձայնագրերով և պետությունների սահմանադրություններով ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, քաղաքական համակարգի ժողովրդավարացման, ինչպես նաև ողջ սահմանադրական կարգի ամրապնդման լավագույն երաշխիքն է¹: Դատադրավական բարեփոխումների առանցքային նշանակությունը սահմանադրական բարեփոխումների ենթատեքստում հնարավորինս համալիր հետազոտելու և առարկայական դարձնելու նկատումով նպատակահարմար ենք գտնում ստորև ներկայացնել այն բնութագրող հիմնական հատկանիշները՝

1. Սահմանադրական բարեփոխումների, թերևս, ամենագերակայող գաղափարը մարդու և քաղաքացու՝ միջազգային իրավունքի սկզբունքներին համահունչ իրավունքների ու ազատությունների ամրագրումն ու դրանց համարժեք պաշտպա-

նության լծակների ու երաշխիքների սահմանումն է: Այս տեսանկյունից դատադրավական բարեփոխումների անհրաժեշտությունը առաջին հերթին պայմանավորված է այն խիստ կարևոր փաստարկով, որ մարդու իրավունքների պաշտպանության ամենակատարյալ ու հուսալի եղանակը համարվում է դատական կարգը: Թերևս դա է պատճառը, որ Սահմանադրության՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ հատվածի առնվազն մեկ տասնյակի հասնող հոդվածներ նվիրված են իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության երաշխիքներին:

Սահմանադրության բազմաթիվ այլ հոդվածներ անմիջականորեն չեն առնչվում դատադրավական բարեփոխումներին, սակայն դրանք ևս փոխկապակցված են այդ բարեփոխումների հետ: Այսպես, օրինակ, Սահմանադրության 5-րդ հոդվածում ամրագրված իշխանությունների տարանջատման և հակալշոման սկզբունքը առանցքային նշանակություն ունեցող երաշխիք է դատական իշխանության անկախության կայացման ու բարելավման համար: Նույն այդ հոդվածում ամրագրված է օրինականության սկզբունքը, որը, նաև, պարտավորեցնում է բոլոր պետական մարմիններին և պաշտոնատար անձանց ձեռնպահ մնալու դատական իշխանության գործառույթներին որևէ կերպ միջամտելուց, մյուս կողմից՝ դատարանները պարտավորվում են իրականացնել զուտ արդարադատության գործառույթը և ձերբազավել նախկինում ստանձնած ու ավանդույթի ուժ ունեցող վարչական գործառույթների իրականացումից և այլն:

Սահմանադրության առանձին հոդվածներ ուղղակիրուեն են ամրագրում դատարանի դատագրության շրջանակները, դրանով իսկ ընդգծելով

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության ներքին բովանդակությանը խիստ համառունչ դատական հանակարգ ձևավորելու գաղափարը։ Այսպէս՝ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն, «Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է արձակման»։ Այսպիսով, անձի առավել սկզբունքային իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանափակման գործընթացում էական դերակատարում է վերապահվում դատարանին, ինչ հիմքում ընկած է այն ելակետային դիրքորոշումը, ըստ որի արտադատական կարգով իրավունքների սահմանափակումը կարող է կատարվել միայն բացառիկ դեպքերում և հնարավորինս սեղմ ժամկետներով։ «Արտադատական ընթացակարգով ազատությունից զրկելը ոչ միայն իրականացվում է Սահմանադրությամբ ամրագրված բացառիկ դեպքերում, այլև ուղեկցվում է խիստ սահմանափակ ժամկետով»²։

Այսպիսով, դատաիրավական բարեփոխումներ իրականացնելու բուն անհրաժեշտությունը և դրա իրականացման ուղղությունները պայմանավորված են Սահմանադրության բարեփոխումների ողջ ծավալն ապահովելու բնականու ընթացքով։ Վերջին հաշվով, Սահմանադրության յուրաքանչյուր դրույթ կարող է իրատեսական և երաշխավորված լինել, եթե դրանք ուղեկցվում են համապատասխան պետական հարկադրանքի կիրառման, իսկ անհրաժեշտության և բավարար հիմքերի առկայության դեպքում՝ դատական կարգով կիրառվող պատասխանատվության միջոցների նշանակման ու իրականացման հնարավորությամբ։ Այս տեսանկյունից դատական համակարգը ևս հանդիսանում է պետական հարկադրանքի բաղադրիչ և կոչված է իրեն բնորոշ լիազորություններով ապահովելու Սահմանադրության գերակայությունը։ Ասվածը հավասարապես վերաբերում է սահմանադրական դատարանի կազմավորման և գործունեության սահմանադրական հիմքերին։ Կարծում ենք, օրինակ, սահմանադրական դատարանի քննությանը ենթակա գործերի շրջանակի ընդլայնումը մեծ մասամբ թելադրված էր հենց մարդու իրավունքների գերակայության խնդրի համարժեք լուծման անհրաժեշտությամբ։

2. Իշխանությունների տարանջատման և հավասարակշռման սկզբունքի սահմանադրական վավերագրումը կարող է լիարժեք լինել միայն այն

ժամանակ, եթե դատական իշխանությունը այդ համակարգում հիրավի ձեռք է բերում անհրաժեշտ անկախություն և իշխանության մյուս ճյուղերին հավասարակշռելու իրական ունակություն։

Այս սկզբունքի հիմնական ուղղվածությունը ենց դատական իշխանության անկախության ապահովումն է, քանզի իշխանության երեք ճյուղերից առավել խոցելին համարվում է հենց դատական իշխանությունը։ Ի դեպ, այս դատողության հիմնավորվածության մասին են վկայում Սահմանադրության բազմաթիվ այլ հոդվածներ, որոնք մեծ մասամբ միտված են դատարանների անկախության երաշխիքի բաղադրիչների ամրագրմանը։ Հետո որում, դժվար չէ նկատել, որ, ի տարբերություն օրենսդիր և գործադիր իշխանության առնչվող սահմանադրական նորմների, դատական իշխանության առնչվող նորմները մեծ մասամբ ունեն դատական իշխանության անկախությունն ընդգծելու, այն երաշխավորված դարձնելու ուղղվածություն։ Ավելին, իշխանության ոչ մի ճյուղի վերաբերյալ սահմանադրական դրույթներում, բացառությամբ դատական իշխանության հիմնադրույթների, չկա որևէ նորմ, որով սահմանվի այդ իշխանության ճյուղի անկախությունը, թեպետ, բնականաբար իշխանությունների տարանջատման մասին կարելի է լիարժեք խոսել միայն այն դեպքում, եթե առկա է դրանցից յուրաքանչյուրի անկախությունը։

Հավելենք, որ Սահմանադրության հիմնադրույթների փաստացի կիրառումը մեծ մասամբ պայմանավորված է նաև իշխանության մյուս ճյուղների նկատմամբ դատական իշխանության ներազդեցության բացառապես հավասարակշռված լծակներին նախապատվություն տալով։ Խնդիրն այն է, որ դատարանները պետք է բացառապես իրականացնեն արդարադատության գործառույթը և ցանկացած հիմնավորմանը, այդ թվում՝ անկախության ամրապնդման անհրաժեշտությամբ չճգտեն փոխարինել իշխանության այլ մարմիններին, քանզի այդ դեպքում ևս խարարվում է նույն Սահմանադրության առանցքային սկզբունքների պաշտպանության ողջ գործընթացը։ Կարծում ենք, որ այդպիսի դեպքերում դատարանները ոչ թե ձեռք են բերում լիարժեք անկախություն և խրախուսելի կարգավիճակ, այլ՝ դառնում առավել խոցելի, քանի որ, օրինակ, գործադիր իշխանությանը վերապահված լիազորություններ իրականացնելիս, դատարանները ականայից ներքաշվում են ոչ թե դատաիրավա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կան, այլ վարչական հարաբերությունների մեջ: Այսպես, եթե դատարանները, քննելով օրինակ, ձեռնարկատիրական գործունեության լիցենզիա տալու մերժելու մասին վարչական ակտի դեմքերված հայցադիմումը, ոչ թե պարտավորեցնում են հատկացնելու լիցենզիա, այլ հենց իրենք են կայացնում լիցենզիա տալու մասին որոշում, ապա հարկադրված են լինում իրականացնելու վարչական վարույթ վարչական դատավարության փոխարեն:

Ցավոք, վերը բերված օրինակները կիրառվում են նաև գործնականում՝ դրանից բխող բացասական հետևանքներով: Այսպես, քննարկելով 2002-04թ. ընթացքում հողահատկացումը մերժելու վերաբերյալ Երևանի քաղաքապետի որոշումների դեմ բերված հայցադիմումները, Երևան քաղաքի համայնքային դատարաններում կայացվել են բազմաթիվ դատական ակտեր, որոնցով ոչ թե վարչական ակտերը ճանաչվել են անվավեր, կամ քաղաքապետը պարտավորեցվել է կայացնել իրավաչափ որոշումներ, այլ պարզապես ճանաչվել է քաղաքացիների սեփականության իրավունքը վիճարկման առարկա հողամասերի նկատմամբ: Ընդ որում, այդ գործերով Երևանի քաղաքապետը սահմանված կարգով պատասխանող չի ճանաչվել այն անհիմն պատճառաբանությամբ, որ դատարանում քննվել է ոչ թե իրավունքի վեճ, այլ՝ փաստի ճանաչման հայց: Հիշյալ դատական ակտերի մեջ մասը սահմանված կարգով բողոքարկվել և բեկանվել է, սակայն փաստն ինքնին վկայում է այն մասին, որ գործնականում ևս չի բացառվում դատարանների անհարկի միջամտությունը գործադիր իշխանությանը³:

3. Ցանկացած նախաձեռնություն իշխանության որևէ այլ ճյուղի, այդ բվում՝ գործադիր իշխանության կողմից իրականացվող ցանկացած ծրագիր ի սկզբանե մատնված է ձախողման, եթե այդ ոլորտում անխուսափելիորեն ծագող վեճերի քննության համար երաշխավորված չէ պատշաճ արդարադատության իրականացում: Գործնական վերլուծությունները ցույց են տալիս, որ միայն դատարանների անկախության ապահովմանն ուղղված ճիգերը բնավ բավարար չեն հիշյալ երաշխիքը իրատեսական համարելու համար:

Հարկ է նկատել, որ մայրցամաքային իրավական համակարգի պայմաններում, իրավունքի աղբյուրների շրջանակը սահմանափակվում է բա-

ցառապես օրենսդիր և գործադիր իշխանության իրավաստեղծ գործունեության արդյունքում, ինչը սահմանափակում է լիարժեք դատական նախադեպի կիրառման հնարավորությունը: Այս սկզբունքային նշանակություն ունեցող իմմնադրույթին համապատասխան՝ սահմանադրական բարեփոխումները որդեգրել են բացառապես այնպիսի իրավական լուծումներ, որոնք թեպետ դատարանին վերապահում են իրավաստեղծ գործունեության որոշ տարրերով, ինչպես նաև դատական համակարգում օրենքների միատեսակ կատարման գործառույթներով, այնուամենայնիվ, դատական ակտերը, որպես կանոն, չեն կարող համարվել իրավունքի աղբյուրներ: Ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ նաև ավանդական երկրներում է նկատվում աստիճանաբար նախադեպի, որպես իրավունքի աղբյուրի շրջանակների սահմանափակման միտում: Այդ մասին վկայում են նաև օտարերկրյա իրավագետները. «Անզիհայում և Ուելսում նախադեպը, որպես իրավունքի աղբյուր, գոյատեսել է մինչև այն ժամանակները, երբ ձևավորվել է լիարժեք խորհրդարանական իշխանություն և խորհրդարանական օրենսդրություն: Գործադիր իշխանության ուժեղացմանը զուգահեռ էական տեղ է տրվել նաև ենթաօրենսդրական ակտերին, ինչը ևս աստիճանաբար դուրս է մղում նախադեպային հենքով ձևավորված իրավունքի աղբյուրը»⁵:

4. Դատաիրավական բարեփոխումները միաժամանակ կարենոր երաշխիք են իշխանության մյուս ճյուղերի միջև ծագած հակասությունները հնարավորինս առանց անիրավաչափ բախումների լուծելու տեսանկյունից: Քաղաքական կյանքը հաճախ է մատուցում քաղաքական ուժերի միջև սուրբ բախումների իրավիճակներ, իսկ դրանք ժողովրդավարական եղանակներով լուծելու միակ ճանապարհ՝ դատական եղանակն է, ինչը հնարավորություն է տալիս կողմերին ձեռնպահ մնալ հակասությունները բռնություններով լուծելու «հրապուրանք» և նախապատվությունը տալ բացառապես օրինական եղանակներին:

Իհարկե, դա չի նշանակում, որ քաղաքական հակասությունների լուծման քաղաքակիրք եղանակների սահմանումն ինքնին ամբողջությամբ չեղորացնում է բռնությունների ու անիրավաչափ այլ քայլերի դիմելու հնարավորությունը, սակայն ակնհայտ է, որ դատական ճկուն համակարգերի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

առկայությունը մեղմացնում է այդ անցանկալի երևոյթների ծագման հավանականությունը: Բացի այդ, ժողովրդավարական ինստիտուտների առկայությունը նպաստում է այնպիսի բարոյահոգեբանական մքննողութի ձևավորմանը, որի պարագայում առավել նպաստավոր պայմաններ են ստեղծվում քաղաքական սուր տարածայնությունները առանց հակամարտությունների ու բախումների լուծելու ավանդույթների կայացման համար:

Որքան կայացած է լինում դատական համակարգը, որքան մեծ է լինում վերջինիս նկատմամբ վստահությունը, այնքան առավել նշանակալից է քաղաքական հակամարտությունները բացառապես քաղաքակիրք եղանակներով, առանց բռնությունների դիմելով եղանակով լուծելու հավանականությունը: Սա, իհարկե, չի նշանակում, որ կայացած դատական համակարգի պարագայում բացառվում է քաղաքական և տարաբնույթ այլ հակամարտությունները բռնությունների եղանակով լուծելու տարրերակը: Ըստ որում, քաղաքական ուժերը, հաճախ ի սկզբանե հերքելով դատական եղանակով տարածայնությունները լուծելու հարցում դատարանների, այդ թվում՝ սահմանադրական դատարանի կողմից անաշառ դիրքորոշում դրսևորելու հնարավորությունը, դեկավարվում են ոչ թե այն փաստարկով, որ իրոք չեն վստահում դատական համակարգին, այլ վորձում են հասարակությանը ապացուցել իրենց ծայրահեղ գործողությունները, իլնիքաց վարկարեկելով իշխանության մի կարևոր հատվածի, ինչը պայմանավորված է սույլ քաղաքական նկատառությունով:

5. Դատահրավական բարեփոխումների հիմնարար ուղղություններից է նաև երկրում օրինականության, օրենքների միատեսակ կատարման ապահովման խնդրի համարժեք լուծումը: Վերևում, մասնավորապես սույն աշխատության 1-ին գլուխ 2-րդ պարագրաֆում մենք արդեն անդրադարձել ենք այդ հարցին: Աշխատության այս հատվածում նպատակահարմար ենք համարում հիշյալ հարցը քննարկման առարկա դարձնել այլ ասպեկտով: Կոնկրետ, անհրաժեշտ ենք գտնում բացահայտել սահմանադրական բարեփոխումների առանցքում օրինականության մեծ դերի և դրա ապահովման գործում դատահրավական բարեփոխումների նշանակության հարցերը և դրանց լուծման առավել շահեկան եղանակները:

Բնականարար, սահմանադրական բարե-

փոխումների բնականոն ընթացքն ապահովելու տեսանկյունից դատահրավական բարեփոխումների նշանակության վերաբերյալ վերը նշված դատողությունները, փաստարկները սպառիչ չեն: Գործնականում ծագում են նաև այդ փոխադարձ կապը հաստատող այլ իրավիճակներ, սակայն ներկայացված նյութը, կարծում ենք, ևս բավարար է պատկերացում կազմելու այն վճռորոշ դերի մասին, որ ունեն դատահրավական բարեփոխումները:

Եթե փորձենք համեմատություն անցկացնել այլ ոլորտներում իրականացվող բարեփոխումների և դատահրավական բարեփոխումների միջև, ապա, կարծում ենք, պարզ կդառնա, որ առավել ցավոտ ու խիստ տարածայնություններով են ուղեկցվում, հատկապես, դատահրավական բարեփոխումները: Իսկ դա, հայտնի իմաստով, դանդաղեցնում է սահմանադրական բարեփոխումների ողջ գործընթացը: Մեծ մասմբ այն պայմանավորված է դրանց ուղղությունների և իրականացման եղանակների առնչությամբ անհամեմատ սուր տարածայնությունների առկայությամբ:

6. Իրավական բարեփոխումների անքաղատելի մասն է կազմում նաև անհրաժեշտ բարոյահոգեբանական մքննողութի ձևավորմանը նպաստելը: Ըստ միջազգային հետազոտողների, ինչի հետ մենք ևս համամտու ենք. «Հայաստանում պատմականորեն ձևավորվել է հանրային վստահության պակաս, եթե հասարակությունը հակված է մտածելու, որ պետությունը հետամուտ չի լինում ընդունված սկզբունքների պահպանմանը և չի պաշտպանում իր քաղաքացիներին»⁶: Այդ առումով հարկ է ներդնել այնպիսի ընթացակարգեր և ինստիտուտներ, որոնք համապատասխանում են գործունեության բափանցիկության առավել բարձր ցուցանիշներին:

Այժմ անդրադառնաք սահմանադրական բարեփոխումների շրջանակում դատահրավական բարեփոխումների առնչությամբ հիրավի սուր տարածայնությունների առնչությամբ ծագած խոչընդուների բնույթին և դրանց հաղթահարման խնդիրներին:

Կարծում ենք, այս ոլորտում բարեփոխումների ուղղությունների առնչությամբ հիրավի սուր տարածայնությունների առնչությամբ օրինականության մեծ դերի և դրա ապահովման գործում դատահրավական բարեփոխումների մի շարք հոգեբանական և օբյեկտիվ գործուներով, որոնց վերաբերյալ համարժեք պատկերացումները հնարավորություն են տալիս իրավաստեղծ քաղաքականություն իրականացնե-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

լիս ընտրել առավել արդյունավետ տարրերակներ: Ստորև փորձենք ներկայացնել վերը նշված երևոյթի առավել բնորոշ տարրերը՝

ա) դատաիրավական բարեփոխումներն անմիջականորեն առնչվում են մի շարք կառույցների գերատեսչական շահերին: Հետաքրքիր է այն, որ գերատեսչական շահերի անհարկի բախումները բնորոշ են նաև առավել կայուն իրավական համակարգ ու փորձ ունեցող երկրներին⁷: Խնդիրը հատկապես բարդանում է նրանով, որ այդ կառույցների յուրովի ընկալվող գերատեսչական շահերը և դրանցով պայմանավորված փոխհարաբերությունները ակնհայտ սրված են ու հաճախ՝ անհամատենելի:

Այսպես, օրինակ, ոստիկանության կամ ցանկացած այլ համակարգում գործող քննչական մարմինները փորձում են ամեն կերպ հիմնավորել քննիչների ինքնուրույնության և հնարավորինս դատախազական հսկողությունից կամ դատական վերահսկողությունից դուրս մնալու անհրաժեշտությունը, մինչդեռ դատախազները և դատավորները հակված են իմնավորելու, որ մինչդատական վարույթում դատախազական հսկողության և դատական վերահսկողության լիազորությունները խիստ ընդլայնման կարիք ունեն: Եթե ասվածին հավելվենք նաև փաստաբանների, փորձագետների և դատավարությանը այս կամ այն չափով մասնակցող կառույցների հակասական շահերը, ապա պատկերն առավել ամբողջական կլինի,

բ) յուրաքանչյուր նորամուծություն, որը ներառված է դատաիրավական բարեփոխումների ծրագրում, փոխկապակցված է այնպիսի սոցիալ-քաղաքական և ֆինանսական խնդիրների իրականացման հետ, որոնք պետական համակարգից անխուսափելի իրեն պահանջում են որոշակի պատրաստվածություն ու ներդրումներ, մինչդեռ երկու դեպքում դրանք միշտ չեն, որ բավարար չափով առկա են լինում: Դատաիրավական բարեփոխումները փոխկապակցված են այնպիսի հարցադրումներով, որոնք առանց լուրջ ֆինանսատեսական ներդրումների պարզապես հնարավոր չեն լուծել: Մասնավորապես, երկար ժամանակ քննարկվում էր վարչական դատարան ունենալու անհրաժեշտության հարցը: Բացի այն, որ զուտ քաղաքական նկատառումներով այդպիսի դատական ատյանի ստեղծումը ենթադրում է որոշակի բարդությունների հետ առնչվելու անխուսափելիություն, խնդիրը

ակնհայտ բարդ էր նաև տնտեսական կտրվածքով, քանի խոսքը ոչ թե եղած հաստիքների հաշվին, այլ միանգամայն նոր հաստիքների, այն էլ՝ նեղ մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն անցած դատավորներ ունենալու, համապատասխան կառուցվածքային կարիքների լուծման անհրաժեշտության մասին է և այլն:

Սիցազգային փորձի վերլուծությունը ևս բերում է այն համոզման, որ արդարադատության մատչելիության և յուրաքանչյուր այլ առանցքային սկզբունքի նշանակությունը պատշաճ գնահատելով հանդերձ, ցանկացած պետություն և ձգտում է ներդնել այնպիսի ինստիտուտներ և համակարգեր, որոնք կհանգեցնեն այդ ոլորտում անհարկի ֆինանսական ծախսերի և մարդկային ռեսուրսների անարդյունավետ ծախսի կրճատմանը⁸,

գ) դատաիրավական բարեփոխումներին առնչվող խնդիրները, ինչպես արդեն նշվեց, անմիջականորեն առնչվում են մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հարցերին, ինչն ինքնին էապես մեծացնում է դրանց հասարակական հնչեղությունը: Համեմատական վերլուծությունը, թերևս, թերում է այն համոզման, որ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացված դատաիրավական բարեփոխումներին առնչվող օրենսդրական ակտերի շուրջ 85 տոկոսը նախապես ներկայացված է լինում միջազգային փորձաքննության, մինչդեռ՝ այլ օրենսդրական ակտերի պարագայում այդ տոկոսը կազմում է սույն 30 տոկոս: Բնորոշ է նաև այն, որ բանկային, գյուղատնտեսության ոլորտին առնչվող օրենսդրական ակտերի պարագայում այդ ցուցանիշն էլ ավելի ցածր է և այլն:

Բնականաբար, նման իրավիճակում խոսել հնարավորինս սեղմ ժամկետներում իրականացվող իրավաստեղծ գործունեության մասին իրատեսական չէ, քանի որ փորձաքննությունների ինստիտուտը ենթադրում է ոչ միայն որոշակի ժամանակի հատկացում բուն փորձաքննությանը, այլև դրա արդյունքների հաշվառմանը արդեն իսկ մշակված և պաշտոնական շրջանառության մեջ դրված օրինագծերի վերանայմանը և լրամշակմանը:

Սիամամանակ, այս առնչությամբ, կարծում ենք, որ ժամանակն է իրավական կարգավորման առարկա դարձնել միջազգային իրավական փորձագիտական եզրակացության կիրառմանն առնչվող հասարակական հարաբերությունները,

դ) դատաիրավական բարեփոխումների

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

հնարավորինս արագ իրականացման գործում շահագրգոված չեն նաև գործնական աշխատանքում ներգրավված անձինք, որոնց համար կտրուկ և արմատական փոփոխությունները մշտապես ընկալվում են որպես անկանխատեսելի և դեռևս բավարար չափով անհասկանալի նորամուծություններ՝ : Վերջիններս նաև մտավախություն ունեն, որ դրանց պրակտիկ կիրառումը կարող է ընթանալ բոլորովին այլ ուղղությունով և եղանակներով: Վերջապես, արմատական փոփոխություններով ուղեկցվող իրավական նորամուծությունները ենթադրում են որոշակի մասնագիտական պատրաստվածություն, իսկ գործող իրավական համակարգին քաջածանոթ և փորձառու աշխատողների համար դա, բնականաբար, անհարկի ծանրաբեռնվածություն է,

Ե) դատաիրավական բարեփոխումներին զուտ քաղաքական նկատառումներով երթեմն ակնհայտ անիրավաչափ խոչընդոտում են նաև ընդդմադիր քաղաքական ուժերը: Վերջիններս թեպետ քաջ գիտակցում են, որ այդ բարեփոխումները հաճախ շահեկան են առաջին հերթին իրենց համար և համահունչ են իրենց իսկ կողմից առաջ քաշված գաղափարներին, սակայն զուտ քաղաքական հաշվարկը հարկադրում է նրանց անհիմն ու անխնաքննադատության ենթարկել այդ նախաձեռնությունները, որպեսզի հանրության մեջ քացառն այդ բարեփոխումների նկատմամբ համարժեք կարծիքի ձևափորումը, ամեն գնով վարկարեկների շիխանությունների յուրաքանչյուր նախաձեռնություն: Իսկ այդպիսի քաղաքական ակցիաների արդյունքում իշխանությունները հարկադրված են լինում կազմակերպել առավել տևական ու լայն ընդգրկվածություն ունեցող հանրային քննարկումները: Լավագույն դեպքում գոնեն մասսամբ հաջողվում է հանրության մեջ ձևավորել համարժեք և իրականությանը համահունչ հանրային կարծիք, իսկ երթեմն էլ, անհարկի քաղաքական հուզումներից ու նմանաբնույթ այլ երևույթներից դրդված, այդ նախաձեռնությունները անորոշ ժամկետով կանխարգելվում են: Դրականը տվյալ դեպքում այն է, որ իշխանությունները վերը նշված իրավիճակներում միայն ծայրահեղ դեպքերում են ձեռնպահ մնում իրենց նախաձեռնություններից:

Կարծում եմ՝ ասվածի վառ օրինակն է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով և Հայաստանի Հանրապե-

տության դատական օրենսգրքով նախատեսված դատական սանկցիաների վերանայման առնչությամբ կառավարության նախաձեռնությունը: Մասնավորապես, 2008թ. մարտյան իրադարձությունների առնչությամբ հարուցված քրեական գործերի դատաքննության ընթացքը ցույց տվեց, որ ամբաստանյալները կազմակերպված դիմում են քացառապես այնպիսի քայլերի, որոնք միտված էին դատական նիստերի զանգվածային ծախուղումներին, ընդ որում, ամբաստանյալները տևական ժամանակով իրենց թույլ էին տալիս դատավարության մասնակիցներին վիրավորելու, հայիոյելու և անհարկի քաղաքական ելույթներ: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ կառավարությունը միանգամայն իրավաչափորեն հանդես եկավ դատական սանկցիաների վերանայման այնպիսի նախաձեռնությամբ, որը թույլ էր տալիս դատարանին վերը նշված բնույթի խախտումներ թույլ տված ամբաստանյալներին կարծ ժամանակով հեռացնել նիստերի դահլիճից՝ պարտադիր ապահովելով նրանց պաշտպանների մասնակցությունը դատաքննությանը, ինչպես նաև հեռացված ամբաստանյալի վերադառնալուց հետո պարտադիր ծանոթացնելով նրան դատաքննության նյութերին:

Հիշյալ նախաձեռնությունը միանշանակ համապատասխանում էր արդար դատաքննության միջազգային չափանիշներին և կոչված էր երաշխավորելու նաև հենց այն ամբաստանյալների շահերը, որոնք իրենց թույլ էին տալիս խոչընդոտելու դատական նիստերի բնականոն ընթացքը: Խնդիրն այն է, որ անհարկի ձգձգվող դատական նիստերի երևույթը չի կարող բխել ամբաստանյալների շահերից, չի կարող վերջիններիս համար դիմում որպես ընդունելի տարրերակ:

Ընդ որում, այս մոտեցումների հիմքում ընկած են նաև Մարդու իրավունքների և ինմանարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի հիմնադրույթները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային դատական ակտերը: Պատահական չէ, որ հիշյալ հոդվածում բացարձակապես ակնարկ չկա ամբաստանյալի այնպիսի իրավունքի մասին, ինչպիսին է դատական նիստերը խոչընդոտելու միջոցով դատաքննության քննական ընթացքը ձախողելը:

Ինչևէ, քաղաքական ընդդմադիր ուժերը

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

անհապաղ անցան կազմակերպված ակցիաների, փորձելով ձախողել վերը նշված նախաձեռնությունը և մեղադրել կառավարությանը հակաժողովութափարական նախաձեռնություններով հանդես գալու միտումներ դրսորելու մեջ: Տվյալ դեպքում կառավարությունը հետևողական գտնվեց, կարողացավ համոզի դարձնել իր դիրքորոշումները և նպաստել Ազգային ժողովում այդ օրենսդրական ակտերի ընդունմանը:

Միաժամանակ նկատենք, որ վերը նշված նախաձեռնությունը մենք սույն ընդհանուր գծերով ենք համարում իրավաչափ, իսկ առանձին դրույթների առնչությամբ ունենք տարածայնություններ, որոնք արդին առանձին խնդիրներ են: Թեմայից շեղվելու նկատառումով նշենք միայն, որ ամբաստանյալի իրավունքները սահմանափակելիս չեր կարելի հիմնավորված համարել տևական ժամանակով դատական նիստերից հեռացնելը, քանզի բուն նպատակը ոչ թե ամբաստանյալին պատժելն է, այլ դատական նիստերի բնականոն ընթացքն ապահովելը: Այլ կերպ ասած, հարկ էր պարզապես ընտրել այնպիսի ընթացակարգեր, որոնք հնարավորություն կտային միայն մեկ-երկու նիստերից հեռացնել, իսկ խախտումները կրկնվելու դեպքում դատարանը գրկված չէր լինի յուրաքանչյուր անգամ դատական նիստերից հեռացման սանցիա կիրառելու հնարավորությունից:

Ընդհանուր առմամբ, դատաիրավական բարեփոխումներին առնչվող հարցադրումները սերտորեն առնչվում են նաև սահմանադրական բարեփոխումների այնպիսի հիմնահարցերի, ինչպիսիք են՝ Նախագահի կարգավիճակը, կառավարման ձևը, քաղաքական ռեժիմը և այլն¹⁰: Այսպես, ինչպես հայտնի է, մինչև 2005թ. սահմանադրական բարեփոխումները Հանրապետության Նախագահը համարվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի նախագահ և դատավորների անկախության երաշխավորող: Այդ փուլում գերիշտում էր այն մտայնությունը, որ դատական իշխանության անկախության ապահովման խնդիրն այնքան կարելոր է, որ դրան հասնելու եղանակներին կարելի է եական նշանակություն չտալ, իսկ Նախագահի բարձր պաշտոնական դիրքը հնարավոր կլինի ծառայեցնել այդ խնդրի լուծմանը:

Նշված տեսակետների հիմնավորվածության հարցին հանգանանորեն չանդրադառնալով

հանդերձ, նկատենք միայն, որ գործնականում այդ տեսակետները այնքան էլ կենսունակ չգտնվեցին: Մասնավորապես, պարզ դարձավ, որ ցանկացած իշխանության օղակին, այդ թվում՝ անգամ երկրի Նախագահին որպես դատական իշխանության երաշխավոր ճանաչելը հղի է այնպիսի վտանգավոր հետևանքներով, ինչպիսիք են դատավորների անկախության ձևախեղումները: Տվյալ դեպքում, մեր կարծիքով, ի հայտ եկան այնպիսի ձևախեղումներ, որոնք հանգեցրին գործադիր իշխանության կողմից արդարադատության իրականացմանը միջամտելու, դատավորների կադրային քաղաքականությունը կանխորշելու դրսորումների: Բնորոշ է այն, որ թեպետ դատավորների անկախության երաշխավորի կարգավիճակը վերապահված էր Հանրապետության Նախագահին, այնուամենայնիվ, դատավորների նկատմամբ, ըստ էության, որոշ իշխանական լծակներ էին ձեռք բերել այնպիսի պաշտոնյաներ, որոնք որևէ կերպ չին տեղափորվում սահմանադրական կարգավորումների շրջանակներում: Այսպես, պարբերաբար, ըստ նախապես հաստատված ծրագրի, դատավորների գործունեությունը ստուգման առարկա էր դառնում Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի աշխատակազմի կողմից, որի նախագահը անմիջականորեն ենթարկվում էր Հանրապետության Նախագահին:

Գործող Սահմանադրությունում, կարծում ենք, Հանրապետության Նախագահի լիազորությունների վերանայումը միանշանակ համապատասխանում է դատական իշխանության միջազգային սկզբունքներին: Առավել շահեկան է համարվում այն, որ արդարադատության խորհրդի կազմից միանգամայն հիմնավորված կերպով հանվել են Հանրապետության գլխավոր դատախազը և արդարադատության նախարարը, որոնք նախկինում, ի պաշտոնե, համարվում էին արդարադատության խորհրդի նախագահի տեղակալներ: Կարծում ենք, հիմնավորված լուծում է տրվել նաև արդարադատության խորհրդի նիստերը վարելուն առնչվող խնդիրներին, մասնավորապես, վճռաբեկ դատարանի նախագահը ոչ թե ձեռք է բերել այդ կարելոր կառույցի նախագահի, այլ սույն նիստերը վարողի կարգավիճակ, ինչը պարզապես անհրաժեշտ է նիստերի բնականոն ընթացքն ապահովելու տեսանկյունից:

Այսպիսով, չնեմացնելով սահմանադրա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կան բարեփոխումների մյուս ուղղությունները, աշխատության սույն հատվածում փորձ ենք արել ընդգծել դատադրական բարեփոխումների առանցքային նշանակությունը սահմանադրական բարեփոխումների անշրջելիությունն ապահովելու և դրանց հիմնական ուղղությունները պահպանելու տեսանկյունից: Ակնհայտ է, որ այլ ուղղություններով ընթացող բարեփոխումները (ֆինանսա տնտե-

սական, սոցիալական և այլն) ևս կանխորշել ու դեռ կանխորշելու են սահմանադրական բարեփոխումների ողջ ընթացքը, սակայն ցանկացած նախաձեռնություն կարող է կյանքի կոչվել և ծառայել իր բուն նպատակին, եթե ի սկզբանե ամրագրված խնդիրներն ուղեկցվում են անհրաժեշտ դատադրական երաշխիքներով:

¹ Steu Droit du contentieux administratif, Montchrestien, Professeur e'me'rite de l'Universite', Pantheon-Assas (Paris 11), 1998, էջ 386:

² Steu Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնարանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի, Երևան, «Իրավունք», 2010, էջ 195:

³ Նշված օրինակները վերցված են Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի 2002-05թթ. արխիվից:

⁴ Steu Դատական համակարգեր, Երևան, «Օրենք և իրականություն», 2008:

⁵ Steu Hood Philips O., Jackson P., Constitutional and Administrative Law. L., 1988, էջ 227:

⁶ Steu Fisher George, Plea Bargaining's Triumph: A History of de Plea Bargaining in America, Sanford University Press, 2004, էջ 151:

⁷ Այդ առումով անհրաժեշտ վերլուծություններ կան հետևյալ աշխատությունում. Stephanos Bibas, Plea Bargaining: Outside the Shadow of the Trial, 117(8) Harvard Law Review, June 2004:

⁸ Steu Promoting the rule of law (ABA/CTTLI). Judicial reform for Armenia. April 2002. American Bar Association. Central and east European law initiative, էջ 74-79:

⁹ Steu Joint Opinion on the amendments of 17 March 2008 to the Law on Conducting Meetings, Assemblies, Rallies and Demonstrations of the of Armenia by the Venice Commission and OSCE/ODIHR by the Venice Commission at its 75th Plenary Session (Venice, 13/06/2008-14/06/2008), էջ 59-63:

¹⁰ Steu Mauer B., Le principe de respect de la dignité humaine et la Convention européenne des droits de l'homme, Mintpellier: Universite Montpellier, 1988, էջ 298-301:

ԱՐԱ ԵՐԵՄՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի քրեական
իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի
դասախոս, ի.գ.ք., ՀՀ արդարադատության նախարարության
աշխատակազմի վերահսկողության վարչության պետ

ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՄԵԽԱՆԻԶՄԸ

Եվրոպայի խորհրդի 2005թ. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին կոնվենցիայի (այսուհետ՝ ԵԽ 2005թ. կոնվենցիա) 4-րդ հոդվածի «ա» ենթակետում տրված բնորոշման համաձայն՝ մարդկանց թրաֆիքինգ է շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, բարցնելը կամ ընդունելը՝ ուժի սպառնալիք կամ ուժ գործադրելու կամ հարկադրանքի որևէ այլ ձև կիրառելու, առևանգման, խարդախության, խարեւության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու, կամ այլ անձնավորության նկատմամբ որոշակի վերահսկողություն իրականացնող որևէ անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով դրամական միջոցներ կամ այլ օգուտներ տրամադրելու կամ ստանալու եղանակով¹:

ՀՀ քրեական օրենսդրությունում «թրաֆիքինգ», «մարդկանց թրաֆիքինգ» կամ «մարդկանց առևտուր» տերմինները որպես այդպիսին չեն օգտագործվում: Դրանց փոխարեն օգտագործվում են այն տերմինները և սահմանումները, որոնցով թրաֆիքինգը (մարդկանց առևտուրը) որպես երևոյթ բնութագրվում է միջազգային իրավունքի գործիքներում: Դրանց փոխարեն ՀՀ քր. օր-ում օգտագործվել են ԵԽ 2005թ. Կոնվենցիայում, ինչպես նաև ՍՍԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Կոնվենցիայում² և այն լրացնող՝ թիվ 2 Արձանագրությունում³ օգտագործվող տերմինները:

ԵԽ 2005 թ.Կոնվենցիայում ձևակերպված «թրաֆիքինգ» հասկացությունը համապատասխանում է Պալերմոյի թիվ 2 Արձանագրության (2000թ.) 3-րդ հոդվածի «ա» կետում սահմանված հասկացությանը: ՀՀ քր. օր-ի 132 հոդվածի 1-ին մասում ձևակերպված հանցագործության հասկացությունն, առանձին վերապահումներով, համա-

պատասխանում է միջազգային այդ գործիքներում տրված հասկացությունների բովանդակությանը:

ՀՀ քր. օր-ի 132 հոդվածում սահմանված թրաֆիքինգի (1-ին մաս) իրականացման մեխանիզմներն եապես չեն տարրերվում այլ պետություններում նույն հանցագործության իրականացման մեխանիզմներից: Թրաֆիքինգը գործընթաց է, որը, որպես կանոն, բաղկացած է երեք փուլից՝ հավաքագրելուց, փոխադրելուց (տեղափոխելուց) և շահագործման հանձնելուց: Աղյուսակ 1-ում (Էջ 11) ներկայացվում է թրաֆիքինգի մեխանիզմն ըստ ՀՀ քր. օր-ի 132 հոդվածի 1-ին մասում նկարագրված դիսպոզիցիայի:


ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նկարագրված հանցագործությունը ավարտված համարելու համար անհրաժեշտ է ցանկացած համակցությամբ երեք տարրերի առկայությունը միաժամանակ՝ գործողությունը, միջոցը⁴ և շահագործման նպատակը:

Ընդ որում, թրաֆիքինգն ավարտված հանցագործություն համարվելու համար պարտադիր չէ, որ անձը ենթարկվի շահագործման (ձևական հանցակազմ): Դրա համար բավարար է, որ անձի նկատմամբ շահագործման նպատակով կատարվի 132 հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նշված գործողություններից մեկը՝ նույն դիսպոզիցիայում նշված եղանակներից որևէ մեկի կիրառմամբ:

Այսպիսով, թրաֆիքինգը համարվում է ավարտված հանցագործություն մինչև անձի փաստացի շահագործումը: Այսպես, մարդկանց «հավաքագրումը» (գործողություն) «խարդախության միջոցով» (միջոց) «աշխատանքային շահագործման նպատակով» (նպատակ) հանցավոր գործունեություն է, որը պետք է որպես կամ որպես ավարտված թրաֆիքինգ: Կամ, օրինակ, «շահագործման նպատակով» (նպատակ) «առողջության համար

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Աղյուսակ 1

ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՄԵԽԱՆԻԶՄԸ
(ՀՀ քր. օր-ի 132 հոդվածի 1-ին մաս)

ոչ վտանգավոր բռնության գործադրմամբ» (միցոց) «մարդուն թարցնելը» (գործողություն) նույնպես պետք է որակվի որպես ավարտված թրաֆիքին:

Վերլուծենք թրաֆիքինքի մեխանիզմը հետևյալ օրինակի համատեքստում:

Ծանր տնտեսական իրավիճակում հայտնված 19-ամյա միայնակ մայրն իր հարբեցող հոր հետ հերթական վիճաբանությունից հետո տեղափոխվել էր այլ բնակավայր և սրճարանում աշխատում էր որպես մատուցողուհի: Նրան երբեւ չի վճարվել պայմանավորված աշխատավարձը

և նա մշտապես ենթարկվել է սրճարանի տիրոջ սեքսուալ ոտնագություններին: Այդ իրավիճակում նա վստահել է մեկ այլ մարդու (միայն հետագայում է պարզվել, որ նա սրճարանի տիրոջ ընկերն է) ու վերջինիս առաջարկով համաձայնել է մեկնել այլ պետության հայտնի տուրիստական կենտրոններից մեկի սեքս-բիզնեսում բարձր աշխատավարձով աշխատելու: Այդ «վստահելի» անձը նրան կեղծ անձնագրով փոխադրել է այլ պետություն, որտեղ անմիջապես փաստաթղթերը վերցվել են, իսկ հանցավոր կազմակերպության ղեկավարը նրան ստիպել է աշխատել փողոցում

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

որպես մարմնավաճառ: Եթե երիտասարդ կինը հրաժարվել էր զբաղվել այդ գործով, նրան մի քանի օր շարունակ ծեծի են ենթարկել և բռնաբարել: Արդյունքում նա որոշել է դուրս գալ փողոց և փախչել առաջին խև հնարավորության դեպքում: Աշխատած ամբողջ գումարը հանձնել է իրեն վերահսկող հանցագործներին: Նրան հաջողվել է փախչել իր հերթական հաճախորդի հետ, հասնել սահման և կատարվածի մասին հաղորդել սահմանապահներին: Հանցագործությունը բացահայտվել է:

Այս օրինակի վրա երևում է, որ շահագործման նպատակով կատարվել է՝

ա) գործողություն, այն է՝ հավաքագրում, որն իրականացվել է՝

- խարեւության միջոցով և

- զոհի վիճակի խոցելիությունը շարաշահելու միջոցով,

բ) մեկ այլ գործողություն, այն է՝ փոխադրում, որն ուղեկցվել է՝

-անձը հաստատող ակնհայտ կեղծ փաստարդի տրամադրմամբ և օգտագործմամբ ու

- միզրացիայի կանոնների խախտմամբ,

գ) ինչպես նաև այլ գործողություն՝ մեկ անձին մեկ այլ անձի հշխանությանը փոխանցում (հանձնում)՝ զոհի վիճակի խոցելիությունը շարաշահելու միջոցով, որն ուղեկցվել է անձը հաստատող ակնհայտ կեղծ փաստարդը վերցնելով (անձը մնացել է առանց օրինական կամ անօրինական փաստարդի):

Արդյունքում անձը դրվել է փաստացի սեքսուալ շահագործման վիճակի մեջ՝ նա հարկադրվել է զբաղվել մարմնավաճառությամբ կամ մատուցել սեքսուալ այլ ծառայություններ երրորդ անձանց, ինչն ուղեկցվել է բռնություններով, ներառյալ՝ բռնաբարությամբ:

Թրաֆիքինգի մեխանիզմը վերլուծելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ արարքը որպես թրաֆիքինգ որակելիս շահագործման այս կամ այն ձևի ենթարկվելու վերաբերյալ թրաֆիքինգի տուժած անձի համաձայնությունը որևէ նշանակություն չունի այն դեպքում, եթե կիրառվել է նախատեսված միջոցներից որևէ մեկը^s:

Այսպես, գործնականում, թրաֆիքինգի բազում դեպքերում, զոհերի և թրաֆիքինգ իրականացնողների միջև ձեռք է բերվում սկզբնական համաձայնություն կամ լինում է համագործակցու-

թյուն, որին հետագայում հետևում են սպառնալիքները, հարկադրանքը, ուժի գործադրումը, խարեւությունը, վատահության կամ իշխանության չարաշահումը: Այդ դեպքում թրաֆիքինգը համարվում է կատարված:

Առանձնահատկություններ ընդհանուր կանոնից

Թրաֆիքինգը որպես ավարտված հանցագործություն համարվելու ներկայացված ընդհանուր կանոնից ՀՀ քր. օր-ը նախատեսում է երեք առանձնահատկություն: Դրանցից երկուսը վերաբերում են դիսպոզիցիայի օբյեկտիվ կողմին, իսկ մեկը՝ սուբյեկտիվ կողմին⁶:

Առաջին առանձնահատկություն. 132 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն, տասնութ տարին չլրացած անձին շահագործման նպատակով հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, բարցնելը կամ ստանալը պետք է որակվի որպես ավարտված հանցագործություն՝ «թրաֆիքինգ», անգամ եթե չեն կիրառվել 132 հոդվածի 1-ին մասում նշված միջոցները:

Նշենք, որ ԵԽ 2005թ. Կոնվենցիայի 4-րդ հոդվածի «գ» կետով սահմանված է, որ շահագործման նպատակով երեխային⁷ հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, բարցնելը կամ ընդունելը համարվում է «թրաֆիքինգ» նույնիսկ այն դեպքում, եթե դա կապված չէ նույն հոդվածի «ա» կետում նախատեսված միջոցներից որևէ մեկի կիրառման հետ:

Երկրորդ առանձնահատկություն. 132 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն, հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա դեկավարելու հնարավորությունից զրկված անձին շահագործման նպատակով հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, բարցնելը կամ ստանալը պետք է որակվի որպես ավարտված հանցագործություն՝ «թրաֆիքինգ», անգամ եթե չեն կիրառվել 132 հոդվածի 1-ին մասում նշված միջոցները:

ՀՀ քր. օր-ի 132 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում նկարագրված հանցագործությունների հանցակազմերը նույնպես ձևական են, ինչպես և 132 հոդվածի 1-ին մասում նկարագրված հանցագործության հանցակազմը:

Առանձնահատկությունը հետևյալն է. վերը թվարկված երկու կատեգորիաների անձանց

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նկատմամբ կատարված ոտնձգությունը համարվում է ավարտված ավելի վաղ պահից, քան նախատեսված է ՀՀ քր. օր-ի 132 հոդվածի 1-ին մասում սահմանված ընդհանուր կանոնով: ՀՀ քր. օր-ի 132 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում նկարագրված հանցագործությունները համարվում են ավարտված (հավաքագրելը, փոխադրելը, հանձնելը, թաքցնելը կամ ստանալը) գործողությունը կատարելու պահից, եթե այն կատարվել է շահագործման նպատակով: Այսպես, վերը թվարկված երկու կատեգորիաների անձանց «հավաքագրումը» (գործողություն) «աշխատանքային շահագործման նպատակով» (նպատակ) հանցագործություն է, որը մեկնարանվոր հոդվածի երկրորդ մասի դիսպոզիցիայի համաձայն պետք է որակվի որպես ավարտված թրաֆիքինք: Կամ, օրինակ, «շահագործման նպատակով» (նպատակ) «մարդուն թաքցնելը» (գործողություն) նույնպես պետք է որակվի որպես ավարտված թրաֆիքինք:

Այսպիսով, նշված երկու կատեգորիայի անձանց համար օրենսդիրը սահմանել է թրաֆիքինքից պաշտպանվածության ավելի բարձր աստիճան: Ընդ որում, եթե տասնուր տարին չլրացած անձին պարագայում նման մոտեցումը կոնվենցիոնալ պարտավորություն է, ապա հոգեկան խան-


գարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա դեկավարելու հնարավորությունից զրկված անձի պարագայում նման մոտեցումը Հայաստանի Հանրապետության կողմից նախաձեռնված լրացուցիչ քայլ է: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ երկու կատեգորիաների անձանց վիճակն ինքնին առավել խոցելի է: Ավելացնենք, որ առանձնապես խոցելի է այն անշափահասների վիճակը, ովքեր միաժամանակ հաշմանդամ են: Նրանց հաճախ օգտագործում են մուրացկանության նպատակներով: Թրաֆիքինքով զրադաշտությունը անձանց իշխանության ներքո գտնվող երեխաները և հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա դեկավարելու հնարավորությունից զրկված անձինք շատ դեպքերում անգամ չեն հասկանում, թե ինչպիսի պայմանների մեջ են հայտնվել և չունեն աջակցության կենտրոնների հետ հեշտությամբ կապվելու հնարավորություն:

Այդուսակ 2-ում (էջ 14) ներկայացվում է թրաֆիքինքի մեխանիզմն ըստ ՀՀ քր. օր-ի 132 հոդվածի 2-րդ մասում նկարագրված դիսպոզիցիայի:

ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԱՌԱՋԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(ՀՀ քր. օր-ի 132-րդ հոդվածի 2-րդ մաս)

(տուժողներն են՝ ա) տասնութ տարին չլրացած անձը, բ) հոգեկան խանգարման հետեւանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա դեկավարելու հնարավորությունից զրկված անձը)



¹ Տե՛ս <http://conventions.coe.int/Treaty/EN/Treaties/Html/197.htm>.

² Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՏ N 4/12/, էջ 294-323:

³ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ՊՏ N 4/12/, էջ 324-332 և էջ 333-345:

⁴ Օգտագործվող «միջոց» բառը պայմանական հասկացություն է: Միջոցները նույնպես գործողություններ են, սակայն դրանք ուղղեցում են հիմնական գործողությունները:

⁵ Տե՛ս ԵԽ 2005թ. Կոնվենցիայի 4-րդ հոդվածի «ք» կետում, ինչպես նաև 2000թ. Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտության կանխարգելման, արգելման և պատժի մասին Արձանագրության 3-րդ հոդվածի «ք» կետում սահմանված դրույթները:

⁶ Թրաֆիքինգը որպես ավարտված հանցագործություն համարվելու ներկայացված ընդհանուր կանոնից ՀՀ քր.օրով նախատեսված՝ հանցակազմի սուբյեկտիվ կողմին վերաբերող առանձնահատկությունը պայմանավորված է ՀՀ քր.օր-ի 132 հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի դիսպոնիցիայի կառուցվածքով, որի համաձայն՝ արարքը համարվում է ավարտված հանցագործություն, եթե նույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը (թրաֆիքինգ կամ անչափահասի թրաֆիքինգ կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա դեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգ) անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ: Այդ առանձնահատկության մանրամասն վերլուծությունը, սակայն, չի ներառվում սույն հետազոտության առարկայի մեջ: Այն կարող է լինել առանձին հետազոտության առարկա:

⁷ ԵԽ 2005թ. Կոնվենցիայի 4-րդ հոդվածի «ք» կետի համաձայն՝ «երեխա» է համարվում տասնութ տարին չլրացած ցանկացած անձ:

ՕԼԻՄՊԻԱ ԳԵՂԱՄՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական դատավարության
ամբիոնի դասախոս

**ԾՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՍՐ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՍԱՍՆԱԿՅՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**



Ծրջակա միջավայրի պաշտպանությունը մեծապես կախված է էկոլոգիական որոշումների կայացման գործընթացում հասարակության մասնակցությունից: Հասարակության արդյունավետ մասնակցությունն ապահովելու համար անհրաժեշտ է տեղեկատվության մատչելիություն և այդ տեղեկատվությունը տիրապետող պաշտոնատար անձանց աջակցությունը: Այստեղ, փաստացի, տեղ է գտնում պարտադիր համագործակցություն, ու թեև համագործակցողների իրավական կարգավիճակը տարբեր է և նույնիսկ հակընդիմ, սակայն համագործակցության նպատակը մեկն է՝ ապահովել շրջակա միջավայրի որակը: Ինչպես նշում է Ա. Խոկոյանը. «Հասարակությունը այս գործընթացում խաղում է երկակի դեր. մի կողմից նա համագործակցում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտի պետական կառույցների հետ, մյուս կողմից՝ հասարակությունը, լուծելով իր խնդիրները, հսկողություն է իրականացնում օրենսդիր և գործադիր մարմինների կողմից՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ունեցած իրենց լիազորությունների իրականացման նկատմամբ...»¹:

Հասարակության մասնակցությունը էկոլոգիական որոշումների կայացմանը լուրջ հնարավորություն է տալիս այդ որոշումների կայացումը ավելի բաց դարձնելու, համապատասխան որոշումներ կայացնող անձանց պատասխանատվությունը բարձրացնելու համար, ինչը կարևոր նախապայման է ողջ գործընթացի արդյունավետ կայացման համար: Այսինքն, հասարակությանը պետք է հնարավորություն տրվի արտահայտել իր մոտեցումներն ու կարծիքը, իսկ պետական մարմինները պետք է դրա հետ հաշվի նատեն:

Յուրաքանչյուր ոք պետք է իրավունք ունենա ոչ միայն ստանալ էկոլոգիական տեղեկատվություն, այլև պետք է հնարավորություն ունենա մասնակցելու,

և անհրաժեշտության դեպքում ազդելու այդ բնագավառում կայացվելիք որոշումների ընդունման վրա, որոնք կարող են նորանոր ռիսկեր ստեղծել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության համար, ինչը ոչ մի դեպքում անհետևամբ չի բողմի նարդկային կյանքն ու նրա կենսագործունեությունը²:

Գաղտնիք չէ, որ նախկին ԽՍՀՄ տարածքում ժողովրդավարությանը տանող դրսերն ամուր փակված էին: Սակայն, աստիճանաբար քաղաքացիներն ու հասարակական կազմակերպությունները փորձեցին դրանք բացել: Իհարկե, հաջողությունների հասնելը լի էր դժվարություններով, ու պետք էր գիտելիքների, փորձի, հմտությունների համապատասխան բանալին գտնել³:

Ծրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության մատչելիությունը, որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցությունը և արդարադատության մատչելիությունը այն երեք սյուներն են, որոնց վրա հիմնվում է ՀՀ կողմից 2001թ. մայիսի 14-ին վավերացրած «Ծրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիան, որը, հանդիսանալով ներպետական օրենսդրության մաս, մանրակրկիտ և հստակ սահմանում է համապատասխան գործընթացները:

Ցանկանալով ներկայացնել շրջակա միջավայրի առնչությամբ որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության իրավունքի ձևավորման պատմությունը, պետք է նշել, որ հասարակայնության մասնակցության իրավունքի որոշակի ասպեկտներ քննարկվել են նաև այնպիսի միջազգային փաստաթղթերում, ինչպիսիք են՝ ՍԱԿ-ի կողմից 1982թ-ին ընդունած «Բնության համաշխարհային կրովարտակը», որի կետ 23 համաձայն յուրաքանչյուր ոք անհա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տապես կամ կոլեկտիվ ձևով կարող է մասնակցել անմիջականորեն իրեն շրջապատող միջավայրի վերաբերյալ որոշումների քննարկման գործընթացին: Ինչ վերաբերյալ է տարածաշրջանային ակտերին, ապա Եվրոպայի խորհրդի 1986թ-ին ընդունված N171 բանաձևը, որը մշակվել էր Եվրոպայի տեղական և տարածաշրջանային մարմնների կոնֆերանսի արդյունքում, նույնպես ամրագրել էր հստակ դրույթներ՝ շրջակա միջավայրի առնչությամբ որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության դրույթներ նախատեսված են եղել նաև ՍՍԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» 1991թ-ի կոնվենցիայով (հոդված 2 և 4), «Կիմայի փոփոխության մասին» 1992թ. կոնվենցիայով (հոդված 6). ՍՍԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վրաբների անդրսահմանային ներգործության մասին» կոնվենցիայով⁴ (հոդված 9): Ո-ին դե ժանելյոյի 1992թ-ի «Ակզրունքների հոչակագրի» 10-րդ սկզբունքը սահմանում էր, որ էկոլոգիական խնդիրներն առավել արդյունավետ կարող են լուծվել բոլոր շահագրգիռ քաղաքացիների մասնակցությամբ, և յուրաքանչյուր ոք նատչելի տեղեկատվության հիման վրա պետք է հնարավորություն ունենա մասնակցելու որոշումների կայացմանը: Դեռ ավելին. նոյն կոնֆերանսին ընդունած «21 դարի օրակարգ»-ում առավել մանրամասն նախատեսված են կայուն զարգացման հասնելու բնագավառում պրակտիկայի արդյունավետ ձևերն ու մեթոդները, և մեծ ուշադրություն է հատկացված հասարակայնության մասնակցությանը: Եվ, վերջապես, 1995թ-ին ԵՏՀ տարածաշրջանի պետությունների բնապահպանության նախարարների կողմից Սովորական ընդունված տեղեկատվության նատչելիության և հասարակայնության նասնակցության ապահովման դեկալար սկզբունքներում հասարակայնության մասնակցությանը նվիրված էին թվով 9 կետեր, որոնք են հանդիսացել Օրիուսի կոնվենցիայի համապատասխան դրույթների համար: Քաղաքացիների մասնակցությունը բնության պահպանության վերաբերյալ օրենքների և որոշումների մշակման ու դրանց իրականացման նկատմամբ հսկողությանը նախատեսված էր նաև «Բնության պահպանության մասին ՀՀ օրենսդրության հիմունքներում», որը, ցավոք, այլև չի գործում:

Թե անհատ քաղաքացիների, և թե հասարա-

կական կազմակերպությունների ունակություններն օգտագործելը, անխոս, նախ և առաջ պետք է հարստացնի ու համարի շրջակա միջավայրի ոլորտում կայանալիք որոշման հիմնավորվածությունն ու կարևորությունը: Այդ հնարավորություններն օգտագործելը կարող է նաև մեծապես օժանդակել շրջակա միջավայրի պահպանության բնագավառի օրենսդրական ակտերի կիրառմանը, քանզի ենթադրվում է, որ քաղաքացիներն ու պետական մարմիններն ունեն ընդհանուր նպատակ, այն է՝ ընդհանուր բարեկեցության, շրջակա միջավայրի որակի պահպանության ու ապահովման համար օրենքների պահանջների հնարավոր իրականացում: Անհատներ, հասարակական կազմակերպություններ, շրջակա միջավայրի բնագավառում պատասխանատու պաշտոնատար անձինք փոխհարաբերություններում հատկապես արդյունավետ է դառնում հասարակայնության մասնակցության դերը շրջակա միջավայրի պահպանության գործում, քանի որ այստեղ օգտագործվում է քաղաքացիների անմիջական կապը իրենց շրջապատող միջավայրի հետ, ինչի արդյունքում, հասարակությունից հաճախ կարելի է ստանալ շրջակա միջավայրի որակի վերաբերյալ այնպիսի տեղեկատվություն, որը պետական մարմինների համար դժվար է ձեռք բերել: Օրիուսի կոնվենցիայի համապատասխան դրույթները որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության վերաբերյալ կարծես թե հիշեցնում են պետական մարմիններին, թե ինչքան կարևոր է իրենց գործունեության արդյունավետ իրականացման համար հասարակայնության մասնակցությունը: Քանի որ շատ հաճախ, ինչպես քազմից ապացուել է պրակտիկան, կայացվում են որոշումներ, որոնք առաջին հայացքից թվում են լավագույնը, մինչդեռ դրանց թարնված գործոնները կարող են ի հայտ գալ միայն հասարակայնության մասնակցության արդյունքում, ինչն էլ իր հերթին կվանիսեր անբարենպաստ հետևանքները յուրաքանչյուրի և բոլորի համար: Եվ, հակառակը, հասարակայնության ձևական մասնակցությունը ու նրա անդամների մոտեցումները շրջանցելը իշեցնում են այդ որոշման իրագործման արդյունավետությունը, քանի որ գործընթացի օրինականությունն առհասարակ դրվում է կասկածի տակ:

ՀՀ գործող Սահմանադրության մեջ այս իրավունքի հիմքերն ամրագրված են 28 հոդվածում, որը հոչակում է. «Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արիեստակցական միություններ կազմելու և դրանց անդամագրվելու

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

իրավունք:

Ցուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք:

Միավորումների գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով»:

1996թ-ի նոյեմբերի 1-ի ՀՀ «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի⁵ դրույթների հիման վրա կարելի է ասել, որ քաղաքացիներն ունեն շրջակա միջավայրի պահպանության բնագավառի հասարակական կազմակերպություններին միանալու և մասնակցելու իրավունք, որոնք վերոհիշյալ օրենքի 22 հոդվածի համաձայն կարող են.

1. տարածել տեղեկատվություն իրենց գործունեության մասին,

2. հիմնել զանգվածային լրատվության իրենց միջոցները,

3. կազմակերպել առանց գենքի, խաղաղ երթեր, ցույցեր, միտինգներ և հավաքներ,

4. ներկայացնել և պաշտպանել հասարակական կազմակերպության իրավունքներն ու օրինական շահերը դատարաններում, պետական իշխանության մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, այլ հասարակական կազմակերպություններում:

Ակնհայտ է, որ ՀՀ Սահմանադրությունը շրջակա միջավայրի բնագավառի որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության հարաբերությունները մանրամասն իրավական կարգավորման չի ենթարկում, այլ ամրագրում է միայն ելակետային դրույթներ, որի հիման վրա ընդունվել և դեռ անհրաժեշտություն կա ընդունելու համապատասխան ոլորտի օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր:

Մինչդեռ, ըստ Օրիուսի կոնվենցիայի՝ հասարակայնության ներկայացուցիչներն իրավունք ունեն մասնակցելու որոշումների ընդունմանը, այսինքն, ամեն մի գործողություն, որի հետևանքով կարող է վատրարանալ շրջակա բնական միջավայրի վիճակը, պետք է դառնա հասարակական բննարկման առարկա և պետք է իրագործվի միայն նրա համաձայնությամբ: Ընդ որում հասարակայնության մասնակցությանը վերաբերվող դրույթները՝ կախված կայացվելիք որոշման ոլորտի կառավարման մակարդակի գործընթացների ձևից, բաժանվում են երեք խմբի: Կոնվենցիայի 6-րդ հոդվածը վերաբերվում է հասարակայնության մասնակցությանը գործունեության կոնկրետ

տեսակների կապակցությամբ որոշումներու գործընթացին, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա: 7-րդ հոդվածը վերաբերվում է հասարակայնության մասնակցությանը շրջակա միջավայրին առնչվող ծրագրերին, նախագծերին և քաղաքականությանը, իսկ 8-րդ հոդվածը վերաբերվում է հասարակայնության մասնակցությանը անմիջական կիրառման ուժ ունեցող նորմատիվ դրույթների, և/կամ ընդհանուր կիրառում ունեցող իրավաբանորեն պարտադիր նորմատիվ ակտերի նախապատրաստման գործին:

Հատկանշական է, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածը նախատեսում է, որ. «Սույն Համաձայնագրի դրույթները չեն կանխակալում որևէ կողմի իրավունքը շարունակել իրագործել կամ ձեռնարկել միջոցառումներ, որոնք ենթադրում են տեղեկատվության ավելի լայն մատչելիություն, հասարակայնության ավելի լայն մասնակցություն որոշումների ընդունմանը ... , քան դա նախատեսված է սույն համաձայնագրով»: Փաստորեն, 3-րդ հոդվածը սահմանում է, որ Կոնվենցիայի դրույթները, այդ թվում 6-րդ, 7-րդ և 8-րդ հոդվածները նախատեսում են նվազագույն պայմաններ, և կողմերը կարող են ավելի լայն արարողակարգեր սահմանել առողջ և բարենպաստ շրջակա միջավայրի ստեղծման ու պահպանման նպատակին հասնելու համար:

Հասարակայնության մասնակցությունը ենթադրում է հասարակության ներկայացուցիչների համագործակցությունը պետական մարմինների հետ որոշումների ընդունման և քաղաքականության մշակման գործընթացում առավել լուրջ արդյունքների հասնելու նպատակով: Օրիուսի կոնվենցիան հնարավորություն է ընձեռում գնալ այն ուղիղվ, որով կարելի է հասնել ցանկալի արդյունքների, քանի որ հստակ ներկայացնում է, թե նվազագույնս ինչ է անհրաժեշտ վերջնական նպատակին հասնելու համար, այն է՝ համապատասխան տեղեկատվության տիրապետում, ծանուցման արդյունավետ համակարգի ստեղծում, իրար հաջորդող անհրաժեշտ գործընթացներ և հասարակայնության մասնակցության արդյունքների պարտադիր հաշվի առնում: Հասարակայնության մասնակցության աստիճանը յուրաքանչյուր կոնկրետ գործընթացին կախված է տարբեր գործուներից՝ ներառյալ սպասարկ արդյունքը, դրանց ծավալները, որքա՞ն մարդկանց ու որքանո՞վ կվերաբերի այդ գործընթացը: Խնդրի լուծման այդ արդյունքը կլինի տեղական, տարածաշրջանային, թե՛ համապետական և

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մակարդակով: Գաղտնիք չէ, որ եթե խնդիրը դատնում է առավել բարդ և վերաբերվում է ավելի մեծ թվով մարդկանց ու լուրջ գործուների, բազմաթիվ պետություններում՝ ցավոք, նաև Հայաստանի Հանրապետությունում, շատ հաճախ հասարակության ներկայացուցիչների դերը իշխում է, իսկ այդ որոշումների համար պատասխանատու պետական մարմինների ու պաշտոնատար անձանց դերը բարձրանում: Մինչդեռ Օրիութիւն կոնվենցիան սահմանում է, որ հասարակայնությունը կարող է մասնակցել որոշումների ընդունման գործընթացի ամենատարբեր փուլերում, սկսած այդ որոշումների մշակման, տարբեր քննարկումների, խորհրդատվությունների փուլերը և ընդիուպ դրանց վերջնական ընդրունման շրջանը: Ընդ որում որոշումների կայացմանը մասնակցության գործընթացում հասարակայնության ներկայացուցիչների կարգավիճակը կարող է տարբեր լինել: Նրանք, ում ուղղակիրեն կվերաբերի ընդունվող որոշման արդյունքը և մշակվող քաղաքականությունը, պետք է օժտված լինեն ավելի լայն հնարավորություններով ազդելու ընդունվող որոշման վրա: Այստեղ էլ հենց երեսում է «հասարակություն» և «շահագրգիռ հասարակություն» հասկացությունների տարբերությունները: Ըստ Օրիութիւն կոնվենցիայի 2-րդ հոդվածի «ձ» կետի՝ «հասարակություն» նշանակում է մեկ կամ մեկից ավելի ֆիզիկական կամ իրավաբանական անձ և համաձայն ազգային օրենսդրության կամ պրակտիկայի՝ դրանց միությունները, կազմակերպությունները կամ խմբերը: Իսկ «շահագրգիռ հասարակություն» նշանակում է մի հանրություն, որն իր վրա կրում, կամ կարող է ազդեցություն կրել շրջակա միջավայրին առնչվող որոշումներից, կամ, որը շահագրգությած է այդ որոշումներով: Սույն սահմանման իմաստով քննապահպանական հասարակական կազմակերպությունները, որոնք համապատասխանում են ազգային օրենսդրության ներկայացրած բոլոր պահանջներին, համարվում են շահագրգիռ կազմակերպություններ, եթե նպաստում են շրջակա միջավայրի պահպանությանը: Ինչպես տեսնում ենք, Կոնվենցիան հնարավորինս հստակ տալիս է այս հասկացությունների մեջնարանությունները, դրանով իսկ փորձելով խոսափել անձտություններից համապատասխան ոլորտներում: Ակնհայտ է, որ Կոնվենցիան առաջնորդվում է այն սկզբունքով, որ կայանալիք որոշումների ընդունման գործընթացին պետք է ընդգրկվեն ոչ միայն այն անձինք, որոնց անմիջական շահերին է վերաբերում այդ որոշումը, այլ նաև յուրաքանչյուր անձ և հասարակական կազմա-

կերպություն, ով կարող է իր դրական ներդրումն ունենալ շրջակա միջավայրի պահպանության գործում ընդհանրապես:

Այսինքն, որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության էությունը կայանում է նաև նրանում, որ պետական իշխանության մարմինները կարողանան հնարավորինս օգտագործել հասարակության բուռն էներգիամ՝ թե նրանից տեղեկատվություն ստանալու և թե նրա մոտեցումներն ու դիրքորոշումներն օգտագործելու միջոցով: Հասարակությունն էլ իր հերթին այս ամենն իրագործում է և անձնական շահագրգությունից, և շրջակա միջավայրի պահպանության ընդհանուր պարտականությունից ելնելով: Օրիութիւն կոնվենցիայի դրույթների իրագործումը հնարավորություն է տալիս ստեղծել գործընթացների մի համակարգ, որտեղ հասարակությունը կարող է իրականացնել իր տեղեկատվություն ստանալու, միավորումներ կազմելու, որոշումների կայացմանը մասնակցելու իրավունքները, ինչի միջոցով Կոնվենցիայի կողմերը կարող են լուծել միանգամից երկու խնդիր, այն է՝ բարձրացնել պետական մարմինների համար իրենց գործառությներն իրականացնելու արդյունավետությունը և հասարակության համար ապահովել իրենց իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման համար անհրաժեշտ բարենպաստ շրջակա միջավայր ստեղծելու հնարավորությունը:

Օրիութիւն կոնվենցիայի դրույթներից բխում է, որ հասարակայնության մասնակցությունը պետք է լինի ժամանակին, արդյունավետ, պաշտոնական և կառուցվի տեղեկատվության, երկխոսությունների, քննարկումների, արձագանքների վրա:

Ինչպես վերը նշվեց, Օրիութիւն կոնվենցիայի 6-րդ հոդվածը վերաբերվում է հասարակայնության մասնակցության այնպիսի որոշումների կայացմանը, որոնք վերաբերվում են պետական իշխանության մարմինների կողմից գործունեության կոնկրետ տեսակի համար բույլտվություն կամ լիցենզիա տալու նպատակահարմարությանը: Ըստ 6-րդ հոդվածի. «1. Յուրաքանչյուր Կողմ՝

ա) կիրառում է սույն հոդվածի դրույթներն այն որոշումների հանդեպ, որոնք առնչվում են հավելված 1-ում հիշատակված նախատեսվող գործունեությունը բույլտվություն,

բ) ազգային օրենսդրությանը համապատասխան սույն հոդվածի դրույթները կիրառում է նաև այն որոշումների հանդեպ, որոնք առնչվում են հավելված

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

1-ում չիշատակված այնպիսի նախատեսվող գործունեությունը բույլատրելուն, որը կարող է էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա...»:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածը առաջին հերթին կիրառվում է վարչական որոշումների, կամ այլ խոսքով ասված, այնպիսի որոշումների ընդունման կապակցությամբ, որոնք նպատակ են հետապնդում բույլատրել առաջարկվող կոնկրետ գործունեությունը: Նման որոշումները շատ բազմազան են, մասնավորապես, որոշումներ, որոնք վերաբերվում են տնտեսական գործունեության լիցենզավորմանը, շինարարության և շահագործման բույլտվությանը, բնական ռեսուրսների օգտագործման բույլտվությանը և այլն⁶:

Թեև առաջին հայացքի կարող է թվալ, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը վերաբերվում է զուտ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականին, որն անցկացվում է ՄԱԿ-ի անդամ բազմաթիվ պետություններում, այնուամենայնիվ, պետք է նշել, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականնը որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության գործընթացի ընդամենը մաս է, և առանձին վերցրած՝ իրենից բույլտվություն կամ լիցենզիա տալու արարողակարգ չի ներկայացնում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականը հենվում է նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության մանրակրկիտ վերլուծությունների վրա, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականի եղակացությունը պետք է համընկնի ընդունվող որոշման բնույթի հետ: Սակայն, պետք է նշել, որ տեսականորեն և պրակտիկայում հնարավոր է նաև այլ իրավիճակ. շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականը կարող է լինել դրական, այսինքն, որ նախատեսվող գործունեությունը ոչ էական բացասական ազդեցություն կունենա շրջակա միջավայրի վրա, սակայն այդ գործունեության բույլտվությունը կարող է մերժվել: Նշենք նաև, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը մեխանիկորեն կիրառվում է նաև ա. և բ. ենթակետերում նախատեսված համապատասխան գործունեությունների որոշակի փոփոխությունների կամ ընդլայնման ժամանակ, քանի որ այդ գործունեության յուրաքանչյուր փոփոխություն ևս լի է շրջակա միջավայրի վրա էական ազդեցություն ունենալու վտանգով:

Ինչպես տեսնում ենք, Կոնվենցիան նախատեսում է, որ 6-րդ հոդվածը կիրառելի կարող է լինել նախատեսվող այնպիսի գործունեությունների նկատմամբ, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ

շրջակա միջավայրի վրա: Այսինքն, այստեղ շատ կարևոր է ճիշտ հասկանալ «էական» ազդեցություն երևույթը, որի մեկնաբանությունը Օրիուսի կոնվենցիայում բացակայում է: Մինչեւ այն պետք է անպայման որոշվի, քանի որ դրանից է կախված հասարակայնության մասնակցության անհրաժեշտության խնդիրը: Նախատեսվող գործունեության ազդեցությունը «էական» բնորոշելու որոշակի չափանիշներ սահմանված են 1997թ. փետրվարի 21-ին Հայաստանի Հանրապետության միացած «Անդրսահմանային ենթատրաստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիայում, ըստ որի. «Նախատեսվող գործունեության տեսակների քննարկման ժամանակ..., Կողմերը կարող են ներքոհիշյալ մեկ կամ մի քանի չափորոշիչների հիման վրա որոշել, թե նախատեսվող գործունեության ազդեցությունը կարող է էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, թե ոչ».

ա. մասշտաբները՝ նախատեսվող գործունեության տեսակները, որոնց մասշտաբները մեծ են այդ գործունեության համար,

բ. տարածաշրջանը՝ նախատեսվող գործունեության տեսակները, որոնք իրականացվում են էկոլոգիական տեսանկյունից հատկապես զգայուն կամ կարևոր տարածքներում, կամ անմիջապես դրան հարող տարածքներում, ինչպես նաև նախատեսվող գործունեության տեսակներ այնպիսի տարածքներում, որտեղ նախատեսվող տնտեսական գործունեության առանձնահատկությունները կարող են լուրջ ազդեցություն ունենալ բնակչության վրա,

գ. հետևանքները. նախատեսվող գործունեության տեսակներ, որոնք առանձնակի բարդ և պոտենցիալ վնասակար ազդեցություն կարող են ունենալ, որը կարող է լուրջ հետևանքներ բերել ինչպես բնակչության, այնպես էլ բուսական և կենդանական աշխարհի վրա... »:

Ինչ վերաբերվում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի առնչությամբ որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության իրավական կարգավորման այլ նորմատիվ ակտերին, ապա դրանց շարքում իր տեղը ունի նաև 1995թ-ի նոյեմբերի 20-ին Ազգային ժողովի կողմից ընդունված «Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձարկնեության մասին» ՀՀ օրենքը: Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձարկնեության ինստիտուտի պատշաճ իրավական կարգավորումը լուրջ երաշխիք է բնապահպանական կորուստների կան-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

խարգելման և կայուն տնտեսական զարգացում ապահովելու համար, ինչը կարող է իրական լինել միայն ոլորտի օրենսդրական ակտերի ներքին հակասականության բացառման և դրանց միջև գործուն համակարգային կապերի ապահովման պարագայում:

Այս օրենքը թե տեսության մեջ, թե պրակտիկայում հանդիսանում է նման հարաբերությունները կարգավորող առաջին նորմատիվ ակտերից մեկը, որի կիրառման 16-ամյա արակտիկան և դրա ընդունման պահին արդեն իսկ առկա էական թերությունները պայմանավորում են դրա համակարգային վերանայման անհրաժեշտությունը:

Այնուամենայնիվ, վերոհիշյալ օրենքի 4-րդ հոդվածը սպառիչ սահմանում է նախատեսվող գործունեությունների ցանկը, որոնք ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության: Իսկ 6-րդ հոդվածը նախատեսում է, որ «Զեռնարկողը, որը մտադիր է իրականացնել 4-րդ հոդվածում թվարկված որևէ նախատեսվող գործունեություն, պարտավոր է այդ մասին ծանուցել լիազորված մարմնին, որն էլ ծանուցումն ստանալուց հետո յոթնօրյա ժամկետում իրազեկ է պահում ազդակիր համայնքի դեկավարներին և հասարակայնությանը նախատեսվող գործունեության իրականացման նախաձեռնության մասին: Ազդակիր համայնքի դեկավարները և ձեռնարկողը ծանուցումն ստանալուց հետո տասնինգորյա ժամկետում կազմակերպում են նախատեսվող գործունեության վերաբերյալ հասարակական լուսմներ՝ լրատվական միջոցներով տեղեկություններ հաղորդելով նախատեսվող գործունեության լուրջությունը, լուսմների տեղի և ժամկետի մասին...»: Թեև «Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է այս գործընթացում հասարակության մասնակցության բավական լայն հնարավորություններ, սակայն, պեսք է նշել, որ օրենքում առկա են փորձաքննության ընթացակարգի էական և առանցքային թերություններ: Մասնավորապես, օրենքում ակնհայտ է գործընթացի վերաբերյալ հասարակայնությանը տեղեկատվությամբ ապահովելու հստակ մոտեցման ու մեխանիզմի բացակայությունը (տեղեկատվության տրամադրման միջոցները, կարգը, տեղեկատվության բովանդակությունը և շրջանակները), փորձաքննության ընթացակարգին հասարակայնության արդյունավետ մասնակցության ապահովման մեխանիզմի թերի կարգավորվածությունը, քանի որ տարանջատված չեն պետական լիազոր մարմնի, համայնքի դեկավարի և նախաձեռնողի պարտակա-

նությունների շրջանակը հասարակական լուսմների կազմակերպման գործում: Բացի այդ օրենքի՝ փորձաքննության ընթացակարգը սահմանող դրույթների վերլուծությունից հստակ պատկերացում չի ձևավորվում փորձաքննության՝ որպես փուլային գործընթացի մասին և օրենքի համապատասխան դրույթների (հոդվ. 6 3-րդ, 4-րդ և 5-րդ մասեր, հոդվ. 8 1-ին, 2-րդ և 5-րդ մասեր, հոդվ. 9 5-րդ մաս, հոդվ. 10 1-ին մաս) վերլուծությունը բույլ չի տալիս ֆիքսել փորձաքննության ժամկետների հաշվարկի սկզբը: Ակնհայտ է նաև, որ վերոհիշյալ օրենքում կիրառված «ազդակիր համայնք» տերմինը, որը ներառում է միայն շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավիր ազդեցության ենթակա մարզի (մարզերի), համայնքի (համայնքների) բնակչությանը, խիստ նեղ է, քանի որ հնարավորություն չի ստեղծում շրջակա միջավայրի պահպանության ոլորտի բոլոր շահագրգիռ անհատներն ու հասարակական կազմակերպություններին մասնակցելու որոշումների ընդունմանը միայն այն պատճառով, որ նրանք նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության անմիջականութենք ենթակա չեն: Դեռ ավելին, անհրաժեշտ է վերանայել օրենքի հիմնական հասկացությունների համակարգը դրանում առկա բացրողությունների, անշշտությունների, ձևակերպությունների թերությունների վերացման նպատակով (օր՝ Օրենքի հիմնական հասկացություններում բացակայում է «հասարակայնություն» եզրույթի բնորոշումը, մինչդեռ օրենքի մի շարք դրույթներում հասարակայնությունն օժտված է որոշակի իրավունքներով, սակայն անորոշ է այդ իրավունքները կրողների շրջանակը): Գտնում ենք նաև, որ պետք է դրսուրել տարբերակված մոտեցում նախատեսվող գործունեության տեսակները դասակարգելիս՝ ենելով շրջակա միջավայրի վրա դրանց ունեցած բարձր, զգալի կամ ցածր ազդեցություններից՝ ըստ միջազգային և եվրոպական իրավունքի սկզբունքների:

Ինչպես վերը նշեց, այս առումով ավելի առաջադիմական մոտեցում է դրսուրում Օրիուսի կոնվենցիան, որը շրջակա միջավայրի առնչությամբ որոշումներ կայացնելու գործընթացի մասնակից սուբյեկտը բնորոշում է «շահագրգիռ հասարակություն» տերմինվ, որն ընդգրկում է նաև շրջակա միջավայրի պահպանությանն աջակցող հասարակական կազմակերպություններին, եթե դրանք համապատասխանում են ազգային օրենսդրությամբ ներկայացված պահանջներին: Կարենք է նշել նաև, որ Օրիուսի կոնվենցիայի 1-ին հավելվածում նախատեսված է գործունե-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

որյունների բոլոր այն տեսակները, որոնց կապակցությամբ որոշումներ ընդունելիս պետք է իրականացվի հասարակայնության մասնակցությունը: Եվ, վերջապես, գործող օրենքը չի նախատեսում պատասխանատվության միջոցներ նշված սուբյեկտների կողմից իրենց պարտականությունները չկատարելու համար: Այսպիսով, «Ծրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը քոյլ է տալիս արձանագրելու, որ այդ իրավական ակտը լիարժեք չի կարգավորում փորձաքննության գործընթացը և չի ստեղծում պատշաճ իրավական իիմքեր ՀՀ միջազգային պայմանագրերով (մասնավորապես՝ «Ծրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» Օրիության կոնվենցիա և «Անդրասահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» Էսպո կոնվենցիա) ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար:

Օրիության կոնվենցիան նախատեսում է, որ «Չափազգիո հասարակայնությունը» նախատեսվող գործունեության մասին տեղեկանա գործընթացի ամենավաղ փուլում, այսինքն, եթե դեռ կարող է խնդրու առարկայի շուրջ առաջարկել իր այլընտրանքային տարբերակները⁷ և ոչ թե այդ մասնակցությունը վերջնական փուլում կրի գուտ ձևական բնույթ: Մասնավորապես, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, «Հասարակայնության մասնակցության ընթացակարգերը նախատեսում են զանազան փուլերի իրագործման ողջամիտ ժամկետներ, որոնք ապահովում են բավարար ժամանակ... հասարակության տեղեկացման և նախապատրաստման ու արդյունավետ մասնակցության համար շրջակա միջավայրին առնչվող հարցերի կապակցությամբ»: Այնիայտ է, որ հասարակայնության մասնակցության ողջամիտ ժամկետների հարցը, որը կարմիր գծով անցնում է ողջ Կոնվենցիայի միջով, այստեղ ևս կրկնվում է, ընդունում այս պարագայում շեշտը դրվում է այն ողջամիտ ժամկետի վրա, որն անհրաժեշտ է հասարակությանը որոշում կայացնելուն մասնակցելու և նախապատրաստվելու համար: Ինչ վերաբերում է զանազան փուլերին, ապա պետք է նկատի ունենալ, որ կապված նախատեսվող գործունեության մասշտաբների հետ, որոշման ընդունումը կարող է լինել բարդ և երկարատև գործընթաց, որոնք նախատեսում են մի քանի փուլեր ու զուգահեռ գործընթացներ: Եվ յուրաքանչյուր կոնվ-

ետ որոշման ընդունման պարագայում կարևոր է հասարակայնության արդյունավետ մասնակցությունը ոչ թե մեկ փուլում, այլ բոլոր փուլերում: Այնիայտ է, որ թեև Օրիության կոնվենցիան մանրամասն իրավական կարգավորման է ենթարկում հիշատակված հարաբերությունները, սակայն, պետք է նշել, որ Կոնվենցիայի կիրառման ընթացքում առաջ են գալիս մի շարք դժվարություններ, որոնք կապված են «վաղ փուլ», «արդյունավետ մասնակցություն», «ողջամիտ ժամկետ» հասկացությունների մեկնարանման հետ, ինչը կարծում ենք, ենթերկ առանձին պետությունների առանձնահատկություններից, որոշակի ժամանակահատվածի ընթացքում կունենա իր սպառիչ պատասխանը:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 8-րդ կետն էլ, հետևողական գոնվելով նախատեսվող գործունեության վերաբերյալ որոշում կայացնելու գործընթացին հասարակայնության մասնակցության դերին ու նշանակությանը, պարտավորեցնում է Կոնվենցիայի կողմերին ապահովելու, որ համապատասխան որոշման մեջ պատշաճ ձևով արտացոլված լինեն հասարակայնության մասնակցության արդյունքները: Այսինքն, այստեղ խոսքը վերաբերվում է ոչ թե հասարակայնության մասնակցության փաստին, այլ դրա արդյունքներին, որը որպես համապատասխան պետական մարմինների պարտավորություն՝ սահմանված է Օրիության կոնվենցիայով: Այս դրույթը տարբեր ձևակերպումներով արտացոլված է նաև Կոնվենցիայի այլ հոդվածներում: Մասնավորապես, 8-րդ հոդվածի համաձայն պետական իշխանության մարմինները պարտավոր են աջակցել հասարակայնության արդյունավետ մասնակցությանը անմիջական կիրառման ուժ ունեցող նորմատիվ դրույթների և այլ ընդհանուր կիրառում ունեցող իրավաբանական պարտադիր նորմատիվ ակտերի նախապատրաստմանը, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, և հասարակության մասնակցության արդյունքները հաշվի են առավել առավելագույն հնարավորին:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ինչպես բազմաթիվ այլ պետություններում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության արդյունքները հնարավորինս հաշվի առնելու նորմերը դեռևս գտնվում են «մշակման» փուլում: Կարծում ենք՝ այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ են գործի դմել նաև որոշ տեխնիկական հնարամատներ, ինչպես օրինակ, հասարակական լսումներն արձանագրելը

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կամ գրավոր նկատառումների գրանցումը: Այսինք, որպեսզի պետական մարմինը հասարակության մասնակցության արդյունքները հաշվի առնի, նախ պետք է քննարկի յուրաքանչյուր նկատառում, որ կներկայացվի հասարակության ներկայացուցիչների կողմից: Դա, իհարկե, չի նշանակում, որ պետական մարմինը պետք է համաձայնի բոլոր նկատառումների հետ, այլ, քանի որ ինքն է պատասխանատվություն կրում իր ընդունած որոշման համար, պետք է կարողանա դրա ընդունումից հետո իմանավորի, թե ինչու այս կամ այն նկատառումները հաշվի չի առել: Հակառակ դեպքում դա կդիտվի որպես Կոնվենցիայով նախատեսված ընդհանուր արարողակարգի խախտում, որը կարող է հանգեցնել այդ որոշումը վարչական կամ դատական կարգով վիճարկելու հանգամանքին: Անպայման պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր էական ազդեցություն ունեցող կոնկրետ հարցերի կապակցությամբ որոշումները, ինչպես նաև շրջակա միջավայրին առնչվող ծրագրերը, նախագծերը, անմիջական կիրառման ուժունեցող նորմատիվ դրույթները, և/կամ ընդհանուր կիրառում ունեցող պարտադիր նորմատիվ ակտերն իրենցից գաղտնիք չեն ներկայացնում և բաց են ոչ միայն այդ որոշումների կայացման գործընթացին մասնակցած շահագրգիռ հասարակայնության, այլև ողջ հանրության համար: Դա սահմանված է նաև Օրիություն կոնվենցիայի 6-րդ հոդվածի 9-րդ կետով, որի համաձայն՝ «Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ պետական մարմնի կողմից որոշում ընդունելուց հետո հասարակայնությունը անմիջապես տեղեկացվի այդ որոշման մասին՝ ըստ պատշաճ ընթացակարգերի: Յուրաքանչյուր կողմ հասարակայնությանը ներկայացնում է որոշման տեքստը, նշելով այն պատճառները և շարժառիթները, որոնք ընկած են դրա իմքում»: Այսինքն, Կոնվենցիան նախատեսում է, որ ընդունված որոշումը իր իմանավորվածության հետ միասին պետք է ներկայացվի հասարակայնությանը:

Անհրաժեշտ ենք համարում առանձնահատուկ ուշադրության արժանացնել Օրիություն կոնվենցիայի 7-րդ հոդվածին, որը նախատեսում է, որ յուրաքանչյուր Կողմ պետք է ապահովի հասարակայնության մասնակցությունը շրջակա միջավայրին առնչվող ծրագրերի, նախագծերի նախապատրաստմանը և քաղաքականության մշակմանը, ինչպես նաև Կոնվենցիայի 8-րդ հոդվածին, ըստ որի. «Յուրաքանչյուր Կողմ..., միզեւ է գործադրում աջակցելու հասարակայնության արդյունավետ մասնակցությանը պետա-

կան մարմինների կողմից անմիջական կիրառման ուժ ունեցող նորմատիվ դրույթների և այլ ընդհանուր կիրառում ունեցող իրավաբանական պարտադիր նորմատիվ ակտերի նախապատրաստմանը, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա: Այդ նպատակով ձեռնարկվում են հետևյալ միջոցառումները.

ա. սահմանվում են ժամկետներ, որոնք բավարար են արդյունավետ մասնակցությունը ապահովելու համար,

բ. կանոնների նախագծերը հրապարակվում են կամ այլ ձևով տրամադրվում են հասարակությանը,

գ. հասարակությանը հնարավորություն է ընձեռվում ներկայացնել իր նկատառումները անմիջականորեն կամ ներկայացուցական խորհրդակցական մարմինների միջոցով:

Հասարակայնության մասնակցության արդյունքները հաշվի են առնվում առավելագույն հնարավոր չափով»:

Ցանկով, այս դրույթների իրականացումը Հայաստանի Հանրապետությունում այսօր դեռևս հանդիպում է բազմաթիվ խոշընդուների, քանի որ ինչպես վկայում է պրակտիկայի վերլուծությունը, թե էկոլոգիական քաղաքականության մշակման, թե ծրագրերի ու պլանների նախապատրաստման և թե առավել անմիջական կիրառման ուժ ունեցող նորմատիվ դրույթների և/կամ ընդհանուր կիրառում ունեցող իրավաբանական պարտադիր ակտերի նախապատրաստման գործում հասարակայնության մասնակցության մակարդակը խիստ ցածր է՝ ելնելով մի շաբթ օրյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներից: ՀՀ Սահմանադրության 75 հոդվածի համաձայն Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է պատգամավորներին և կառավարությանը: Այդպիսով, Հայաստանի Հանրապետությունում հասարակությունը օրենսդրական նախաձեռնության իրավունքով օժտված չէ և չի կարող հանդիս գալ, օրինակ, շրջակա միջավայրի առնչությամբ որևէ օրենքի նախագծի ներկայացմանը: Իհարկե, քաղաքացիներն ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները կարող են իրավիրվել օրենքների նախագծերի քննարկմանը, արտահայտել իրենց կարծիքը դրանց առնչությամբ, բայց օրենքի ընդունման պրոցեսում նրանք ձայնի իրավունքով օժտված չեն և օրենսդրի մարմինը օրենքն ընդունելիս առաջնորդվում է զուտ իր տեսակետներով՝ հաշվի առնելով հասարակայնության մասնակցության արդյունքները:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Երբեմն օրենսդիրը հրավիրում է նաև անկախ փորձագետների օրենքների նախագծերի առնչությամբ իրենց դիրքորոշումն արտահայտելու, սակայն, ինչքան էլ որ փորձագետների տեսակետները հիմնավորված լինեն, օրենսդիրը ազատ է որոշելու յուրաքանչյուր նախագծի ճակատագիր: Պրակտիկան վկայում է, որ հասարակության համար լուրջ հետաքրքրություն ներկայացնող որոշ օրենքների նախագծեր հրապարակել են, ինչպես օրինակ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգիրը, սակայն օրենսդիրը որևէ պարտականություն չունի հաշվի առնելու հնչած կարծիքներն ու տեսակետները: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ թե՛ Ազգային ժողովի բնապահպանական հարցերով մշտական հանձնաժողովը, թե՛ բնապահպանության նախարարությունը ուղարկում են շրջակա միջավայրի առնչությամբ օրենքների նախագծերը թերությունների ու բացերի վերաբերյալ հիմնավորված կարծիք ներկայացնելու հնարավորություն ունեցող հասարակական կազմակերպությունները եղակի են, և մյուս կողմից՝ այդ կազմակերպությունները չեն կարող էական ազդեցություն ունենալ ընդունվող նախագծերի վրա⁸: Արդյունքում կարելի է եղակացնել, որ հասարակությունը հիմնականում օրենքների նախագծերի քննարկման փուլում չի նախանակցում և ծանոթանում է դրա հետ այն ժամանակ, երբ արդեն օրենքն ընդունվում է:

Բացի այդ, պետք է նշել նաև, որ Հայաստանի Հանրապետությունում հասարակական էկոլոգիական փորձաքննության եղակացությունը պարտադիր իրավաբանական ուժով օժտված չէ: Պարզապես նշենք, որ վերջին ժամանակներ մի փոքր փոխվել է վերաբերմունքը հասարակական կազմակերպություններին օրենքների նախագծերի հանրային լուրմներին մասնակից դարձնելու, ինչպես նաև մամուլի միջոցով հասարակայնությանը որոշակի հարցերին տեղեկացնելու առումով, ինչը, սակայն, դեռևս ուղեկցվում է լուրջ թերություններով ու բացերով և շատ չնշին քայլ է իրավիճակի լուծում համարելու համար:

Ցավոք, Հայաստանի Հանրապետությունում գրեթե անհնարին է հանդիպել դեպքերի, երբ հասարակությունը իրավիճակի արտադրական օբյեկտների տեղադրման թույլտվության հատկացման, տեղական կամ տարածքային պլանների կազմնան, քաղաքա-

կանության մշակման գործընթացներին: Այդ ընթացակարգերին մասնակցող անձանց որևէ ցուցակ գյուրյուն չունի: Մինչդեռ, ինչպես վերը նշվեց, Օրիուսի կոնվենցիայի 7-րդ հոդվածը նախատեսում է. «Համապատասխան պետական մարմնիը, հաշվի առնելով սույն Համաձայնագրի նպատակները, որոշում է հասարակության այն խավերը, որոնք կարող են մասնակցել շրջակա միջավայրի հետ կապված ծրագրերի ու նախագծերի նախապատրաստմանը: Ըստ հնարավորության, յուրաքանչյուր կողմ ճիգեր է գործադրում, որ ապահովի հասարակայնության մասնակցությունը շրջակա միջավայրին առնչվող քաղաքականության մշակմանը»:

Իսկ առանձին պետություններ, արդեն վարուց որդեգրել են քաղաքականության մշակմանը հասարակայնության ներգրավման ձևերն ու միջոցները, ինչպես օրինակ՝ Նիդեռլանդներում, թեև դա օրենքով նախատեսված չէ, էկոլոգիական քաղաքականության մշակմանը հասարակայնության ներգրավումն ապահովում է պաշտպանության նախարարությունը: Դա իրականացվում է երկրի գինված ուժերի համապատասխան ծառայությունների, բնապահպանության նախարարության, շրջակա միջավայրի հարցերով նախարարության և բնապահպանական հասարակական կազմակերպությունների հետ քաղաքականության նախագծի քննարկման միջոցով⁹: Ինչ վերաբերում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի իրագործմանը որոշ երկրներում, ապա ՄԱԿ-ի ԵՏՀ շատ պետություններ որդեգրել են այնպիսի քաղաքականություն, որի համաձայն օրենքների և այլ նորմատիվ ակտերի մշակման ընթացքում պետական մարմինները պետք է խորհրդակցեն հասարակայնության հետ: Օրինակ, Եվրոպական հանձնաժողովը 1997թ-ին հիմնել է Էկոլոգիական հարցերով խորհրդակցական հանձնաժողով, որի կազմում ընդգրկված են նաև բնապահպանական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ¹⁰:

Ուստի, ելնելով միջազգային պրակտիկայից և հիմնվելով Օրիուսի կոնվենցիայի դրույթների վրա, գտնում ենք, որ քննարկվող ոլորտի խնդիրների արդյունավետ լուծման համար խիստ կարևոր նշանակություն կունենա Հայաստանի Հանրապետությունում հատուկ լիազորված մարմնի ստեղծումը, ինչպիսին, կարծում ենք, կարող է լինել ՀՀ բնապահպանության նախարարությանը կից հասարակական էկոլոգիական խորհրդը, որը կգործի համապատասխանաբար ընդունված «Շրջակա միջավայրի առնչությամբ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պլանների, ծրագրերի, քաղաքականության վերաբերյալ որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության կարգը հաստատելու մասին» որոշման հիման վրա: Նրանում պետք է մանրանասն իրավական կարգավորման ենթարկվեն ամենավաղ փուլից սկսած պլանների, ծրագրերի, քաղաքականության վերաբերյալ հասարակայնության իրազեկման մարմինները, նրանց լիազորություններն այս բնագավառում, իրազեկման նպատակներն ու հստակ եղանակները, մասնակիցների շրջանակի որոշման չափանիշները և այլն: Կարծում ենք, որ այս խորհրդի գործունեությունը շատ համահունչ կարող է լինել 1992թ. փետրվարին Հայաստանի, Թեղառուսի, Աղբքեցանի, Ղազախստանի, Կիրգիզիայի, Մոլդովայի, Ռուսաստանի, Դաշտինության, Տաջիկստանի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի և Ուկրաինայի միջև ստորագրված «Էկոլոգիայի և շրջակա միջավայրի պահպանության հարցերով համագործակցության մասին» համաձայնագրի¹¹ հիման վրա ստեղծված Միջայինական Էկոլոգիական խորհրդի գործունեությանը, քանի որ նշված երկու խորհրդների միջև սերտ համագործակցությունը տեղեկատվության տրամադրման, առավել արդյունավետ մեխանիզմների ներմուծման եղանակով հնարավորություն կտա բարձրացնելու շրջակա միջավայրի պահպանության, միջայինական էկոլոգիական ծրագրերի իրականացման արդյունավետությունը: Էկոլոգիական որոշումների կայացմանը հասարակայնության մասնակցության միայն մանրակրկիտ ու հիմնա-

Վորված քաղաքականության մշակումը կարող է հանդես գալ որպես այս գործընթացում առավել լուրջ արդյունքների և մեծ ձեռքբերումների հասնելու գործական¹² :

Այսպիսով, ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունում դեռևս մեծ ջանքեր պետք է կենտրոնացնել Օրիուսի կոնվենցիայի ինչպես 6-րդ, այնպես էլ հատկապես 7-րդ և 8-րդ հոդվածներով նախատեսված պահանջներն իրականացնելու համար, քանի որ եթե կոնկրետ գործունեության տեսակների առնչությամբ որոշումների ընդունմանը հասարակայնության մասնակցությունը ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակներում որոշակի չափով կարգավորվում է էկոլոգիական օրենսդրությամբ, ապա շրջակա միջավայրի հետ կապված պլանների, ծրագրերի, քաղաքականության մշակմանը վերաբերող հարցերի լուծմանը հասարակայնության մասնակցության ընթացակարգի հիմնախնդիրը մինչ այժմ հստակ և բավարար իրավական հիմքեր չունի: Մինչդեռ ժողովրդավարական զարգացման և բաց հասարակության ձևավորման համար խիստ անհրաժեշտ է ապահովել հասարակայնության իրազեկման պատշաճ մակարդակ և ներգրավել նրան քաղաքականության ձևավորման գործընթացին, հատկապես այնպիսի խոցելի ոլորտում, ինչպիսին էկոլոգիան և շրջակա միջավայրի պահպանությունն է¹³:

¹ Տե՛ս Խոկոյան Ա.Բ. Повышение уровня экологической осведомленности общественности.// Իրավագիտության հարցեր, 2000, էջ 46:

²Шүй Кириленко А. Орхусская конвенция как инструмент выхода из экологического кризиса и укрепления экологической безопасности. Ташкент. 2004. №4. С. 3-12.

³ Шії Двері в демократію. Путеводитель по странам Восточной Европы. Львов, 1998. С. 5;

⁴ Տես «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործության մասին» կոնվենցիան ընդունվել է 1992թ. մարտի 17-ին Հելսինկիում:

⁵ Տե՛ս ՀՀ ՊՍ 2001.12.27/42(174), որով նվազել է 04.12.2001, ուժի մեջ մտել 27.12.2001:

⁶ Ст. 1 Орхусская конвенция: Руководство по осуществлению, Организация Объединенных Наций. Нью-Йорк и Женева. 2000. С. 144.

⁷ Ст. Ваше право на здоровую окружающую среду. Нью-Йорк и Женева, 2006, С. 10.

⁸ См. Двери в демократию. Путеводитель по странам Восточной Европы. Пльзень 1998. С. 44.

⁹ За і діє в демократію. Гідраводитель по країнам Відомостій Европи. Львів. 1998. С. 44.

¹⁰ Տես Եվրոպական համձնաժողովի 97/150/ðh 1997թ-ի փետրվարի 24-ի որոշումը. Official Journal, L 058 of 27 February 1997, էջ 48:

¹¹ Տե՛ս Էկոլոգիայի և շրջակա միջավայրի պահպանության հարցերով համագործակցության մասին խամաճաւմասիդը, ՀՀ ԱԳՆ, ՊՏ հոդադառակությամ 3-րդ տարի, N3 (11), 20 ռեկտեմբերի 2004:

¹² Ст. Экологическая безопасность и защита прав человека. Ташкент. 2001. С. 34-35.

¹³ Տես Հասարակայնության մասնակցությունը բնապահպանական պլանների, ծրագրերի և քաղաքականության նախառադրության // Ծովագրի դեկանատ Խվելսահ Ա., Եղիսահ. 2007, էջ 5:

ՔՐԻՍԻՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ժուռնալիստիկայի տեսության և պատմության ամբիոնի հայցորդ

ԶԼՄ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ



Արտահայտվելու ազատությունը կապված է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) բազմաթիվ փաստարդերով երաշխավորված լրատվամիջոցների ազատության հետ, որոնց կապակցությամբ Հայաստանը արտահայտել է իր համաձայնությունը: Լրատվամիջոցների գործունեության կարգավորման առաջնային նպատակը անկախ և բազմակարծիք լրավտամիջոցների խթանումն է՝ այդպիսով ապահովելով բնակչության՝ տարաբնույթ աղբյուրներից տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Ցանկացած մարմին, որը լիազորված է կարգավորել լրատվամիջոցները, պետք է կառավարությունից ամբողջապես անկախ լինի և պաշտպանված լինի քաղաքական և գործարար շրջանակների միջամտությունից: Հանրային ծառայության հեռարձակումը ժողովրդավարությունների հիմնական գրավականներից է, որն անհրաժեշտ է ընտրությունների ազատությունն ու քափանցիկությունը ապահովելու, ատելություն պարունակող ելույթների դեմ պայքարի և երկրի փոքրամասնությունների մշակույթների պաշտպանության համար՝ տրամադրելով օրյեկտիվ լրատվություն և հեռուարձակելով բարձրորակ ծրագրեր:

Ինչպես տեսնում ենք, ԶԼՄ-ները մի կողմից ենթարկվում են քաղաքական և տնտեսական վերնախավի, մյուս կողմից՝ շուկայում տիրող իրավիճակի ազդեցությանը: Բացի այդ, գոյություն ունեն մի շարք այլ, ոչ պակաս կարեղոր գործոններ, որոնք այս կամ այն չափով ազդում են ԶԼՄ-ների գարգացման վրա, սակայն նշանակալից է մնում պետական մարմինների, քաղաքական ու տնտեսական վերնախավի ազդեցությունը: Կարելի է ասել, որ սրանք ներկայիս հասարակության առավել ազդեցիկ սոցիալական ինստիտուտներն են, քանզի հանրային կառավարման համակարգում հենց պետական կառուցվածքը, նրա արդյունավետությունը, ինչպես նաև ժամանակի ոգուն և զարգացման մակարդակին համապատասխան իրավական դաշտն է ի զրոյ անհրաժեշտ պայմաններ

ապահովել սոցիալական մյուս բոլոր ինստիտուտների գոյության և զարգացման համար: Վերնախավն իր հերթին դրական կամ բացասական ազդեցություն ունի մյուս ինստիտուտների վրա:

Բացի պետությունից և իրավունքից, տնտեսական և քաղաքական վերնախավից, նույնքան զորեղ և կարևոր, իսկ իր մատչելիության և ամենահասության շնորհիվ՝ նաև որպես առավել նշանակալից սոցիալական ինստիտուտ են ԶԼՄ-ները: Իրավական մշակույթը և գործող օրենսդրական դաշտը նույնպես կարող են պատշաճ պայմաններ ապահովել հանրային համակարգի զարգացման համար, սակայն միայն օրենքի առջև բոլորի հավասարության և համընդիանուր պատսխանականության առկայության պարագայում:

Եթե խոսելու լինենք ԶԼՄ-ների վրա պետական մարմինների և քաղաքական վերնախավի ազդեցության և նրանց փոխհարաբերությունների կարգավորման մեխանիզմների մասին, ապա դրանք, ցավոք, չեն սահմանափակվում գուտ օրենսդրական միջամտությամբ: Նման երևույթները քիչ թե շատ հատուկ են գորեք բոլոր երկրներին, որտեղ կոնկրետ ԶԼՄ-ների դերը և ազդեցությունը երկրի հասարակական գործընթացների վրա գործնականում հասցվում է նվազագույնի: Դա առավելապես նրանց ազատության, տնտեսական և քաղաքական անկախության ցածր մակարդակի արդյունք է:

Հայկական հեռուստաալիքների հեռարձակման տեխնիկական դադարի մասին անհավանական լուրերի վերջին ալիքն ավելորդ անգամ ընդգծեց. թե որքան խորը ճգնաժամում է հայտնվել մեր երկրի տեղեկատվական ոլորտը: Իսկ եթե հիշենք ավելի վաղ առաջացած խուճապը՝ ենթադրյալ ավերիչ երկրաշարժի շուրջ, մեր հանրահայտ հայրենակիցների մասին սևացնող հրապարակումների նոր բափ հավաքող տեղատարափը, և վերջապես, 2008 թ. մարտի 1-ի ողբերգությունից հետո այդպես էլ համարժեք գնահատականի շարժանացած անհասաղեա գեխությունը ԶԼՄ-ներում, իրադրությունը բավական տագնապալից կապա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Կերպի: Ինչ քայլեր են առաջարկվում՝ ի պատասխան այդ մարտահրավերների:

Այսօր նախադեալը չունեցող ակտիվուրյուն է նկատվում Հայաստանի տեղեկատվական օրենսդրության ոլորտում: Շարունակ հայտնվում են գաղափարներ, օրինագծեր, որոնց հեղինակներն աղմկոտ «PR արշավներ» են կազմակերպում՝ խորը մտահոգություն դրսորելով հայրենական լրագրության ազատության, հավաստիության և բարոյականության մակարդակի վերաբերյալ՝ առաջարկելով այդ մասնագիտությունը խցկել տարատեսակ կաղապարների մեջ: Ըստ որում, եթե նախորդ տարիների օրենսդրական օրակարգը ձևավորվում էր երկրի միջազգային պարտավորություններով, ապա ներկայիս նախաձեռնությունները խորապես տեղական ծագում ունեն:

Հայկական ԶԼՄ-ներն իսկապես իրենց լավագույն ժամանակները չեն ապրում՝ երիկայի գրված և չգրված կանոններին հետևելու իմաստով: Բայց դրա գլխավոր պատճառը իրենց՝ լրագրողների չարանենց խուսափումը չէ մասնագիտական ստանդարտներից: Այս օրվան մենք հասանք նախ և առաջ նապատակամղված քաղաքականության արդյունքում, որը, խորհրդային ժամանակների ծանր ժառանգության և տնտեսական օրյեկտիվ դժվարությունների հետ միասին, հանգեցրեց մամույի՝ որպես ձեռնարկատիրական գործունեության ոլորտի և միաժամանակ քաղաքացիական հասարակության կարևորագույն ինստիտուտի ինքնուրույնության սահմանափակմանը: Հետապնդումները որոշ լրատվամիջոցների հանդեպ, ԶԼՄ-ների ապադասակարգայնացումը, որ նրանց ուղեկցում էր ամբողջ հետխորհրդային շրջանում, մասնութիւն գրեթե գրկել էին այլ ընտրությունից, բացի իշխանության և քաղաքական օլիգարքիական կլանների կցորդը դառնալուց կամ էլ ժամանցային բիզնես մտնելուց:

Այսօր էլ մարդիկ, ովքեր տարիներով անտարբեր նայել են (և շարունակում են նայել), թե ինչպես են մեր գործընկերների մտածողության մեջ քայլ առ քայլ այրվում խոսքի ազատության, խմբագրական անկախության սկզբունքների և սոցիալական պատասխանատվության մասին պատրաճները, որոշել են զբաղվել մամույի ներկայացուցիչների վերադաստիարակությամբ: Պարզվում է, որ ԶԼՄ-ներին պարտադրված՝ քաղաքական ընդդիմախոսների նկատմամբ տարվող տեղեկատվական տեռորի, հաշիվները մաքրելու, աշխարհիս ուժեղների միջև քրեական «ռազբորկաների» դեմ կարելի է պայքարել լրագրողների նկատմամբ ֆինանսական սանկցիաներ կիրառելով կամ օրենքուն

նրանց իրավունքները և պարտականությունները սահմանելով:

Մի՞րեւ պարզ չէ. օրենքի առաջ շարժային կատարողների պատասխանատվության խստացումները չեն կանգնեցնի նրանց, ովքեր մամուլն օգտագործում են բացառապես բազմագույն «PR» իրականացներուն նպատակներով: Իսկ պահանջարկի առկայության պարագայում չի լինի նաև տեղեկատվական քիլերկամիկաձեների պակաս, ովքեր չեն վարանի դատարանի առջև հայտնվելու ռիսկից՝ վճարովի զրայարտության, վիրավորանքի ու «կոմպրոմատի» տարածման համար:

Սեր դատաիրավական համակարգի համար ավանդական՝ օրենսդրության ընտրովի կիրառումը միմիայն դաշտը կմաքրի համարձակ, ոչ թե պատվեր կատարելու ծառայամտությամբ, այլ մասնագիտական խղճով առաջնորդվող լրագրողներից և, հավանաբար, կկարծացնի ընդդիմադիր պարբերականների լեզուն: Սեր ԶԼՄ-ների առանց այդ էլ համեստ դերը հասարակական-քաղաքական գործընթացներում՝ նման բարեփոխումների արդյունքում նվազագույնի կհասնի: Սակայն դրանից ԶԼՄ-ներն ավելի բարոյական և քաղաքացիների իրավունքները հարգող, անշուշտ, չեն դառնա: Ավելի շուտ՝ ընդհակառակը:

Ասվածն ամենին չի նշանակում, որ տողերին հեղինակը լրագրողների իրավական անպատճելիության ջատագովն է: Յուրաքանչյուր քաղաքացի պետք է ունենա ԶԼՄ-ների անբարեխիլդ գործողություններից իր պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու իրավունք: Եվ ՀՀ գործող օրենսդրությունը դրա համար առաջարկում է որոշակի մեխանիզմներ: Ուրիշ բան, որ անվանարկումներից տուժածները հագույն են օգտվում դրանցից՝ դատարանների հանդեպ անվատական պատճառով:

Ներկայիս օրենսդրական տենիդի առնչությամբ անհանգստությունը չի նշանակում նաև, որ օրենքներում ոչինչ պետք չէ փոխել: Սեր մամույին վերաբերող օրենսդրության կատարելագործման ընթացքը պետք է լինի անընդհատ և հետևողական: Բայց դա պետք է տեղի ունենա հանուն բարեկաման, այլ ոչ թե դրա նմանակման կամ որ ավելի վատ է՝ հետընթացի:

Արտահայտվելու ազատությունը վաղուց ճանաչվել է՝ որպես մարդու ամենահիմնական իրավունքներից մեկը: Դա հիմնարար նշանակություն ունի ժողովրդավարության գործառնության համար, անհրաժշտ պայման է այլ իրավունքների իրականացման համար և ինքնին կազմում է մարդկային արժանա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պատվորյան էական բաղադրիչը:

Հայաստանի Հանրապետությունը Սիավոր-ված ազգերի կազմակերպության անդամ է:

Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագիրը (ՄԻՀՀ)՝ մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական փաստարությը, որն ընդունվել է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի կողմից 1948թ., արտահայտվելու ազատությունը պաշտպանում է 19-րդ հոդվածում տեղ գտած հետևյալ ձևակերպմամբ. «Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքների ազատության և դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք. այդ իրավունքը ներառում է իր համոզմունքներին հավատարիմ մնալու ազատությունը և ցանկացած միջոցներով ու պետական սահմաններից անկախ իրագելում և գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը»¹:

Հայաստանի Հանրապետությունը Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) անդամ է: Հելսինկյան եզրափակիչ ակտը հոչակում է, որ «մասնակից պետությունները պետք է հարգեն մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները՝ ներառյալ մտքի, խոճի, կրոնի կամ դավանանքի ազատությունը՝ անկախ ռասայական, սեռական, լեզվական կամ կրոնական հատկանիշներից: Նրանք պետք է խրանեն և խրախուսեն քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և մյուս իրավունքների ու ազատությունների արդյունավետ իրականացումը, որոնք բխում են մարդկային էակին ի ծնն բնորոշ արժանապատվությունից և անիրամեշտ են նրա ազատ և ամբողջական զարգացման համար»: Եզրափակիչ ակտը նաև սահմանում է, որ «մասնակից պետությունները պետք է գործեն Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագիրի ... նպատակներին և սկզբունքներին համապատասխան»²:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (ՔԶԻՄԴ)³ Միավորված ազգերի կազմակերպության իրավաբանութեն պարտադիր պայմանագիր է և վավերացվել է Հայաստանի Հանրապետության կողմից: Այն արտահայտվելու ազատության իրավունքը երաշխավորում և հստակեցնում է 19-րդ հոդվածի տեքստում.

«1. Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի անարգել կերպով ունենալ իր կարծիքը:

2. Յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է անկախ պետական սահմաններից բանավոր, գրավոր

կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ ամեն տեսակի տեղեկատվություն ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը»:

Մարդու իրավունքների կոմիտեն, որի հանդիպումները տեղի են ունենում Նյու Յորքում և Ժնևում, վերահսկողություն է իրականացնում Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի պատշաճ պահպանման նկատմամբ: Այն բաղկացած է փորձագետներից և լիազորված է քննարկել անհատների կողմից տրվող գանգատները, որոնցում նրանք բողոքում են դաշնագրով, ներառյալ 19-րդ հոդվածով սահմանված իրավունքների խախտման դեմ: Այդ կոմիտեն արձանագրել է. «Արտահայտվելու ազատության իրավունքը ժողովրդավարական հասարակությունում ունի առաջնահերթ կարևորություն»⁴:

Նման բնույթի հոչակագրերը բազմաթիվ են մարդու իրավունքների վերաբերյալ ողջ աշխարհում ընդունված դատական նախադեպերում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն, օրինակ, ընդգծել է, որ «արտահայտվելու ազատությունը կազմում է ժողովրդավարական հասարակության կարևոր հիմքերից մեկը, դրա զարգացնան և յուրաքանչյուր մարդու զարգացման համար անհրաժեշտ պայմաններից մեկը»⁵: Իրական ժողովրդավարությունը հնարավոր է միայն այն հասարակություններում, որտեղ տեղեկատվության և գաղափարների ազատ հոսքը թույլատրված է և երաշխավորված:

Արտահայտվելու ազատության երաշխիքը հատկապես կարևոր է լրատվամիջոցների հետ կապված հարցում: Այս արժիումը նաև արտահայտվել է մարդու իրավունքների դատարանների ակտերում: Այս առումով պետք է նշել, որ մարդու իրավունքների պաշտպանության տարածաշրջանային երեք համակարգերը՝ Մարդու իրավունքների վերաբերյալ ամերիկյան կոնվենցիան⁶, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ)⁷ և Մարդու և ժողովուրդների իրավունքների վերաբերյալ աֆրիկյան խարտիան⁸, արտահայտել են լրատվամիջոցների ազատության և արտահայտվելու ազատության համընդհանուր նշանակությունը՝ որպես մարդու կենսական իրավունք: Նրանք իրավես պարունակում են միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ստացած սկզբունքներ: Նման կերպ նրանք ծառայում են որպես լրատվամիջոցների և արտահայտվելու ազատության

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բովանդակության և կիրառության կարևոր համեմատելի օրինակներ և մասնավորապես կարող են օգտագործել Հայաստանի Հանրապետության համար պարտադիր համարվող ՔԸՒՄԴ 19-րդ հոդվածի մեջնաբանության հարցում:

Սա նշանակում է, որ պետություններից պահանջվում է ոչ միայն ձեռնպահ մնալ իրավունքները խախտելուց, այլ նաև ձեռնարկել դրական միջոցներ՝ արականական համար հարգանքը իրավունքների, ներառյալ արտահայտվելու ազատության իրավունքի նկատմամբ: Փաստորեն, պետությունները պարտավոր են ստեղծել պայմաններ, որոնցում բազմազան և անկախ լրատվամիջոցները կարող են զարգանալ՝ դրանով իսկ բավարարելով բնակչության տեղեկատվության իրավունքը:

Չի կարելի կասկածի տակ դնել այն, որ արտահայտվելու ազատության իրավունքը բացարձակ չէ: Որոշակի հասուն հանգամանքներում այն կարող է սահմանափակվել:

Այս իրավունքի հիմնարար բնույթի ուժով, այնուամենայնիվ, սահմանափակումները պետք է լինեն հստակ և որոշակի սահմանված՝ պետության օրենքի գերակայության սկզբունքներին համապատասխան: Ի լրումն, սահմանափակումները պետք է հետապնդեն օրինական նպատակներ. իրավունքը չի կարող սահմանափակվել միայն նրա համար, որ պնդումը կամ արտահայտությունը վիրավորական է, կամ որ այն մարտահրավեր է ընդունված գաղափարներին:

2002-ին հայկական լրատվամիջոցների մեծ մասն, անկախ բաղաքական կողմնորոշումներից, օրստրուկցիայի ենթարկեցին «ՕՐ» թերթին այն բանի համար, որ վերջին շրջանցել էր համընդհանուր բարոյական նորմերը: Մեր օրերում նման իրավարակումներն ընդունվում են արդեն շատ ավելի հանգիստ, առանց կոլեկտիվ զայրույթի ցուցադրության: Եթե որքան մենք բոլորս հապարտ ենք գործուն միջոցներից, այնքան ավելի բարդ իրավիճակների առջև կարող ենք կանգնել հետագայում:

Անշուշտ, «Գեղին» մամուլին մրցունակ այլնութանք ստեղծելու ջանքերը և պատվիրված նյութերի իրավարակումների զինադադարը զանգվածային հաղորդակցության ոլորտը չեն ազատի բամբասանքներ, սուս կոմպրոմատներ, հայտնի մարդկանց անձնական կյանքի անհարկի մանրամասներ տարածելու և օգտագործելու սիրահարներից: Հարկ չկա մարդկությանը ստեղիկացնելու փորձ անել, զրկել նրան պարապ հետաքրքրասիրությունից և այլ «վնասակար»

ստվորություններից ու ինֆորմացիոն պահանջմունքներից: Բայց քո՞ն այդ պահանջմունքները բավարարվեն առանց կիրք և բարոյապես առողջ հասարակություն ձևավորելու կոչված իշխանական շրջանակների, քաղաքական կուսակցությունների և այլ ինստիտուտների մասնակցության և դրանց կողմից խրախուսվելու:

Հանրությանը որակյալ, հավաստի տեղեկատվություն տալու ձգտում ունեցող ԶԼՄ-ների հակադրումը նրանց, ում համար սենսացիան ու սկանդալն ինքնանպատակ բաներ են, անհրաժեշտ պայման են ժամանակակից բաղաքակիրք տեղեկատվական շուկայի ձևավորման համար: 19-րդ դարի վերջից սկսած՝ այդորինակ տարրերակման արդյունավետ մերող է համարվում ԶԼՄ-ների ինքնակարգավորումը: Պատասխանատու ժուռնալիստիկան ձևավորել է երիկայի կանոններ և հասարակության ինքնակամ հաշվետու լինելու այլ մեխանիզմներ, մինչդեռ «Գեղին» մամուլը ստվորաբար նախընտրում է իրեն չկաշկանդել բարոյական պարտականություններով: Հայաստանում ինքնակարգավորման համակարգը սկսել է ձևավորվել ավելի քան երկու տարի առաջ, սակայն այսօր «Որակյալ» տիտղոսին հավակնող առաջատար պարբերականների և հեռարձակող ընկերությունների մեծ մասն այս գործնքացին չի միացել: Այս պարագայում ինչպես չեզրակացնել, որ նրանց թիկունքում կանգնած թե իշխանամետ և թե ընդդիմադիր ճամբարի գործարար և քաղաքական էլիտան նախընտրում է ձեռքերն ազատ պահել կապանքներից և դեռ չի հասունացել մինչև այն գիտակցությունը, թե ԶԼՄ-ների համար ինչպիսի հետևանքների կարող է հանգեցնել մասնագիտական շափանիշների անտեսումը:

Լարենք մեր իշխողությունը և փորձենք մասների վրա հաշվել այն թերթերը, հեռուստա և ռադիոստացիները, որոնք իրական այլընտրանք են հանդիսանում նրանց, ովքեր ցեխ են շարտում անխտիր բոլորի և ամեն ինչի վրա և ծայրահետ միտումնավորությամբ մեկնարանում իրողությունները: Թվում է, մեր լրատվական դաշտի հանդեպ անգամ ամենաբարյացակամ վերաբերմունքի պարագայում, մեկ ձեռքի մատները միանգամայն բավարար կլինեն այդ հաշվարկի համար: Մինչև վերջերս մենք մեզ հանգստացնում էինք այն բանով, որ օբյեկտիվության պակասը մասսամբ փոխհատուցվում է տպագիր ԶԼՄ-ներում առկա բազմակարծությամբ, և որ տարաբնույթ պարբերականներին հետևող մարդիկ հնարավորություն ունեն իրենց համար կազմել դեպքերի և իրադարձությունների քիչ թե շատ հավասարակշիռ պատկեր: Ցավոք, այսօր

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նման պնդումներ անելու համար լավատեսությունը գնալով պակասում է: Հասարակության ուժգնացող քաղաքական, գույքային, սոցիալական բևեռացումը պայմանավորում է արդեն ոչ թե պարզապես միևնույն փաստերի վերաբերյալ տարբեր հայացքների ձևավորումը, այլ փաստերի գրեթե լիակատար արհամարիոնը՝ հանուն կանխապես ներկայացված գնահատականների և դիրքորոշումների հոչակման:

Հակառակորդին բարոյապես ոչնչացնելու (իսկ իրականում՝ ինքնառշնչացման) այս պայքարում հաղթողներ չեն լինում. զոհ է դառնում հասարակության հոգևոր, ինտելեկտուալ առողջությունը. իսկ փրկությունը՝ ԶԼՄ-ների անհրաժեշտ բեկումնային մասսայի ձևավորումն է, որն իր լսարանին կառաջարկի որակյալ տեղեկատվություն՝ որպես հակալշիռ հասրակական շահերից հեռու, նեղմիտ կարծրատիպերի և պիտակների: Ընդամեն, կարևոր է, որ այդ ԶԼՄ-ները շխուսափեն օրախնդիր բեմաներից, արձագանքեն մարդկանց հուզող բոլոր գործնքացներին և իրադարձություններին: Հակառակ դեպքում նրանք դատապարտված են հայտնվելու ազրեամիվ ժունալիստիկայի ստվերում, որի համար ընտրված (կամ ուղղորդված) թիրախի գնդակոծումն իր գոյության միակ իմաստն է ու միջոցը: Հենց այլնտրանքն ի վիճակի կինի կանգնեցնել համաձարակը, այլ ոչ թե անբարեխիղճ մամուլ արմատախիլ անելու՝ միամիտ կամ որ ավելի վատ է՝ միանգամայն գիտակցված կոչերը: Հասարակական հարաբերությունների որոշ կոնստրուկտորների ծրագրերի կյանքի կոչումը, ովքեր հույս ունեն լրագրողական «ամենարողությունն» օգտագործել գրաքննության այս կամ այն ձևերի, ուսումնական կիրառման նպատակով (հանդիսատեսների ծափահարությունների

ներքո), հնարավոր սցենարներից վատթարագույնն է: Լրատվամիջոցների օրենսդրության հետագա բարեփոխումը պետք է ուղղվի ոչ թե «գեղին» մամուլի դեմ պայքարին, այլ որակյալ, պրոֆեսիոնալ լրագրության ամրապնդմանը:

Դրույթունը, որի մեջ հայտնվել է մեր տեղեկատվական ոլորտը, մոտ է «արտակարգին»: Իսկ նման դեպքերում առանց իշխանական կառույցների շահագրգիռ մասնակցության՝ հնարավոր չէ գործը գլուխ բերել: Մանավանդ որ մեզ մոտ տեղեկատվական ամենաազդեցիկ միջոցը հանդիսացող հեռուստատեսությունը գտնվում է այդ կառույցների գրեթե լիակատար վերահսկողության ներքո: Եվ երբ այսրպես կառական նպատակներին հասնելու համար հեռուստատեսության հզոր ռեսուրսներն օգտագործվում են այնպես, ինչպես դա արվեց 2008-ի մարտին, դժվար է խուսափել մամուլի բարոյագրկումից, որն այսօր առկա է և այդքան մեծ մտահոգությունների առիթ է տալիս: Ինչո՞ւ դրանից դասեր չքաղել և հասարակությանը չառաջարկել արոտեսինալ այնպիսի ստանդարտ, որը կարերագույն խնդիրների բննարկումը կղմի քաղաքակիրք հունի մեջ: Սիգուե արժե ոհսկի դիմել և գոնե մեկ-երկու առաջատար հեռուստաընկերություններում հրաժարվել բեմատիկ և անձնական սահմանափակումներից, ստեղծել հիրավի ազատ ամբիոն, որը հիմքից կզրկի անկյունից կամ բարիկադի հետևից քար ու փուած ձվեր նետել սիրողներին: Չ՞ե որ ԶԼՄ-ները՝ որպես ազգային արժեքները և իդեալները փոխանցող, վերջնականապես կորցնելը շատ ավելի վտանգավոր է պատասխանատու իշխանության համար, քան եթերը միանձնյա վերահսկելուց հրաժարվելը:

¹ Տե՛ս Սիավորված ազգերի կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի թիվ 217Ս (III) բանաձև, ընդունվել է 1948 թվականի դեկտեմբերի 10-ին, Ա/64, 39-42 հզերը: Անզերեն լեզվով ամբողջական պաշտոնական տեքստը տե՛ս ՍՍԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրանցնակի կայքում՝ http://www.unhchr.ch/html/menu3/b/a_ccpr.htm:

² Տե՛ս Հելսինկյան եզրափակիչ ակտի 7-րդ գլուխ:

³ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրն ընդունվել է Գլխավոր Ասամբլեայի 1966 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 2200 (XXI) բանաձևով: Ուժի մեջ է մտել 1976 թվականի մարտի 23-ին: Անզերեն լեզվով ամբողջական պաշտոնական տեքստը տե՛ս ՍՍԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրանցնակի կայքում՝ http://www.unhchr.ch/html/menu3/b/a_ccpr.htm:

⁴ Տե՛ս Տաե-Հուն Պարկն ընդունված Կորեայի գործը, 20-ր հոկտեմբերի, 1988 թ., հաղորդագրություն թիվ 628/1995, մաս 10.3:

⁵ Տե՛ս Հենդիսային ընդունված Միացյալ Թագավորության գործը, 7-ր դեկտեմբերի, 1976 թ., դիմում թիվ 5493/72, մաս 49:

Անզերեն լեզվով վճռի տեքստը կարելի է գտնել ՄԻԵԴ-ի կայքում՝ <http://cmiskp.echr.coe.int/tkp197/view.asp?item=1&portal=hbk&action=html&highlight=&sessionid=4647705 &sk in=hudoc-en>:

⁶ Ընդունվել է 1969 թվականի նոյեմբերի 22-ին, ուժի մեջ է մտել 1978 թվականի հուլիսի 18-ին:

⁷ Ընդունվել է 1950 թվականի նոյեմբերի 4-ին, ուժի մեջ է մտել 1953 թ. սեպտեմբերի 3-ին:

⁸ Ընդունվել է 1981 թվականի հունիսի 26-ին, ուժի մեջ է մտել 1986 թվականի հոկտեմբերի 21-ին:

ՍՈՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի ժուռնալիստիկայի տեսաբան և պատմության ամբիոնի հայցորդ



ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԾՎԱԿՈՒՅԹԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՍ ՊԱՅՉԱՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀՀ ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՍԱՍՈՒԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Քաղաքական մշակույթը ընդհանուր մշակույթի մաս է կազմում և բնութագրվում որպես պատմական ավանդույթների, գաղափարախոսության և մտածողության, քաղաքական գործիչների գործունեության առանձնահատկությունների, նրանց մոտեցումների համահավաք դրսնորում։ Քաղաքական մշակույթը ենթադրում է մարդկանց տարբեր խմբերի շահերի սրափ զնահատում, բախումների կարգավորման գործում մարդասիրական սկզբունքների հետևողական կիրառում։

Այս ասպարեզում մեր հասարակության մեջ կուտակվել են մի շարք չլուծված խնդիրներ։ Թերևս դրա պատճառներից մեկն էլ մամուլի և քաղաքական հրապարակախոսության պասիվ դիրքորոշումն է։

Իր բացասական ազդեցությունն ունի այն իրողությունը, որ թե՛ ԶԼՄ-ները, թե՛ հրապարակախոսությունը պատշաճ ուշադրություն չեն դարձնում ժողովրդի մոտ ընդհանուր և քաղաքական մշակույթի ձևավորմանը։

Նախորդ հասարակարգի քայլայումից անել է ընդամենը երկու տասնամյակ և մեր նորանկախ հանրապետությունում բնակչությունն արդեն ընտելացել է մասնավոր սեփականությանը և շուկայական հարաբերություններին։ Միաժամանակ հասարակության մեջ տեղի է ունեցել գաղափարախոսական և հոգեբանական որոշակի վերափոխություն։

Հայ հասարակության գարգացման համար քավականին վտանգավոր է այն իրողությունը, որտեղ ֆինանսական հնարավորություններն օգտագործվում են քաղաքական նպատակների իրագործման համար։ Դժվար չէ կրահել, որ նախանշ-

ված նպատակին հասնելու դեպքում տեղի կունենա հակառակ գործընթացը՝ քաղաքական իշխանության լծակների օգտագործումը ֆինանսական հաջողությունների հասնելու համար։

20-րդ դարի վերջում և 21-րդ դարի սկզբին գրեթե բոլոր երկրներում կաշառակերությունը և հովանավորչությունը լայն տարածում են գտել։ Այս երևոյթը «կապված է ֆիզիկական և նյութական միջոցների սոցիալական կառավարման գործառնության հետ»¹։ Երևոյթի հասարակական վտանգավորության գիտակցումը հարկադրում է զարգացած երկրներին պետական մակարդակով ծրագրեր մշակել նրա դեմ պայքարելու նպատակով։ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը նույնապես օրենք է ընդունել՝ հակագելու այս երևոյթի տարածմանը հանրապետությունում։

Հայաստանում կաշառակերության և հովանավորչության ծավալները հասել են այնպիսի չափերի, որ սպառնում են երկրի, պետության ապակայունացմանը։ Տնտեսագետների և քաղաքագետների կարծիքով՝ կաշառքի և այլ կոռուպցիոն գործորությունների ամենամյա ծավալը կազմում է այնպիսի գումար, որը գերազանցում է հանրապետության բյուջեի տարեկան եկամուտը։

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ կաշառակերության և նման այլ տիպի գործունեության դեմ մղվող պայքարում գլխավոր կողմնորոշիչներ են հանդիսանում կադրային ճիշտ քաղաքականության իրականացումը, օրենսդրական կարգավորումները և օրենքի կիրառման նկամմամբ հանրային վերահսկողությունը։ Առաջնային նշանակություն ունի նաև քաղաքացիական հասարակության ակտիվացումը նախանշված նպա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տակմերի իրականացման համար:

Վերը նշված նպատակների իրականացման համար հանրությանը համախմբելու գործում կարևորվում է քաղաքական իրապարակախոսության դերը: Նկատելի է, որ արդի իրապարակախոսների զգակի մասը կաշառակերությունը, հովանավորությունը քննադատելիս հաճախ չի դրսորում հավասարակշռված մոտեցում: Իշխանական կողմնորոշում ունեցող իրապարակախոսները, որպես կանոն, նկատում են ընդդիմադիր դաշտի, հատկապես անցյալի պաշտոնյաների կաշառատուն գործունեությունը: Նույն կերպ են վարդում ընդդիմադիրները: Վերջիններս շրջանցում են այն կաշառառուներին, մասնավորապես օլիգարխներին, որոնք երբեմն հանդես են գալիս իշխանության քննադատությամբ: Նման կողմնակալ մոտեցումները լսարանի մոտ առաջացնում են անվտահություն մամուլի իրապարակումների նկատմամբ:

Երկրում ժողովրդավարության սկզբունքների խորացման գործում առաջնային նշանակություն ունի օրենքի և օրինականության ամրապնդումը: Կարևորվում է մարդու իրավունքների պաշտպանությունը, որը հաճախ դուրս է գալիս տվյալ երկրի շրջանակներից և դառնում միջազգային քննարկման առարկա:

Ինչպես է հայ քաղաքական իրապարակախոսությունն արձագանքում մարդու իրավունքների պաշտպանության խնդիրներին: Որպես կանոն, իշխանամետ մամուլը և իրապարակախոսները թվարկում են այս հարցի վերաբերյալ միջազգային առյաններում ընդունված օրենքները և միջազգային համաձայնագրերը, տեսական բնույթի դատողություններ անում՝ Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության գործնական հիմնախնդիրն անդրադառնալով նաև մարդու իրավունքների խախտման դեպքերը:

Նկատելի է, որ մարդու իրավունքների պաշտպանության, ինչպես նաև երկրի ներքաղաքական զարգացման այլ խնդիրներում ընդդիմությունն իշխանական թեկն հակադրվում է ոչ թե զաղափարական հարցերում, այլ պետական այրերի գործողությունները քննադատելու նպատակով՝ հիմքում ունենալով անձնական մրցակցության

գործոնը:

Հայաստանում փոփոխվող տնտեսական համակարգի պայմաններում աճում է արդյունաբերական նախկին հզորությունների առնվազն մի մասի վերականգնման անհրաժեշտությունը: Նման պարագայում իրատապ է դառնում քնապահպանական խնդիրների լուծումը: Այն առանձնապես կարևորվում է մեր հանրապետության համար, որտեղ շրջակա միջավայրը խիստ առողջացման կարիք ունի: Այդ մասին ահազանգում է «Հայաստանի Հանրապետություն» թերթը՝ իշխեցնելով, որ դեռևս 1998 թվականին Դանիայում ընդունվեց համաձայնագիր շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Ցավոր, մեր հանրապետությունում քնապահպանական խնդիրները անուշադրության են մատնված²:

Քնապահպանական հիմնախնդիրներին պատշաճ ուշադրություն չեն դարձնում նաև մեր իրապարակախոսները: Հիշատակության են արժանի միայն Սևանի հիմնախնդիրն վերաբերող մի քանի հրապարակումներ:

Քնապահպանական այլ թեմաներով իրապարակումներից թերևս առանձնանում է «Պետական արգելոցները՝ վտանգի տակ» հոդվածը, որում բարձրացվում է Խոսրովի և Շիկահորի պետական արգելոցները ոչնչացումից փրկելու խնդիրը: Բանավիճային բնույթ կրող հոդվածում քննադատվում է նախարարի մոտեցումը, վերը նշված արգելոցները եկողքոսաշրջության սիրահարների համար բաց, մատչելի դարձնելու հարցը: Հրապարակախոսը մտահոգություն է արտահայտում, որ այս դեպքում «կվերանան անտառներում դեռ մնացած թռչունները և կենդանիները, հազվագյուտ բուսատեսակները և վերջ կղրվի մեր երկրում գողտրիկ բնության վերջին կղզյակին»³:

Թեպետ քնապահպանական խնդիրներին հրապարակախոսներն անդրադառնում են հազվադեպ, սակայն դրանք ել իշխանությունների կողմից անուշադրության են մատնվում:

Դժվար է պատկերացնել հայ ժողովրդին ավելի շատ հուզող քնապահպանական խնդիր, քան Սևանի ջրային պաշարների պահպանումը: Արդեն մի քանի տասնամյակ է, ինչ այն գտնվում է հայ հասարակության ուշադրության կենտրոնում: Սակայն Սևանի հետ կապված շատ խնդիրներ դեռևս լուծման կարիք ունեն: Լրագրող Վ. Զաքարյանը իր հրապարակախոսական հոդվածում, որը

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Վերնագրված է «Ո՞վ կնահանջի՝ Սևա՞նը, թե՞ ուստորանք», ընդգծում է, որ 2002 թ. Հայաստանի խորհրդարանն օրենք ընդունեց Սևանի մասին, որտեղ նշվում է, որ արգելվում է 1906 մետր նշանագծից ներքև կապիտալ շինարարության իրականացնում: Հակառակ այդ որոշման՝ Սևանա լճի շրջագծում հայտնվեցին ռեստորանային և այլ զվարճանքի խոշորամասշտար շինություններ: Թերթը փորձում է հասարակական կարծիք ձևավորել Սևանը ճահճացումից փրկելու համար, սակայն կասկած է հայտնում, որ նման պարագայում էլ անգամ մեծահարուստները կշարումակեն Սևանի շուրջը ռեստորանային համակարգի ընդլայնումը:

Ժողովրդի և առանձին անհատների կյանքում լինում են պահեր, երբ ընկնում են վարագույրները, որոնք սահմանափակում են տեսադաշտը, և ժողովրդավարության առկայության պայմաններում զանգվածային գիտակցությունը դուրս է գալիս մինչ այդ գոյություն ունեցող շրջանակներից:

Անկախության հոչակումից հետո Հայաստանում բարոյահոգեբանական այնպիսի իրավիճակ ստեղծվեց, երբ մարդկանց առջև բացվեցին գործունեության և սեփական հնարավորությունների գործադրման նոր հորիզոններ և հեռանկարներ, որոնց մասին նախկինում չէին էլ երազում: Անհատը զգաց իր անձի կարևորությունը, մինչդեռ Հայաստանի Հանրապետության ներքին զարգացումներն իրենց հակասականությամբ շուտով հիասքանչություն առաջացրին ժողովրդական զանգվածների շրջանում:

Ակնհայտ է, որ հասարակական երկխոսություն հնարավոր է, առաջին հերթին, բարոյապես առողջ հասարակության մեջ: Իրականում առօրյա կյանքում միմյանց հետ փոխկապակցված են բարոյականության և ժողովրդավարության սկզբունքների գործնական կիրառումները: Ցավոք, մեր հասարակությունը բարոյապես «ծանր» հիվանդ է: Այդ մասին հրապարակայնորեն ահազանգում են հասարակական կազմակերպությունների, գիտական և ուսումնական հիմնարկների ներկայացուցիչները: Այդ մասին իրենց մտահոգությունն են արտահայտում հանրապետության թերթերից շատերը: «Ազգ», «Հայկական ժամանակ», «Չորրորդ իշխանություն», «Առավտո» և այլ թերթեր իրենց հրապարակախոսական հոդվածներում հաճախ են անդրադանում հայ իրականության մեջ տեղ գտած հոգևոր աղքատության և անգամ անբարություններին: Եթե այս պահանջում է պարզաբանել բարեփոխումների անհրաժեշտությունը երկրի և հասարակության առաջընթացի համար:

Երևոյթներին: Բնորոշ է «Գոլոս Արմենի» թերթի հրապարակախոսական հոդվածը՝ «Ի հաշիվ որբերի» վերնագրով: Հոդվածը պատմում է այն մասին, թե ինչպես է յուրացվել որբանցների համար պետության կողմից հատկացված գումարի մի մասը⁵:

Հանրապետության հասարակական կյանքում 2004-2005 թթ. նշանավորվեցին սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտության քարոզությամբ և հանրաքվեի անցկացմամբ: Քաղաքական հրապարակախոսությունը նպատակ էր հետապնդում ձևավորել հասարակական կարծիքը, ըստ որի, սահմանադրական բարեփոխումները կոչված են ամրանդելու մեր երկրի վարկանիշը՝ որպես մի հասարակություն, որը հավատարիմ է ազատական և ժողովրդավարական արժեքներին:

Ինչպես և կարելի էր ակնկալել, սահմանադրական բարեփոխումների քարոզության ընթացքում առաջնային դերը վերապահվում էր իշխանության ներկայացուցիչներին: Այսպես, «Հայաստանի Հանրապետություն» թերթը մեջքերումներ է կատարում նախագահ Ռ. Քոչարյանի՝ Երևանի պետական համալսարանում ունեցած ելույթից, ուր իշխանավորվում էր այն տեսակետը, որ սահմանադրական բարեփոխումները հանգեցնելու են նրան, որ «Հայաստանը դառնալու է, անկանադ, առաջատար երկիր՝ բոլոր դրական հետևանքներով»⁶: Նկատելի է, որ «Հայաստանի Հանրապետություն» թերթի վերը նշված հրապարակախոսական մեկնաբանությունն ավելի շատ կրում է տեղեկատվական, քան վերլուծական բնույթ: Թերթը, առանց սեփական տեսակետը հայտնելու, շարադրում է հանրապետության նախագահի մոտեցումները խնդրու առարկայի վերաբերյալ: Նման պարագայում թուլանում է հրապարակման հասարակական հնչեղությունը:

Գրեթե նոյն ոճով է շարադրված «Հայաստանի Հանրապետություն» թերթում «Դաշնակցությունը չի փոխում իր դիրքորոշումը» հոդվածը: Նշվում է, որ Սահմանադրության փոփոխությունների ընդունման պարագայում կընդունվեն նաև դրանցից բխող նոր օրենքներ: Ըստ հոդվածագրի՝ լուծման են սպասում երկրադարձացիության, թիկնազորային ծառայության և այլ խնդիրներ: Հոդվածի ատաղձն այն մոտեցումն է, որ ժողովրդավարությունը պահանջում է պարզաբանել բարեփոխումների անհրաժեշտությունը երկրի և հասարակության առաջընթացի համար:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Ուշագրավ է նոյն թեմայով «Սահմանադրական բարեփոխումները և դատական իշխանությունը» հոդվածը, որում ընդգծվում է, որ յուրաքանչյուր հասարակության համար մնայուն արժեքներից է արդարադատության գործընթացը: Հոդվածում կարդում ենք. «ՀՀ գործող Սահմանադրությունը նախատեսել է ժողովրդավարական առաջադեմ երկրներին բնորոշ դատական իշխանության անկախությունն ապահովող մի շարք սկզբունքներ ու երաշխիքներ»⁷: Վերջում հոդվածագիրը եզրահանգում է. «Նախագծով առաջարկվող փոփոխությունները և լրացումները ՀՀ Սահմանադրության մեջ կատարվելու դեպքում դատական իշխանությանը վերաբերող 6-րդ գլուխն էականորեն կրարելավավի, կստեղծվեն օրենսդրական բավարար հիմքեր իշխանության այդ թևի անկախ և արդյունավետ գործունեության համար»⁸:

Մասնագիտորեն շարադրված հոդվածն ունի խոցելի կողմ. հոդվածագիրն իրավական դաշտի բարեփոխումները դիտում է երկրի ժողովրդավարական գործընթացներից տարածածան: Եթե անգամ դատական մարմինների գործունեության վերաբերյալ ընդունվեն որոշումներ՝ միտված ոլորտի բարեփոխմանը, առանց երկրում ժողովրդավարության սկզբունքների արմատացման, այն չի կարող գտնել գործնական կիրառում:

Կարելի էր ակնկալել, որ սահմանադրական բարեփոխումները հանրաքվեի միջոցով ընդունվելուց հետո հասարակության բոլոր շերտերը պետք է արտահայտեին իրենց գոհունակությունը: Սակայն ընդդիմադիր մամուլում ծավալվեց քննադատություն ոչ այնքան ընդունված օրենքի, որքան հանրաքվեի անցկացման և արդյունքների ամփոփման վերաբերյալ: Ընդդիմադիր թերթերի նմանօրինակ հրապարակումների հիմնական փաստարկն այն էր, որ սահմանադրական բարեփոխումների ընդունմամբ գործող իշխանությունները փորձում են սույն Արևմուտքի առջև պատրանք ստեղծել, թե իրենք ժողովրդավար են:

Անկախ քաղաքական շարժադիրներից՝ պետականության ամրապնդման և զարգացման հեռանկարի տեսակետից սահմանադրական բարեփոխումները քաղաքացիական հասարակության ձևավորման կարևոր նախադրյալներ են: Սահմանադրական բարեփոխումները ժողովրդի համար ստեղծում են նաև բարոյահոգեբանական նոր մթնոլորտ:

Հայկական մամուլում տպագրվող քաղաքական բնույթի հրապարակախոսական հոդվածներում աստիճանաբար մեծ տեղ է հատկացվում հասարակության քաղաքական կյանքում կնոջ ունեցած դերի բարձրացմանը: Հոդվածագիրները հորդրում են հասարակությանը կանանց ավելի շատ ներգրավել պետության և հասարակության կառավարման գործում: Հրապարակախոսները պնդում են, որ հասարակական առաջընթացի համար նախ պետք է ապահովվի կանանց թիվը տեղական ինքնակառավարման մարմիններում: «Նոր ժամանակներ» թերթի ամենամյա «Կինը և քաղաքականությունը» ներդիրում ընդգծվում է. «Ազգային ժողովին պետք է կանանց քննադատող խումբ»: Ավելին՝ թերթը դժգոհում է, որ 48 քաղաքապետներից ոչ մեկը կին չէ, ինչպես նաև չունենք գեղեցիկ սենի բաղադրելու, և հայտարարում է. «Հայաստանում տղամարդկանց ինքնիշխանություն է»⁹:

Հրապարակախոսի նման մոտեցումը մտումների տեղիք է տալիս: Իրոք, 21-րդ դարի սկզբին գրեթե բոլոր երկրներում ընթանում է հասարակական արժեքների վերագնահատություն և ձևավորվում է նոր մտածողություն: Մասնավորապես վերանայվում է հասարակության մեջ կնոջ դերակատարումը: Հայ իրականությունը ևս անմասն չէ այս գործընթացից: Ընդամենը երկու տասնամյակ առաջ հայ կանանց բացարձակ մեծամասնությունը ձգտում էր ինքնահաստատվել ոչ թե մեծ քաղաքականության մեջ, այլ առաջին հերթին ընտանիքում, ինչպես նաև բժշկության, դպրոցական և բուհական մանկավարժության ոլորտներում՝ զուգակցելով աշխատանքը և ընտանիքը: Այս զուգակցումը պակաս կարևոր չէ հասարակության համար, քանի որ մայրական ուշադրությունը երեխայի հանդեպ հսկայական նշանակություն ունի բարեկիրք, ինչպես նաև հայրենասեր սերնդի դաստիարակության գործում: Ներկայում նկատելի է, որ Հայաստանի Հանրապետության կանանց զգալի մասը փորձում է ինքնահաստատվել քաղաքականության ոլորտում՝ սակագ ժամանակ հատկացնելով նոր սերնդի դաստիարակությանը:

Հասարակական հնչեղություն ունեցող այս խնդիրը քաղաքական հրապարակախոսությունը փորձում է ներկայացնել միանշանակ մոտեցմամբ: Այն է՝ կինը պետք է ակտիվորեն մասնակցի հասարակական-քաղաքական գործընթացներին և ներգրավվի իշխանական մարմիններում: Կնոջ հաս-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րակական դերի վերաբերյալ այլ մոտեցում մերժվում է անվերապահորեն:

Յուրաքանչյուր քննարկվող խնդրի վերաբերյալ ցանկայի է կարծիքների և գաղափարների ազատ փոխանակում: Դա նպաստում է քաղաքական հրապարակախոսության բովանդակության փոփոխմանը՝ այն դարձնելով բազմակարծիք, իսկ առանձին դեպքերում անգամ միմյանց նկատմամբ հանդուրժողական: Հայաստանը, ինչու չե, նաև ցանկացած երկիր կարող է հաջողությունների հասնել կենսագործունեության բոլոր ոլորտներում հանրային քննարկումների արդյունքում մշակված և մտավորականության կողմից դեկավարվող քաղաքականության շնորհիվ: Սա ոչ միայն նպաստում է քաղաքական հրապարակախոսության ուղղվածության և բովանդակության փոփոխմանը, այլև ժողովրդի գիտակցության մեջ ազատախոհության, բաց, քաղաքացիական, տեղեկատվական հասարակության ձևավորման անհրաժեշտության գիտակցմանը: Նման պարագայում Հայաստանի անցումն իրավական ժողովրդավարական պետության պետք է ուղեկցվի իշխանությունների և հասարակության տեղեկատվական փոխադրության նոր ձևերով, որ կնշանակի ուղղակի կապ հաստատել հասարակական լայն խավերի հետ:

Անհրաժեշտ է գիտակցել, որ Հայաստանի Հանրապետության կենսագործունեության բոլոր ոլորտներում տեղի ունեցող արմատական փոփոխությունները կարող են հանգեցնել դրական հետևանքների միայն այն դեպքում, եթե նրանց իրականացման ձևերը և մեթոդները կհամապատասխանեն համընդհանուր քաղաքակրթականին և միևնույն ժամանակ կրիսեն հայ ժողովրդի ազգային հոգեբանական առանձնահատկություններից:

Հայաստանի Հանրապետությունը ծրագրված արմատական վերափոխությունների կարիք ունի: Իրականում այդ փոփոխությունները չեն կարող իրականացվել ինքնարերար, առավել ևս հիմնվել միայն ընթացիկ տնտեսական և քաղաքական նախադրյալների վրա: Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունում ձևափոխած բարոյահոգեբանական մթնոլորտը փաստորեն միտքած է ամրագրելու ստեղծված հասարակական-քաղաքական, տնտեսական իրավիճակը՝ առանց զարգացման հեռանկարի խորը գիտակցման:

Մեղքի իր բաժինն ունի նաև ներկայիս հայ քաղաքական հրապարակախոսությունը, որը ծայ-

րահեղորեն քաղաքականացված է և բացասաբար է անդրադառնում օբյեկտիվ հասարակական կարծիքի ձևավորման գործընթացի վրա:

Մինչդեռ քաղաքական հրապարակախոսության մեջ երկրի զարգացման վերաբերյալ տեսակետներ և գաղափարներ հասարակական լարանին հրամցվում են բացառապես կանխամտածված: Եթե դա իշխանամետ հրապարակախոս է, ապա նրա մոտ չեք գտնի հասարակական-պետական կյանքի ստվերու կողմերին նվիրված որևէ հրապարակում: Նրա կողմից հախուսն քննադատության են ենթարկվում նաև ընդդիմադիր կեցվածքը ունեցող քաղաքական ուժերը: Նույն կերպ ընդդիմադիր հրապարակախոսների կողմից դրական գնահատական դժվար է ակնկալել Հայաստանի ներքին կյանքի, իշխանությունների գործունեության վերաբերյալ:

Ժողովրդավարական կամ նման հակում ունեցող երկրներում քաղաքական հրապարակախոսությունը հանդես է գալիս որպես հասարակական կարծիքի ձևավորման ներգործուն միջոց քաղաքական կամ այլ բնույթի որոշումների ընդունման և իրականացման գործում: Չնայած նրան, որ Հայաստանի Հանրապետությունը դասպարում է այն երկրների շարքին, որոնք ընթանում են ժողովրդավարացման ուղիով, սակայն նկատելի է, որ մեր երկրում քաղաքական հրապարակախոսության ազդեցությունը ակնառու չէ հասարակական կարծիքի ձևավորման վրա:

Հայաստանում Ժողովրդավարական ավանդույթների բացակայությունը բացասաբար է ազդում հասարակության ինքնակազմակերպման, պետության հանդեպ քաղաքացիների պատասխանատվության բարձրացման վրա: Մինչդեռ ՀՀ պարբերական մամուլում տպագրված քաղաքական հրապարակախոսությունը հաճախ անտեսում է այս հիմնահարցերի լուսաբանումը, դրանց շուրջ քննարկումներ կազմակերպելը:

Իմ բերելով վերը նշված ենթագլուխներում քննարկվող հիմնահարցերը՝ կարող ենք եզրակացնել, որ քաղաքական հրապարակախոսության խնդիրն է մեր քաղաքացիների մոտ պատմական մուտքածման ձևավորումը, պետականության ամրապնդման գիտակցության արմատացումը: Այս ամենը հայությանը կօգնի կողմնորոշվելու ներկայիս բարդ և հակասական աշխարհում, գիտակցելու, թե ինչպիսի արժեքների ժառանգորդ ենք մենք

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

և դեպի ուր ենք ընթանում: Այն կնպաստի մեր ժողովոյի ազգային պետական մտածողության մշակմանը, կօգնի շարունակելու իր առաքելությունը, որոշակիացնելու իր տեղն ու դերը համաշխարհային գործընթացներում: Այդ նպատակին են ծառա-

յում նաև մեր երկրում կատարվող սոցիալ-տնտեսական վերափոխությունների համակողմանի քննությունը և սրակի գնահատականները, որոնք, ցավոք, սակավ են հանդիպում ՀՀ պարբերական մամուլի քաղաքական հրապարակախոսության մեջ:

-
- ¹ Տե՛ս Ցագիկյան Ս. Իշ. Противодействие коррупции в Армении. Изд-во „АНТАРЕС“. Санкт-Петербург, 2006. С. 10.
- ² Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 12 հունվարի, 2000 թ.:
³ Տե՛ս «Հայոց աշխարհ», 13 սեպտեմբերի, 2006 թ.:
⁴ Տե՛ս „Новое время”, 3 декабря, 2009.
⁵ Տե՛ս „Голос Армении”, 6 апреля, 2003г.
⁶ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 4 նոյեմբերի, 2004 թ.:
⁷ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 11 հոկտեմբերի, 2005 թ.:
⁸ Տե՛ս Նույն տեղում:
⁹ Տե՛ս «Նոր ժամանակներ», հոկտեմբեր, 2008 թ.:

ՄԱՐԱՏ ԱՏՈՎՄՅԱՆ

Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի
իրավագիտության ֆակուլտետի դասախոս



**ՄԱՐԴՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՈՐՈՇ
ԻՐԱՎԱԿԱՆ ՀՈՒԾԱՐՁԱՆՆԵՐՈՒՄ**

Պատմությունը կյանքի ուսուցիչն է:

Ցիցերոն

Մարդու իրավունքները բնական և անօտարելի են, ոչ ոք չի կարող զրկել մարդուն իր իրավունքներից: Ժամանակակից աշխարհն անհնար է պատկերացնել առանց ազատության, հավասարության, արդարության վրա հիմնված մարդու իրավունքների, որոնք իրենց բնույթով ունիվերսալ են:

Մարդու իրավունքների կայացումը և զարգացումը թույլ են տալիս բացահայտել քաղաքակրթության տեսակը, նրա մակարդակը, քանի որ մարդու և պետության փոխհարաբերությունները այս կամ այն քաղաքակրթության էությունը բնորոշող կարևորագույն հատկանիշ են, իսկ պետությունը՝ իրավական կամ ոչ իրավական ճանաչելու չափորոշիչ: Իրավական, ժողովրդավարական պետությունը ճանաչում է մարդու իրավունքների առաջնայնությունը՝ այդ իրավունքներով սահմանափակելով իր իշխանական գործառույթները:

Մարդու իրավունքների վերաբերյալ սկզբունքները ձևավորվել են պատմականորեն, հարստացվել, կատարելագործվել, և այսօր դրանք մարդկային մշակույթի անբաժանելի մասն են կազմում:

Մարդու իրավունքների պատմական զարգացման ընթացքում ձևավորվեցին մարդու իրավունքների և ազատությունների «սերունդները»: Երեք սերունդների վերաբերյալ տեսությունը 1979թ. առաջին անգամ առաջ քաշեց Կարել Վասսակը: Այս տեսությունը լայն արձագանք գտավ եւ բազմաթիվ կողմնակիցներ ձեռք բերեց: Սակայն որոշ մասնագետներ համաձայն չեն դրան¹:

Իրենց տնտեսական դրության բարելավման, մշակութային կարգավիճակի բարձրացման հա-

մար ժողովուրդների պայքարի ընթացքում ձևավորվել է մարդու իրավունքների երկրորդ սերունդը: Նրանց բվին են դասվում տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները: Տնտեսական իրավունքներն են՝ աշխատանքի իրավունքը, սեփականության իրավունքը, ձեռնարկատիրությանը գրադղելու իրավունքը, գործադրուների իրավունքը և այլն: Սոցիալական իրավունքների բվում են սոցիալական ապահովության իրավունքը, բավարար կենսամակարդակի իրավունքը, ընտանիքի, մայրության և մանկության պաշտպանության իրավունքը, ֆիզիկական և հոգեկան առողջության իրավունքը և այլն: Մշակութային իրավունքներն են՝ կրթության իրավունքը, մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը, ստեղծագործելու ազատությունը և այլն:

Մարդու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներն իրենց ամրագրումն են ստացել նաև տարբեր երկրների հին և միջնադարյան իրավական հուշարձաններում: Այսպես, Մովսիսական օրենքներին² համաձայն՝ եթե որևէ մեկը փայտով հարվածի իր ստրուկին կամ ծառային և նրանք մահանան իր ձեռքի տակ, ապա նա դատական կարգով պետք է պատասխանատվության ենթարկվի: Սակայն եթե նրանք մեկ կամ երկու օր կենդանի մնան, ապա նա չպետք է պատժվի: Իսկ այն դեպքում, եթե որևէ մեկը հարվածելով վնաս հասցնի իր ստրուկի կամ ծառայի ատամին կամ աչքին և վիասի դրանք, ապա պետք է այդ անձին պատ արձակի³: Կարելի է ենթադրել, որ ամրագրելով նման դրույթներ՝ Մովսեսը փորձում էր սահմանափակել տերերի կողմից ստրուկների և ծառաների, այն է՝ աշխատողների հանդեպ բռնության կիրառումը, ինչն այն ժամանակ սովորական երևոյթ էր:

Բարելոնում մ.թ.ա. XVIIIդ. իշխող Համուրա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թի թագավորը իր օրենքներում ամրագրել է աշխատանքի վարձատրությանը վերաբերող մի շարք դրույթներ, օրինակ՝ նախատեսել է որոշակի սանդղակ, թե թիշխը իր մատուցած ծառայությունների համար որքան պետք է վարձատրվի և ինչ պատասխանատվության պետք է ենթարկվի անհաջող բուժելու դեպքում: Եթե մարդը աշխատանքի հրավիրի հողագործի կամ ցուլ պահողի, ապա պետք է նրան վարձահատույց լինի հացով տարեկան սկզբունքով: Եթե մարդը աշխատանքի ընդունի վարձու աշխատողի, արհեստավորի, ապա նրան պետք է օրական արծաթով վճարի: Օրենքներում հստակ թվարկվում են մի շարք արհեստներ, որոնց ներկայացուցիչներին, անհրաժեշտության դեպքում, մարդը կարող է վարձել՝ հող փորող, դերձակ, քարտաշ, դարբին, հյուսն, կաշվեգործ, շինարար: Հավանաբար թվարկված արհեստները այն ժամանակ առկա արհեստներն էին: Փաստորեն Համուրաբի թագավորը սահմանում է աշխատանքի վարձատրության երկու համակարգ՝ տարեկան և օրական:

Համուրաբին նախատեսում է մարմնական պատիժ անբարեխիղճ աշխատողի համար: Այսպես, եթե մարդը իր դաշտում աշխատելու համար աշխատող վարձի, նրան գործած ու անասուն վստահի և պայմանագրի հիման վրա պարտավորեցնի նրան դաշտը մշակել, և եթե այդ մարդը սերմերը կամ անասնակերը գողանա և գողունը իր ձեռքերում հայտնվի, ապա նրա մատները պետք է հատվեն⁴: Ինչպես տեսնում ենք, պատիժը բավականին դաժան է, սակայն, գուցե իր ժամանակների համար արդարացված:

Փաստորեն Համուրաբի թագավորը գործատուին կամ պատվիրատուին պարտավորեցնում էր կատարված աշխատանքի դիմաց վարձատրել, միննույն ժամանակ պարտավորեցնելով աշխատողին, պատժի ենթարկվելու սպառնալիքի տակ, որպես աշխատել:

Հին ժամանակներում Հնդկաստանում գործող Մանուի օրենքներում տեղ են գտել սեփականության իրավունքին վերաբերող մի շարք դրույթներ: Մասնավորապես, եթե սեփականատերը լուս հետևում է, թե ինչպես իր ունեցվածքը 10 տարվա ընթացքում օգտագործվում է որիշների կողմից, ապա նա իրավունք չունի հետ ստանալ այն: Այլ նորմի համաձայն՝ կինը, որդին և ստրուկը համարվում են սեփականություն չունեցող՝ ումն են նրանք, նրան էլ իրենց կողմից ձեռքբերվող ունեցվածքն է:

Օրենքները որոշ կատեգորիայի անձանց համար արգելում են գույքի ժառանգման իրավունքը: Հատկապես ուս վերաբերում է նտավոր և ֆիզիկական արատ ունեցող անձանց: Թագավորը պետք է սեփականությունից զրկի այն ժառայողներին, որոնք նշանակել են տերերի գործերը վարելու համար, սակայն իրենց ազահությամբ վճառ են պատճառում նրանց⁵: Ինչպես տեսնում ենք, Մանուի օրենքները զգալիորեն սահմանափակում են մարդու սեփականության իրավունքը:

Հին Հնդկաստանում ունեցվածքի ժառանգման, նրա բաշխման կարգը, ժառանգման արգելուները, անշարժ գույքի առուժախի մեխանիզմները սահմանվում էին նաև Արտիսաշաստրա կոչվող փաստարդով, որը իր Էուրյամբ աշխարհիկ բնույթի քաղաքական տրակտատների հավաքածու էր: Դիտարկվող հուշարձանի 13-րդ գլխի համաձայն՝ տուգանքի ենթարկվող անձը պետք է աշխատանքով հատուցի այն: Ստրուկի ունեցվածքի ժառանգները նրա բարեկամներն են, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ տերը:

Չննարկվող փաստարդի համաձայն՝ աշխատողը պետք է վարձատրվի գործատուի հետ պայմանավորվածության համաձայն, իսկ եթե աշխատանքի վարձատրության վերաբերյալ նրանց միջև պայմանավորվածություն չկա, ապա՝ աշխատանքի կատարման վրա ծախսված ժամանակին համապատասխան: Արտիսաշաստրան աշխատանքի վարձատրության ինստիտուտը սահմանելիս որոշ կատեգորիայի աշխատողների նկատմամբ ցուցաբերում է տարբերակված մոտեցում: Այսպես, եթե աշխատանքի վարձատրության վերաբերյալ պայմանավորվածությունը բացակայում է, ապա հողագործը ստանում է ցորենի 1/10 մասը, հովիվը՝ կարագի, վաճառականը՝ ապրանքների վաճառքից գոյացած շահույթից⁶:

Հետաքրքրական են թվում օրենսդիր Լիկուրգի մոտեցումները Սպարտայի հասարակական գարգացման առաջին փուլում: Լիկուրգին են պատկանում բազմաթիվ նորամուծություններ և վերափոխումներ, որոնցից կուգենայինք նշել հողի վերաբաշխումը և արհեստներով զբաղվելու ուղղորդվածությունը: Հասարակության մեջ հավասարություն ապահովելու նպատակով Լիկուրգը համոզեց սպարտացիներին միավորել բոլոր հողերը և հետո նորից բաշխել նրանք, այսպահանելով գույքային հավասարությունը: Այնուհետև Լիկուրգը

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Սպարտայից վտարեց «անօգուտ և ավելորդ» արհեստները և ստիլեց արհեստավորներին արտադրել առաջին ամիրաժշտության ապրանքներ: Սոցիալական համերաշխություն ապահովելու նպատակով նա մտցրեց համատեղ ճաշկերույթների ինստիտուտը. քաղաքացիները հավաքվում էին միասին և սպառում էին միևնույն ուտեստները: Կարելի է ենթադրել, որ այս եղանակով Լիկորգը ապահովում էր մարդու սննդի իրավունքի իրականացումը:

Լիկորգը իր համարադարձիների համար լիարժեք ապահովեց նաև հանգստի իրավունքը⁷:

Վերափոխումներ իրականացնելով՝ Սպարտայի իշխանությունը ձերբազատվեց հասարակությունում տիրող ատելությունից և նախանձությունից: Սակայն համատեղ ճաշկերույթների ինստիտուտը սուր քննադատության էր արժանացել Արիստոտելի կողմից, քանի որ վերջինս դա համարում էր սխալ: Արիստոտելի կարծիքով, համատեղ ճաշկերույթները պետք է ֆինանսավորվեին պետության կողմից, այլ ոչ թե մասնակիցների: Ըստ Արիստոտելի, չնայած նրան, որ Լիկորգը ցանկանում էր նշված ինստիտուտը դարձնել ժողովրդավարական, սակայն դրան վերաբերող օրինադրույթները իրենց բնույթով ամենից քիչ ժողովրդավարական էին, քանի որ շատ աղքատ մարդկանց մասնակցությունը դրանցում բավականին դժվար էր, իսկ այն մարդիկ, որոնք ի վիճակի չեն կատարել համապատասխան մուծումներ, չեն օգտվում քաղաքացիությունից բխող իրավունքներից⁸:

Անդրադառնալով Հին Հռոմին՝ նշենք, որ այն տեղ տարբեր ժամանակներում գործող տարատեսակ իրավական ակտերում տեղ են գտել մարդու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին վերաբերող նորմեր: Օրինակ՝ աշխատանքի իրավունքի կամ ճենարկատիլությամբ գրադարձնելու իրավունքի իրականացումը կախված էր քաղաքի պրեֆեկտի ցանկությունից, որը կարող էր ընդիշտ կամ ժամանակավորապես արգելել որևէ գործով, մասնագիտությամբ, փաստաբանական գործունեությամբ, շուկայում առուժախով գրադարձնելու: Դրա մասին են վկայում իրավաբան և պրեֆեկտ Ուլպիանոսի գրառումները⁹:

XII այլուսակների օրենքները հոռմեական իրավունքի հնագույն հուշարձաններ են, որոնք պարունակում են նաև դրույթներ ժառանգության և սեփականության իրավունքների վերաբերյալ: VI

այլուսակի 3-րդ կետը սահմանում է ձեռքբերման վաղեմության ինստիտուտը, որի համաձայն, եթե անձը հողամասը տիրապետում է 2 տարի, իսկ մնացած բոլոր իրերը՝ 1 տարի, նա համարվում է դրա սեփականատեր: Այս դրույթի նման պարզաբանում է արկում հոռմեացի իրավաբան Հայոսի ինստիտուցիաների 2-րդ գործի 44-րդ կետում: Այդ փաստաթղթի մի շարք դրույթներում հեղինակը բավականին հետաքրքիր մոտեցումներ է ներկայացնում սեփականության իրավունքի առաջացման վերաբերյալ: Ըստ նրա, անձի սեփականությունը կազմում է ոչ միայն այն, ինչ նա ձեռք է բերել, այլ նաև այն, ինչ վերջինը գրավել է թշնամուց կամ բնույթյունից (վայրի կենդանիներ, ձուկ, թռչուններ): Եթե որևէ մեկը տուն է կառուցել, բույս է տնկել կամ ցորեն է ցանել այլ անձի սեփականությունը հանդիսացող հողում, ապա դա համարվում է հողի սեփականատիրոջ սեփականությունը: Իր աշխատության մեջ Հայոսը մանրամասն կանոնակարգում է նաև ժառանգության հետ կապված հարաբերությունները, նշելով, որ ժառանգությունը լինում է ըստ կտակի և ըստ օրենքի¹⁰:

Մ.թ. 530-ական թվականներին հոռմեացի կայսր Ֆլավիյ Հուստինիանոսի ջանքերով մինչ այդ ընդունված բոլոր հոռմեական իրավական ակտերը կողիփիկացվեցին մեկ օրենսգրքում, որը հանդես եկավ «Դիգեստներ» անվան տակ: Դիգեստները բաղկացած են տիտղոսներից և նրանցում նշվում են կողիփիկացված օրենքների հեղինակների անունները: Դա, անշուշտ, անցյալի նկատմամբ հարգանքի դրսերում և հեղինակային իրավունքների պահպանում կարելի է դիտարկել:

Դիգեստների 2-րդ գործի XII տիտղոսում յուրօրինակ մոտեցում է դրսերում գյուղատնտեսական աշխատանքներով գրադարձ անձանց նկատմամբ, քանի որ վերջիններիս արգելվում է հարկադրել ներկայանալ դատարան:

3-րդ գործի IV տիտղոսում սահմանափակում է միավորումներ կազմելու մարդկանց իրավունքը, սակայն բացառություն է արվում արհեստակցական միությունների համար: Օրինակ՝ հացքուխները, նաև կառուցղները, հանքերի աշխատողները և այլք կարող են ստեղծել համապատասխան միություններ:

19-րդ գլխի II տիտղոսի 38-րդ կետը աշխատանքի վարձատրության որոշակի երաշխիքներ է նախատեսում վարձու աշխատողների համար:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Այսպես, վարձու աշխատողը պետք է ստանա վճարը գործատուի հետ այսմանավորված ամբողջ ժամանակահատվածի համար, եթե նույնիսկ իրենց անկախ պատճառներով նա չի կատարում աշխատանքը: Նույնն էլ վերաբերում է փաստաբաններին¹¹:

Հուստինիանոս կայսրի անձը և նրա գործունեությունը խստորեն քննադատում է VI դարի բյուզանդացի պատմաբան Պրոկոպիոս Կեսարյացին¹²:

Ինչպես նշել ենք, միջնադարում տարբեր երկրներում ընդունված որոշ իրավական ակտերը նույնպես ներառում են մարդու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները:

Խտալիացի հումանիստ լեզվաբանները և գրականագետները, ձգտելով վերակենդանացնել դասական լատիներենը, իրենց դարը դասական հնությունից բաժանող ժամանակը կոչեցին «միջնադար»: Միջնադարը, ավատատիրական կարգերի ձևավորման, տիրապետման և քայլքայման քաղմադարյա ժամանակահատված է¹³:

Ավատատիրական շրջանի եվրոպական պետությունների մի շարք իրավական ակտերում տեղ են գտել աշխատողների իրավունքները պաշտպանող որոշ դրույթներ: Օրինակ՝ Սալիչյան ճշնարտությունը արքունիքի ծառային, դարբնին, ուսկերիչին, խոզ պահողին, խաղող աճեցնողին, ձի պահողին առևանգելու կամ սպանելու համար նախատեսում էր տուգանք:

Իր հերթին Ունեթքս անգլ-սաքսոնական բազավորության բազավորի կողմից VII դարի վերջին կազմված Ինչ ճշմարտությունը արգելում էր կիրակի օրը աշխատել և այդ օրը աշխատողների հանդեպ նախատեսում էր որոշակի սանկցիաներ: Այսպես, եթե ստրուկը կիրակի օրը իր տիրոջ հրամանով աշխատում է, ապա նա պետք է ազատ հռչակվի, իսկ տերը պետք է 30 շիլինգ տուգանք վճարի: Սակայն, եթե ստրուկը այդ օրը աշխատում է առանց տիրոջ գիտության, ապա պետք է մարմնական պատժի ենթարկվի: Եթե ազատ մարդը կիրակի օրը աշխատում է առանց իր տիրոջ (Գլաֆորդի) հրամանի, ապա նա կզրկվի ազատությունից¹⁴:

Միջնադարյան Գերմանիայում հասարակական հարաբերությունները կարգավորվում էին տարբեր իրավական ակտերով, որոնք պարունակում էին նաև նորմեր ժառանգության, սեփականության իրավունքների վերաբերյալ և այլն: Օրինակ՝

Լենյան իրավունքի համաձայն՝ անձը կարող է զրկվել իր կալվածքից միայն դատական կարգով: Եթե տերը իր վասալից անօրինական կարգով խինրա կալվածքը, ապա վերջինս կարող է, ժամանակակից լեզվով ասած, բողոքել վերադասության կարգով, այն է՝ դիմել բարձրագույն տիրոջը (սենյորին):

Կարլ V կայսրի կողմից 1532թ. հրապարակված «Կարողինա» ակտը հիրավի համարվում է գերմանական ավատատիրական իրավունքի խոշորագույն հուշարձաններից մեկը: Այդ փաստաթղթի CXLVI հոդվածի համաձայն, եթե որևէ մեկը զրադարձ է բույլատրելի աշխատանքով դրա համար նախատեսված վայրում և աշխատանքի ժամանակ իր կամքից անկախ որևէ մեկին զրկում է կյանքից, ապա նա շատ դեպքերում կարող է արդարացվել¹⁵:

1349թ. Անգլիայում ընդունված բանվորների և ծառայողների մասին Օրդոնանսում ամրագրված է, որ բազավորության յուրաքանչյուր տղամարդ և կին, անկախ իր կարգավիճակից (ազատ կամ ճորտ), մարմնով պինդ և մինչև 60 տարեկան, որոնք չեն զրադարձ առևտրով և արիեստով, չունեն սեփականություն և չեն աշխատում, պարտավոր են աշխատել իրենց աշխատանքի հրավիրած անձի մոտ և ստանալ այն վարձատրությունը (փողով կամ բնեղենով), որը սովորաբար տախս են թագավորի գահակալության 20-րդ տարում կամ վերջին 5-6 տարում: Եթե աշխատանքի հրավիրված կինը կամ տղամարդը հրաժարվի դրանից, և դա ապացուցվի վստահություն վայելող 2 անձանց կողմից, ապա նա անհապաղ պետք է բանտարկվի, մինչև չհամաձայնի աշխատել: Եթե որևէ անձի մոտ գյուղատնտեսական աշխատանք կատարողը կամ ծառան, նախքան պայմանագրում սահմանված ժամկետը, առանց հիմնավոր պատճառի կամ առանց տիրոջ համաձայնության հրաժարվի աշխատել, ապա պետք է բանտարկվի և ոչ ոք՝ բռնության սպառնալիքի տակ, իրավունք չունի այդ անձին ընդունել աշխատանքի: Ոչ ոք ոչ մեկին չպետք է վարձատրի կամ խոստանա վարձատրել (փողով կամ բնեղենով) սովորականից ավելի¹⁶: Սեր կարծիքով, նշված ակտն ընդունվել է Անգլիայում զրադարձության հիմնախնդիրը լուծելու և գյուղատնտեսական աշխատանք կատարողների պակասը կանխելու համար:

16-րդ դարում Անգլիայում բազավանին դա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ժան պայքար էր մղվում թափառաշրջիկների և համար աղքատների դեմ: Այսպես, 1597թ. Եղիսաբեր թագուհու օրոք ընդունված համապատասխան ակտով բավականին խիստ պատժամիջոցներ սահմանվեցին նշված կատեգորիայի անձանց նկատմամբ: Մասնավորապես, նրանց կարող էին, մինչև արյունահոսություն, մտրակով հրապարակայնորեն ծեծել, այնուհետև աքսորել ծննդավայր կամ վերջին մեկ տարվա բնակության վայր, որտեղ նրանք պետք է ազնիվ մարդկանց պես աշխատեն: Ծեծից հետո այդ անձին փոխանցվում էր դատավորի կողմից տրված աքսորելու մասին ուղեգիրը, որում նշված էր, թե այդ անձը որտեղ և երբ պետք է մեկնի: Եթե այդ անձն իր մեղքով խախտեր ժամանան ժամկետը, ապա նա պետք է մտրակով ծեծի ենթարկվեր: Այն անձը, ում ծննդյան կամ վերջին բնակության վայրը հայտնի չէր, պետք է ուղարկվեր ուղղիչ տուն կամ բանտ, որտեղ նա պետք է աշխատեր: Եթե պարզվեր, որ այդ թափառաշրջիկը հանրային վտանգ է ներկայացնում կամ ուղղման ենթակա չէ, ապա նա պետության հաշվին պետք է արտաքարել երկրից: Եթե այդ անձը առանց բույլստվության վերադառնար, ապա պետք է մահվան դատապարտվեր¹⁷:

13-րդ դարում Ֆրանսիայի Բուվեզի շրջանում երկար տարիներ թագավորական դատավորի պաշտոնում աշխատած հայտնի ֆրանսիացի իրավաբան Բոմանուարի կողմից կազմված սովորույթների ժողովածուի (Կուտյումներ) 5-րդ գլխի 1452 պարագրաֆի համաձայն՝ որոշ ճորտեր այնպիսի կախածության մեջ էին իրենց սենյորներից, որ վերջիններս կարող էին տնօրինել նրանց ամբողջ գույքը, որոշել կյանքի և մահվան հարցը, բանտարկության մեջ պահել որքան ցանկանում էին, նույնիսկ առանց մեղքի: Որոշ ճորտեր էլ ավելի շահելան վիճակում էին և նրանց կենդանության օրոք սենյորները նրանցից, բացի տուրքերից, ոչ մի բան չէին կարող պահանջել: Միայն նրանց մահից հետո կամ, եթե նրանք ամուսնանում են ազատ կանանց հետ, նրանց ամբողջ գույքը անցնում է, սենյորներին: Ճորտի մահվան դեպքում նրա երեխաները ինչ-որ բան ժառանգելու համար պետք է վճարեին սենյորին¹⁸:

726 բվականին Բյուզանդիայում հաստափած «Էկլոգա» անվան տակ հանդես եկող բյուզանդական իրավունքի ժողովածուն նախատեսում էր գույքի ժառանգման վերաբերյալ որոշ դրույթներ:

Այն նախատեսում էր ինչպես ժառանգությունն ըստ օրենքի, այնպես էլ ըստ կտակի, ինչպես նաև ամուսինների միջև ամուսնական պայմանագրի կնքում: Այս փաստաթուղթը անդրադառնում էր նաև որքերի իրավունքների պաշտպանությանը: Այսպես, եթե որքերը և մանկահասակ երեխաները ունեին սեփականություն և նրանց մահացած ծնողները նշանակել էին խնամակալ, ապա նրանց կամքը պետք է պահպանվեր: Եթե նրանք խանամակալ չունեին, ապա Կոնստանդնապոլսում խնամակալությունը ստանձնում էին որբանցները, այլ հաստափությունները և հայտնի եկեղեցիները, իսկ շրջաններում՝ վանքերը և եկեղեցիները, մինչև ժառանգները չհասնեն ամուսնական տարիքի և չամուսնանան: Եթե ժառանգները չուզենան ամուսնանալ, ապա մինչև իրենց 20-ամյակը լրանալը նրանք պիտի մնային նշված հաստափությունների խնամքի տակ, իսկ հետո ամբողջ գույքը փոխանցվեր այդ ժառանգներին: Նշենք, որ այդ ժամանակ Բյուզանդիայում ժառանգությունն ընդունելու բույլատրելի տարիքը 20 տարեկանն էր:

Բյուզանդիայում VII-VIII դարերում օրենսդրական նորմերի և տեղական սովորույթների հիման վրա ձևավորված հողագործական օրենքը պարտադրում էր հողագործին արդար լինել և չզավթել հարևանի հողատարածքը: Օրենքը թույլ էր տալիս հողագործներին փոխանակել իրենց հողատարածքները: Օրենքը նախատեսում էր, որ եթե հայտնաբերվի, որ վարձու հովիվը տիրոջից գաղտնի կրում է անասունին և վաճառում է կաթը, ապա նա պետք է ծեծի ենթարկվեր և զրկվեր վարձատրությունից: Եթե որևէ մեկը աշխատանքի համար ուրիշից ցուլ վերցներ, որը սատկեր, ապա ցին պետք է հետազոտեին մասնագետները և եթե պարզվեր, որ ցուլը սատկել է այն աշխատանքում, որի համար իրեն վերցրել էին, ապա նրան վերցնող անձը չէր ենթարկվում պատասխանատվության, իսկ եթե ցուլը սատկել էր այլ աշխատանք կատարելիս, ապա իրեն վերցրած անձը պետք է առողջ ցուլ վերադառներ տիրոջը¹⁹:

Եվրոպական մի շարք միջնադարյան իրավական հուշարձաններ վերաբերում են արհեստոգործներին: Օրինակ՝ 1345թ. ջուհակների և մանորդների գիլդիաների անդամների միջև կոնֆլիկտ տեղի ունեցավ, որը հաղթահարվեց Լոնդոնի քաղաքաբետի մասնակցությամբ և դրա արդյունքում ընդունվեց ջուհակների և մանորդների լոնդոնյան

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

գիլիայի որոշումը:

1268թ. փարիզյան արտադրամասերի սովորությունների գրառման արդյունքում ստեղծվեց «Արհեստների գիրքը», որի մեջ ներառված էր փարիզյան բրդի ջուլիակների ստատուտը:

1469թ. ընդունվել էր մետաքսյա իրերի Քյոլի ջուլիակուիհների արտադրամասային Կանոնադրությունը: Գերմանիայի Քյոլն քաղաքում առկա էր 4 արտադրամա, որտեղ աշխատում էին կանայք:

12-րդ դարի վերջում ձևավորվեց Ստրաբուրգի քաղաքային իրավունքը: Այդ փաստաթուղթը նախատեսում էր, որ կաշեգործներից 12 հոգի պարտավոր են եպիսկոպոսի հաշվին պատրաստել կաշի և մորթիներ, որքան որ պահանջվի եպիսկոպոսին: Յուրաքանչյուր դարբին պարտավոր էր եպիսկոպոսին տրամադրել չորսական նալիկներ իր մեխերով, որոնցից 24 ճիռ համար նալիկները Բուրգուգաֆը փոխանցում էր եպիսկոպոսին, իսկ մնացածները պահում էր իրեն: Բացի այդ, դարբինները պարտավոր էին անել ամեն ինչ, ինչ պահանջվի եպիսկոպոսին իր դրյակում և կապված լինի դրների, պատուհանների և երկարյա այլ իրերի հետ: Իրենց դրա համար տրամադրվում էր մետաղ

և ուտելիք: Նույն կանոնին համաձայն՝ կոչկակարներից 8-ը պետք է եպիսկոպոսին մոմակալների և սպասքի համար տրամադրեին ծածկոցներ: Զրադացանները և ձկնորսները պարտավոր էին ջրով փոխադրել եպիսկոպոսին, ուր որ նա կցանկանար: Ձկնորսները պարտավոր էին տարվա ընթացքում 3 օր ու գիշեր ձուկ որսալ եպիսկոպոսի համար: Հյուսները պարտավոր էին յուրաքանչյուր երկուշաբթի աշխատել եպիսկոպոսի համար վերջինիս հաշվին:

Ընդհանրացնելով նշված իրավական հուշարձանների վերլուծությունը, կարելի է եզրակացնել, որ նրանցում նախատեսված շատ դրույթներ այլ ձևակերպումներով տեղ են գտել նաև ժամանակակից իրավունքում: Իհարկե, դրանցից ոմանք ընդունելի չեն ժամանակակից իրավագիտության տեսանկյունից և դա բնական է: Նման փաստաթուղթները պետք է դիտարկել դարերի պրիզմայով՝ խսորիզմի տեսանկյունից, քանզի նրանց հեղինակները ելնում էին իրենց ժամանակների իրավական կարիքների բավարարման անհրաժեշտությունից:

¹ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Ասրյուն Է., Ուղար Ա. «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ. համընդհանուր մարտահրավերներ» հոդվածը, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ, դասագիրք, խմբ. Ասրյուն Է., Կրաուզ Վ., Ուղար Ա., Եր., 2009 թ.:

² Սովորեսի օրենքները Աստվածաշնչում ներառված սովորությունների հուշարձան են, որոնք գործել են Պալեստինում իրեական ցեղերի շրջանում մ.թ.ա. II-I հազարամյակների սահմանագծին:

³ Տե՛ս Սակով Վ.Ի. Խրեստոմատիա по истории государства и права зарубежных стран. Учебное пособие, 2-е издание, переработанное и дополненное. М., 2005. С. 13.

⁴ Առավել մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 27-30:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 33-34:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 37-39:

⁷ Առավել մանրամասն տե՛ս նույն աշխատությունը, էջ 42:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 43:

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 60:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 64, 71-74:

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 91,94, 113:

¹² Այդ մասին առավել մանրամասն տե՛ս նշված աշխատությունում, էջ 144-147:

¹³ Միջին դարերի պատմության վերաբերյալ մանրամասն տե՛ս Իстория средних веков. Под ред. Колесницкого Н.Ф. М., 1986.

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 153,161:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 174, 182:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 191, 192:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 192, 193:

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 196:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 206-207:

ԳՆԵԼ ՄՈՒՂՆԵՑՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական
իրավունքի ամբիոնի ասպիրանտ, ՀՀ փաստարանների
պալատի անդամ-փաստարան

ՎԱՐՉԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԻ ԱՆՀՐԱԺԵՇԾՈՒԹՅԱՆ ՀԻՄԱԽԱՆԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ

Ներկայումս գործող իրավակարգավորումը ՀՀ վարչադատավարական գործընթացում բացառում է վերաբնության փուլը, ինչը մեր խորին համոզմամբ, անձանց՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով սահմանված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի խախտում է։ Մեր նման եզրահանգումը պայմանավորված է ոչ միայն վերաբնության ինստիտուտի իրավակարգավորման բացակայությամբ, այլ նաև ստորև ներկայացվող գործոններով։

Թե՛ ՀՀ սահմանադրական դատարանը, թե՛ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, թե՛ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն իրենց ակտերով արձանագրել են, որ անձի արդյունավետ դատական պաշտպանությունը ենթադրում է նաև անձի իրավունքների և /կամ/ պարտականությունների վերաբերյալ կայացված դատական ակտի բողոքարկելու հնարավորության առկայություն։

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն իր 909-րդ համագումարում 2004թ. դեկտեմբերի 15-ին ընդունել է Վարչական ակտերի դատական վերահսկողության վերաբերյալ (2004) 20 հանձնարարականը¹։ Նշված հանձնարարականի 4-րդ (i) կետում ամրագրված է, որ վարչական ակտը վերանայող դատարանի որոշումը պետք է, գոնեւ կարևոր գործերով ենթակա լինի բողոքարկման վերադաս ատյան, բացառությամբ այն դեպքերի, երբ գործը ներպետական օրենսդրությանը համապատասխան ուղղակիորեն ենթակա է վերադաս ատյանին։

ՀՀ վարչադատավարական գործընթացում վերաբնության փուլի կարևորության հանգամանքին ամենայն մանրամասնությամբ անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը իր 2008 թվականի նոյեմբերի 25-ի ՍԴՈ-780 որոշմամբ, որով վերջինս արձանագրել է. /մեջբերման

սկիզբ/ «Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում հարկ է համարում Սահմանադրության 92-րդ հոդվածի նշված մեկնաբանությունը դիտարկել ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում ամրագրված դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների համատեքստում։ Այս սահմանադրական դրույթների համադրված վերլուծության արդյունքում սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև օրենսդրի հայեցողությանն է բողնված վարչական արդարադատության շրջանակներում վերաբննիշ ատյանի ստեղծման հարցի լուծումը, այնուամենայնիվ, օրենսդրին իր այս հայեցողությունն իրացնելիս պետք է առաջնորդվի մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերով ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, տվյալ դեպքում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ պաշտպանության և այդ իրավունքի կարևոր բաղադրիչներից մեկի բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտությամբ» (մեջբերման ավարտ)²։

Նշվածի համաձայն՝ ՀՀ սահմանադրական դատարանը ներկայացրել է այն ելակետային շափորչիները, որոնցով պետք է առաջնորդվի օրենսդրը դատական պաշտպանության միջնորդների իրավական ֆորմալիզացիայի ընթացքում (իրավաստեղծման գործընթացում) և, որպես նման շափորչիշ, առանձնացրել է դատական ակտի բողոքարկման հնարավորության իրացման կառուցակարգի առկայության անհրաժեշտությունը։

Նշված ելակետային հանգամանքի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը սահմա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նադրականության որոշման նկատառումով գնահատման առարկա է դարձել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին և 118-րդ հոդվածի 1-ին մասերով սահմանված նորմերը, ինչի արդյունքում դրանք ճանաչվել են ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին հակասող և անվավեր:

Վարչադատավարական գործընթացում վերաբննության փուլի բացակայության պայմաններում ՀՀ սահմանադրական դատարանը արձանագրել է, որ վարչադատավարական գործընթացում վճռաբեկության փուլը իր իրավակարգավորմամբ պետք է էականորեն տարրերի քաղաքացիական գործընթացի վճռաբեկության փուլից: Մեր խորին համոզմամբ ՀՀ սահմանադրական դատարանի նշված մտահոգությունը առարկայագործի չէ. դրա հիմքում ընկած է անձանց իրավունքների և /կամ/ պարտականությունների վերաբերյալ կայացված դատական ակտերի բողոքարկման հնարավորության իրացման համար արդյունավետ կառուցակարգերի սահմանման անհրաժեշտությունը, ինչն իր հերթին երաշխիք է հանդիսանում ՀՀ սահմանադրության 18-րդ հոդվածով սահմանված յուրաքանչյուր ոքին՝ արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներով դատական պաշտպանության իրավունքի իրացման համար: Այլ կերպ ասած՝ վարչադատական գործընթացում վերաբննության փուլի բացակայության պայմաններում պետք է առկա լինի վճռաբեկության փուլի այնպիսի իրավակարգավորում, որը պայմաններ կստեղծի անձան՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի անքակտելի մասը, բաղադրիչը հանդիսացող դատական ակտի բողոքարկման հնարավորության իրացման համար:

Մասնավորապես, վերընշված որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը հայտնել է հետևյալ դիրքորոշումը. (մեջբերման սկիզբ). «Սահմանադրական դատարանն իրավաչափ չի համարում վերաբննիչ վարույթի բացակայության պայմաններում վարչական դատարանի ակտերի դեմ վճռաբեկ բողոքի առնչությամբ նույն հիմքերի և ընդունելիության պայմանների սահմանումը, որոնք կիրառվում են քաղաքացիական արդարադատության եռաստիճան համակարգում: Ստացվում է վարչական դատավարությունում քաղաքացիական դատավարության նորմերի մեխանիկական վերարտադրություն այն դեպքում, եթե առաջինում վերաբննիչ վարույթ գոյություն չունի: Ուրեմն՝ վարչական դատավարության մասնակիցների կողմից վարչա-

կան դատավարության մասնակիցների կողմից վարչական դատարանի ակտը վճռաբեկ դատարան բողոքարկելու կարգը, ներառյալ վճռաբեկ բողոքի թույլատրելիության հիմքերը, ինչպես նաև վճռաբեկ վարույթի կարգն այդ գործերով, պետք է սահմանվեն վարչական դատավարության օրենսգրքով՝ հղումներ ներառելով այլ օրենքներին միայն այն դեպքերում, եթե դրանք դուրս չեն գալիս դատական համակարգի ընդհանուր սահմանադրական սկզբունքների շրջանակներից: Նման մոտեցումը բխում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի և 2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից» (մեջբերման ավարտ):

Ինչևէ, ՀՀ սահմանադրական դատարանի վերընշյալ որոշումից հետո «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ-99-Ն ՀՀ օրենքով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարվեցին լրացումներ՝ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ գլուխը լրացվեց 118.1-118.6-րդ հոդվածներով:

ՀՀ արդարադատության նախարարությունը, հավանություն տալով «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության եզրակացության նախագծին, նախագծի հիմնավորումների մեջ վկայակոչել է հետևյալ հանգամանքը. «Սույն օրինագծերի միջոցով Ազգային ժողովում ստեղծված աշխատանքային խումբն իրականացրել է ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՌ-780 որոշման եզրափակիչ մասի դրույթները, որոնցով....: Բացի վերը նշվածներից, իրավաչափ չի համարվում վերաբննիչ վարույթի բացակայության պայմաններում վարչական դատարանի ակտերի դեմ վճռաբեկ բողոքի առնչությամբ նույն հիմքերի և ընդունելիության պայմանների սահմանումը, որոնք կիրառվում են քաղաքացիական դատավարության նորմերի մեխանիկական վերարտադրություն այն դեպքում, եթե առաջինում վերաբննիչ վարչական դատավարության մասնակիցների կողմից վարչա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կան դատարանի ակտը վճռաբեկ դատարան բողոքարկելու կարգը, ներառյալ՝ վճռաբեկ բողոքի բույլատրելիության հիմքերը, ինչպես նաև վճռաբեկ վարույթի կարգն այդ գործերով պետք է սահմանվեն հենց վարչական դատավարության օրենսգրքով և հղումներ ներառեն քաղաքացիական դատավարության նորմերին միայն այն դեպքում, եթե առանձնահատկություններ չեն պարունակում»:

Ըստ էության, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու համար որպես հիմնավորում վկայակոչվել է ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի նոյեմբերի 25-ի թիվ ՍԴ-780 որոշմամբ հայտնած դիրքորոշումը: Սա նշանակում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարվող լրացումներով պետք է սահմանվեր վարչադատավարական գործընթացի վճռաբեկության փուլի այնպիսի իրավակարգավորում, որը պայմաններ ստեղծեր անձանց՝ արդյունավետ միջոցներով դատական պաշտպանության իրավունքի անքաղցելի մասը, բաղադրիչը հանդիսացող դատական ակտի բողոքարկման հնարավորության իրացման համար:

Սակայն, թե՛ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում կատարված լրացումները իրենց իրավական ձևակերպումներով, թե՛ 2008 թվականի նոյեմբերից հետո (խոսքը վերաբերում է ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման կայացումից հետո մինչ օրս ընկած ժամանակահատվածին) ձևավորված դատաիրավակիրառական պրակտիկան հավաստում են, որ խնդրուարկայի լուծման կապակցությամբ ոչ մի էական առաջընթաց չի արձանագրվել: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.3-րդ հոդվածով (վճռաբեկ բողոք բերելու հիմքերը) նորմերը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 226-րդ հոդվածով սահմանված նորմերի նույնությամբ վերարտադրումն են: Ավելին՝ գրեթե տարբերություն չկա նաև վճռաբեկ բողոքը ընդության ընդունելու ՀՀ վարչական դատավարության և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերով սահմանված հիմքերի միջև: Եթե դրան ավելացնենք նաև այն հանգամանքը, որ վարչական գործերով բերված վճռաբեկ բողոքները վերադարձնելու հետ կապված հարցերը կարգավարվում են ՀՀ քաղաքացիական դատավարու-

թյան օրենսգրքով, ապա դժվար չել եղանակացնել, որ իրավական կարգավորման հարթությունում գրեթե ամեն ինչ, գոնե բովանդակային առումով, մնացել է նույնը:

Զննարկվող հարցի կապակցությամբ ամեն ինչ գրեթե նույնը մնալու վերաբերյալ իր դիրքորոշումն է հայտնել նաև ՀՀ սահմանադրական դատարանն իր 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ ՍԴ-873 որոշմամբ: Նշված որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ կատարված փոփոխությունները համակարգային առումով ամբողջական չեն, չեն ապահովում և երաշխավորում վճռաբեկ դատարանում վարչական վարույթի իրականացման հստակ կարգն ու առանձնահատկությունները, չի գտնվել վարչական արդարադատության գործառնական և կառուցակարգային դատարանակազմական ամբողջական երաշխավորման արդյունավետ լուծում⁴:

Եվ, որ ամենակարևորն է, հենց ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ վարչական դատարանի վերջնական դատական ակտերի դեմ բերված բողոքների վարույթ ընդունելու և վերադարձնելու վիճակագրությունն է վկայում, որ ՀՀ վճռաբեկ դատարանի պրակտիկայում ամեն ինչ մնացել է նույնը: Մասնավորապես, ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչության տրամադրած տվյալների վերլուծությունից բխում է, որ և 2008 թվականի, և 2009 թվականի ընթացքում, ինչպես նաև 2010 թվականի 1-ին կիսամյակում ՀՀ վճռաբեկ դատարանը վերադարձրել է ՀՀ վարչական դատարանի վերջնական դատական ակտերի դեմ ներկայացված վճռաբեկ բողոքների մոտ ուրսուն տոկոսը: Ըստ ՀՀ դատական դեպարտամենտի դատական պրակտիկայի ամփոփման վարչության տրամադրած տվյալների՝ 2008 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի ընկած ժամանակահատվածում (11 ամսվա ընթացքում) ՀՀ վարչական դատարանի դատական ակտերի դեմ ներկայացված 223 վճռաբեկ բողոքից 172-ը վերադարձվել են, իսկ 51-ը՝ ընդունվել են վարույթ: 2008 թվականից հետո ընկած ժամանակահատվածում (խոսքը վերաբերում է ՀՀ սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշման և դրանից հետո ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելուց հետո ընկած ժամանակահատվածին) պատկերը նույնականացնելու համար կապահանջման դատավարության ակտերում նշված է ՀՀ դատավարության օրենսգրքում նշված ակտերում:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

եղել, մասնավորապես, 2009 թվականի հունվարի 1-ից մինչև 2010 թվականի 1-ին կիսամյակը ներառյալ ընկած ժամանակահատվածում ՀՀ վարչական դատարանի դատական ակտերի դեմ ներկայացված 681 վճռաբեկ բողոքից 538-ը վերադարձվել է, իսկ 143-ը ընդունվել է վարույք:

Նշված փիճակագրական տվյալները փաստում են ընդամենը մի բան. ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ 780 որոշման պահանջները չեն կատարվել և վարչադատավարական գործընթացի՝ ներկայում գործող երկաստիճան համակարգը չի ապահովում անձանց՝ արդյունավետ միջոցներով դատական պաշտպանության իրավունքի իրացումը. Սա նշանակում է, որ պետք է առաջարկվեն խնդրի համակարգային լուծումներ, որոնց մեկնարկը, մեր խորին համոզմամբ՝ պետք է տրվի վերաբննության փուլի հետ կապված հարցերը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում իրավական ֆորմալիզացիայի ենթարկմամբ: Այսօր, առավել քան իրատապ է վարչադատավարական գործընթացում վերաբննության փուլի նախատեսումը, քանի որ արդեն 3-րդ տարին է, ինչ մասնագիտացված՝ վարչական դատավարությունը լիարժեք չի իրացնում իր հիմնական առաքելությունը (անձանց հանրային սուրյեկտիվ իրավունքների պաշտպանության արդյունավետ կարգի սահմանում): Մեր հավաստմամբ դատավարական փոփոխությունները պետք է զուգորդվեն նաև ինստիտուցիոնալ փոփոխություններով, մասնավորապես, ՀՀ դատական համակարգում պետք է կազմավորել նոր՝ վարչական վերաբննիշ դատարաններ, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կազմում պետք է կազմավորել մասնագիտացված վարչական պալատ:

Մեր կարծիքով մասնագիտացված դատարանների ստեղծումը՝ բացառությամբ առանձին դեպքերի, իր հետ պետք է բերի մասնագիտացում թե՛ դատարանակազմական, թե՛ դատավարական ասպեկտներով: Այլ կերպ ասած՝ միայն առաջին ատյանի մակարդակով մասնագիտացում (համապատասխան դատավարական իրավակարգավորմամբ) խնդրի ոչ ամբողջական և հատվածական լուծում է: Մասնագիտացման հիմքում ընկած գործուները պահանջում են մասնագիտացում նաև վերին ատյանի օղակներում: Մասնագիտացված դատարանների ստեղծումն ինքնանպատակ չէ, որուա հիմքում ընկած է սոցիալական որոշակի

պահանջմունք և, դրանով պայմանավորված, խնդիրների և նպատակների ամբողջական համակարգ, որոնց իրացման և կյանքի կոչման նկատումով էլ ստեղծվում են համապատասխան մասնագիտացված դատարանները⁵: ՀՀ վարչական դատարանը և վարչադատավարական գործընթացը իր ընթացակարգային կարգավորմամբ իրավական կարգավորման կառուցակարգում ունեն իրենց ուրույն, համեստ, բայց և անփոխարինելի տեղը և դերը, մասնավորապես, վարչադատավարական գործընթացի միջոցով անձանց հանրային սուրյեկտիվ իրավունքների պաշտպանության նկատառումով վերահսկողություն է իրականացվում հանրային իշխանությամբ օժտված սուրյեկտների գործունեության նկատմամբ: Վարչական դատավարությունը, ի թիվս այլոց, իրավական արժեհամակարգի մեջ ընդգրկված իրավական այլ երևույթների հետ հանգուցալուծվում է ողջ իրավական գոյի մեկնակետում, այն է՝ իրավակարգի հաստատում:

Մենք լիովին կիսում ենք ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ 780 որոշման մեջ տեղ գտած հետևյալ տեսակետը. (մեջբերման սկիզբ) «Մասնագիտացված արդարադատության, այդ թվում՝ վարչական արդարադատության, ինստիտուտի ներդրումը, ի թիվս այլոց, նպատակ է հետապնդում առաջին հերթին դատավորների մասնագիտացման միջոցով պահովել տվյալ ոլորտում դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը և լիարժեքությունը՝ արդարադատության այդ տեսակին բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ: Մասնագիտացված դատարանների ստեղծումը բխում է հասարակական կյանքի առանձին ոլորտներում առաջացող հարաբերությունների կապակցությամբ պատշաճ արդարադատություն իրականացնելու պահանջից: Դատավորները մասնագիտանում են որոշակի կատեգորիայի գործերով արդարադատության իրականացման մեջ, և այս դեպքում՝ դատական սխալի հավանականությունն ավելի փոքր է: Հետևաբար, այդ ինստիտուտի բնականոն և լիարժեք կենսագործունեությունը պահանջում է, որպեսզի մասնագիտացման գործունը հստակ արտահայտված լինի տվյալ տեսակի գործերի քննության իրավասությամբ օժտված բոլոր դատական ատյաններում:

Ելմելով վերոհիշյալից՝ սահմանադրական

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դատարանն արձանագրում է, որ վարչական մասնագիտացված արդարադատության ոլորտում անձի իրավունքների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն բողոքարկման միակ ատյանի վճռաբեկ դատարանի մատչելիությամբ և արդյունավետությամբ, այլ այդ իրավունքի արդյունավետությունը պայմանավորող կարևոր հանգամանք է նաև վճռաբեկ դատարանում մասնագիտացման գործոնի լիարժեք դրսերումը: Մասնագիտացման գործոնը վճռաբեկ դատարանում կարող է ունենալ երկու հիմնական դրսերում, այն է՝ գործերի քննությունը մասնագիտացված առանձին միավորի կողմից, և երկրորդ՝ գործերի քննության կազմակերպումը վարչական արդարադատության առանձնահատկություններին համապատասխան: Մինչդեռ վճռաբեկ դատարանում վարչական գործերի քննության կապակցությամբ մասնագիտացման գործոնի նշված երկու դրսերումներն ել որևէ կերպ արտահայտված չեն....: Սահմանադրական դատարանը գտնում է, որ մասնագիտացված վարչական դատարանի ակտերը չեն կարող վերանայվել մի դատարանի կողմից, որը չունի մասնագիտացված համապատասխան դատական կազմ: Սահմանադրության մեջ վճռաբեկ դատարանի պալատների գոյության երաշխիքի ամրագրումը կիմաստավորվի միայն այն դեպքում, եթե վճռաբեկ դատարանն ունենալիարժեք, այն է՝ գործն ըստ էության քննող և լուծող մասնագիտացված համապատասխան պալատ: Մասնագիտացման գործոնը վճռաբեկ վարույթում բացակայելու արդյունքում վճռաբեկ դատարանում անձի իրավունքների պաշտպանության իրավունքը, հետևաբար նաև՝ վարչական արդարադատության ոլորտում անձի դատական պաշտպանության իրավունքն իր ամբողջության մեջ խսրարվում է և զրկվում արդյունավետությունից» (մեջբերման ավարտ):

Ինչևէ, համաշխարհային փորձը վկայում է, որ վարչադատավարական գործընթացում վերաբերնության (համապատասխան վարչական վերաբերնի ատյանով (appeal administrative court)), ինչպես նաև վճռաբեկության (գերազույն վարչական դատարանով-supreme administrative court (որոշ երկրներում վարչական գործերով վերին դատական ատյանի անվանումը այլ է) փուլերը, կարևոր և անհրաժեշտ պայմաններ են վարչական

արդարադատության իրացման գործընթացում: Այլ կերպ ասած, մասնագիտացումը՝ որպես ամբողջական գործընթաց, իր իրացումն է գտնել նաև դատարանակազմական համատեքստում, ինչը հանգեցրել է համապատասխանարար վերաքննիչ և վճռաբեկ ատյանների կայացմանը: Թե՛ դատարանակազմական, թե՛ դատավարական հարցերի իրավական կարգավորման հետ կապված տարբեր երկրներում առկա են տարբեր մոտեցումներ, մասնավորապես, մի շարք երկրներում առկա են ինչպես վերաքննիչ, այնպես է գերազույն վարչական դատարաններ (օրինակ, Գերմանիա, Հունաստան, Ռուսաստան, Մոլդովա, Բուլղարիա), իսկ որոշ երկրներում մասնագիտացված առանձին գերազույն դատարաններ առկա չեն, սակայն բարձրագույն դատական ատյանի կազմում գործում են վարչական գործերով պալատներ, դեպարտամենտներ (Վրաստան, Էստոնիա, Սերբիա): Որոշ երկրներում մասնագիտացումը տեղ է գտնում նաև հենց գերազույն վարչական դատարանում (օրինակ՝ Լեհաստան), իսկ մի շարք երկրներում վարչական արդարադատության գերազույն ատյանը կվագիդատական սուբյեկտ է (օրինակ՝ Ֆրանսիա, Իտալիա, Թուրքիա):

Մասնավորապես, Գերմանիայի «Վարչադատական գործընթացի մասին» Գերմանիայի Դաշնային օրենքով ամբողջական բաժիններ (բաժին 12, 13) են նվիրված վարչադատավարական գործընթացի վերաբերնության և վճռաբեկության փուլի հետ կապված հարցերին⁶: Ուկրաինայի վարչական դատավարության օրենսգրքով նույնպես ամբողջական գլուխներ (4-րդ բաժնի 1-2-րդ գլուխներ) են հատկացված վերաբերնության և վճռաբեկության փուլերին⁷: «Վարչական դատարանի մասին» Մոլդովայի օրենքի 6-րդ հոդվածով սահմանված նորմի համաձայն՝ Մոլդովայում գործում են վերաբերնիչ պալատներ և Բարձրագույն դատական պալատ⁸: Վարչադատավարական գործընթացի վերաբերնության և վճռաբեկության փուլերի հետ կապված նույնարդումական կարգավորում է առկա նաև Հունաստանում, մասնավորապես, այնտեղ գործում են վերաքննիչ վարչական դատարաններ և Գերազույն վարչական դատարան⁹: Լեհաստանում նույնպես վարչադատավարական գործընթացում առկա են վերաբերնության և վճռաբեկության փուլերը համապատասխան իրավակարգավորմանը: Լեհաստանում

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նույնիսկ Գերազույն վարչական դատարանը բաժանվում է երեք պալատների՝ Ֆինանսական պալատ, տնտեսական պալատ և ընդհանուր վարչական գործերով պալատ¹⁰: Էստոնիայում վարչադատավարական գործընթացը կարգավորող Վարչական դատարանի ընթացակարգի օրենսգրքի¹¹ (Code of Administrative Court Procedure) 5-6-րդ գլուխներով ամրագրված նորմերը համապատասխանաբար ուղղված են վարչադատավարական գործընթացի վերաբնության և վճռաբեկության փուլերի իրավակարգավորմանը: Ավելին՝ Էստոնիայի դատարանակազմության հետ կապված հարցերը կարգավորող «Դատարանների մասին» օրենքի 18-րդ, 22-րդ, 28-րդ հոդվածներով ամրագրված նորմերը սահմանում են, որ Էստոնիայում գործում են վարչական դատարաններ, շրջանային վերաբննիշ դատարաններ, որոնք քննում են նաև վարչական դատարանների ակտերի դեմ ներկայացված վարչական վերաբննիշ բողոքները, ինչպես նաև Գերազույն դատարանը՝ իր երեք պալատներով (քաղաքացիական, քրեական և վարչական):¹²

Ֆրանսիայում ևս առկա են վերաբննիշ վարչական դատարաններ, իսկ վարչական գործերով վերին ատյանը հանդիսանում է Պետական խորհուրդը¹³: Թուրքիայի «Շրջանային վարչական դատարանների, վարչական և հարկային դատարանների հաստատման և գործունեության մասին» 06.01.1982թ. թիվ 2576 և «Պետական խորհրդի մասին» 06.01.1982թ. թիվ 2575 օրենքների ուսումնասիրությունից բխում է, որ վարչական դատարանների մասնագիտացվածության հարցում Թուրքիան, որոշակի վերապահումներով, ինպիմենտացիայի է ենթարկել վարչադատավարական ֆրանսիական մոդելը¹⁴:

Իտալիայում նույնպես վարչական արդարադատության մասնագիտացումը կրում է ամբողջական բնույթ, մասնավորապես, Իտալիայում բացի առաջին ատյանի մասնագիտացված վարչական դատարաններից՝ առկա են վերաբննիշ ատյաններ, ինչպես նաև վերին ատյան, որը, ինչպես ֆրանսիայում, կոչվում է Պետական խորհուրդ: Իտալիայում առանձին հանրային իրավական վեճերով վարչական արդարադատություն է իրականացնում Իտալիայի հաշվից պալատը¹⁵:

Հարկ է անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ, որոշ երկրներում դատարանակազ-

մական առումով վարչական վերաբննիշ դատարաններ առկա չեն, սակայն վճռարեկ փուլի հետ կապված դատավարական կարգավորումն այնպիսին է, որ անձանց հնարավորություն է տալիս լիարժեք իրացնել վարչական դատարանի ակտերի բողոքարկման իրավունքը: Նման երկիր է, օրինակ, Լիտվան, որի «Դատարանների մասին» օրենքի 4-րդ գլխի¹⁶ 1-2-րդ բաժիններով ամրագրված նորմերի բառացի մեկնաբանության և համակարգային վերլուծության արդյունքում հանգում ենք այն եզրակացությանը, որ Գերազույն վարչական դատարանը շրջանային վարչական դատարանների համար հանդիսանում է վերաբննիշ ասյան:

Հարկ է նշել, որ հանրային իրավահարաբերություններից բխող վեճերով դատավարության վերաբննության և վճռաբեկության փուլեր առկա են նաև ընդհանուր իրավունքի համակարգի երկրներում (ճշշտ է ԱՄՆ-ում ընդհանուր վարչական դատարաններ որպես այդպիսին գոյություն չունեն, սակայն ԱՄՆ-ում վարչական գործակալությունների կազմում գործում են վարչական դատավորներ, որոնք մասնագիտացված են կոնկրետ ոլորտում հանրային իրավական վեճերի լուծման մեջ և նրանց կողմից կայացված ակտերը, որպես կանոն, ենթակա են դատական վերանայման¹⁷): Ինչևէ, ԱՄՆ-ում դաշնային մակարդակով առկա են 13 վերաբննիշ դատարաններ, որտեղ վեճերի քննությունն իրականացվում է վերաբննիշ գործընթացի դաշնային կանոններով¹⁸: Վերաբննիշ դատարաններ բողոքարկվում են մասնագիտացված դաշնային դատարանների (այս դաշնային դատարանները մեծամասամբ քննում են հանրային իրավահարաբերություններից բխող վեճեր, օրինակ՝ ԱՄՆ-ի հարկային դատարան, Դաշնային կառավարությանը դեմ ներկայացվող պահանջները քննող դատարան) և շրջանային դաշնային դատարանների դատական ակտերը: Որպես կանոն եռատիճան դատական համակարգ է առկա նաև ԱՄՆ-ի նահանգներում¹⁹: Դաշնային վերաբննիշ դատարանների դատական ակտերը ենթակա են բողոքարկման ԱՄՆ գերազույն դատարան, որտեղ գործերի (այդ բվում՝ վարչական գործերի) քննությունն իրականացվում է ԱՄՆ գերազույն դատարանի կանոններով (Rules of the Supreme Court of the United States)²⁰:

Ինչևէ, ելմելով վերագրյալից ևս կարող ենք

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Եզրահանգել, որ մասնագիտացված վարչական արդարադատությունը ենթադրում է մասնագիտացում ոչ միայն առաջին ատյանի վարչական դատարանի ստեղծմամբ (համապատասխան դատավարական կարգավորմամբ), այլ նաև անձանց՝ դատական ակտերի բողոքարկման իրավունքի իրացման համար վերաքննիչ և վճռաբեկ ատյանների նախատեսում։ Մակայն նշված դատական ատյանների իրավական ֆորմալիզացիային զուգահեռ պետք է նախատեսվեն վերաքննության և վճռաբեկության փուլերի՝ որպես վարչադատական գործընթացի փուլերի, այնպիսի իրավակարգավորում, որը անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության համար կլինի արդյունավետ։

Վերոգրյալից ելնելով՝ մենք գտնում ենք, որ հայաստանյան իրականությունում վարչադատավարական իրավական պաշտպանության արդյունավետության համար վերաքննության փուլի իրավական ֆորմալիզացիան թե՛ դատավարական, թե՛ դատարանակազմական առումով առավել քան իրատապ է։ Մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում պետք է կատարվեն լրացումներ, ինչի արդյունքում կնախատեսվի առանձին գլուխ, որով ամրագրված նորմերն ուղղված կլինեն առաջին ատյանի վարչական դատարանի դատական ակտերի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքների քննության հետ կապված հարաբերությունների կարգավորմանը։ Նշված դրույթներով պետք է կարգավորման ենթարկվեն վերաքննիչ բողոք ներկայացնող անձանց շրջանակի, վերաքննիչ բողոք ներկայացնելու ժամկետների, կարգի, վերաքննիչ բողոքի բովանդակության, այն վարույթ ընդունելու, վերադարձնելու, վերաքննիչ բողոքի քննության կարգի, վարչական վերաքննիչ դատարանի լիազորությունների, բողոքի քննության արդյունքում կայացված դատական ակտերին ներկայացվող պահանջների հետ կապված հարցերը։

Նշված հարցերի կարգավորման համար ելակետային պետք է հանդիսանա այն իրողությունը, որ այդ ամենն արվելու է որոշակի նպատակի իրացման և սոցիալիրավական պրակտիկայում դրա առարկայացման համար, այն է՝ անձանց՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի բաղադրիչը հանդիսացող դատական ակտի բողոքարկման հնարավորության

իրացման համար գործնական իրավական կառուցակարգի առկայություն։

Սակայն միայն դատավարական փոփոխությունները մեր կարծիքով բավարար չեն նշված նպատակի իրացման համար, դրա լուծման համար անհրաժեշտ են համակարգային, ամբողջական լուծումներ, ինչը ենթադրում է նաև վարչական դատարանների՝ դատարանակազմական առումով ռեֆորմացիա։ Դատարանակազմական առումով խնդրի լուծումը կայանում է նրանում, որ մասնագիտացման գործընթացը պետք է ավարտին հասցվի և Հայաստանի Հանրապետությունում պետք է ստեղծվի վարչական վերաքննիչ ատյան, ինչպես նաև վճռաբեկ դատարանում առանձին-առանձին մասնագիտացված վարչական և քաղաքացիական պալատներ՝ ներկայումս գործող քաղաքացիական և վարչական պալատի փոխարեն։ Հարկ է նշել, որ ներկայումս ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել օրենսդրական բարեփոխումների ամբողջական փաթեթ, որի ընդունման դեպքում վարչադատավարական գործընթացի վերաքննության փուլը և մասնագիտացված վերաքննիչ դատարանները կդառնան իրողություն։

Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով նախատեսվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը լրացնել 19.1 գիսով (վարույթը վերաբերնիշ դատարանում), որով վարչադատավարական գործընթացի վերաքննության փուլը ենթարկված է ամբողջական կարգավորման։

Շրջանառության մեջ է դրված նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի 1-ին և 6-րդ հոդվածներով ամրագրված նորմերով նախատեսվում է փոփոխել ՀՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված նորմը, ինչպես նաև նշված օրենսգիրքը լրացնել 41.1 հոդվածով, ըստ որոնց՝ ՀՀ-ում պետք է գործի մասնագիտացված վերաքննիչ վարչական դատարան։

Մեր համոզմամբ վարչադատական կառուցակարգի ամբողջական մասնագիտացումը կարելի է ավարտին հասցնել օրենսդրական բարեփոխումների ներկայային փուլում և վերաքննիչ վար-

ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

շական դատարանների դատական ակտերի դեմ համար ՀՀ վճռաբեկ դատարանում ստեղծել մասներկայացված վճռաբեկ բողոքների քննության նազիտացված վարչական պալատ:

¹ Տե՛ս Հղումն ըստ համացանցի [https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=Rec\(2004\)20&Language=lanEnglish&Site=CM&BackColorInternet=C3C3C3&BackColorIntranet=EDB021&BackColorLogged=F5D383](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=Rec(2004)20&Language=lanEnglish&Site=CM&BackColorInternet=C3C3C3&BackColorIntranet=EDB021&BackColorLogged=F5D383) կայքի 03.03.2010թ. դրույթամբ:

² Տե՛ս Հղումն ըստ համացանցի <http://www.concourt.am/armenian/decisions/common/2008/pdf/sdv-780.pdf> կայքի 08.08.2010թ. դրույթամբ:

³ Տե՛ս ՀՀՊՏ N 23 (690), 06.05.09:

⁴ Տե՛ս Հղումն ըստ համացանցի <http://www.concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-873.pdf> կայքի 01.09.2010թ. դրույթամբ:

⁵ Տե՛ս Մասնագիտացված դատարանների ստեղծման, դրանց հիմքում ընկած պայմանների, դրանց խորհրդական մասին ավելի մանրամասն տե՛ս Աֆանասьев С. Ф., Зайцев А. И. Об истории специализации юрисдикционных органов // Правоведение. 2002. № 2 (241). С. 135-143.

⁶ Տե՛ս Административное-процессуальное право Германии: закон об административном производстве, закон об административно-судебном процессе, законодательство об исполнении административных решений: пер. с нем. / В. Бергманн, М.: Волтерс Клувер, 2007. С. 140-151.

⁷ Տե՛ս Հղումն ըստ համացանցի www.audiozakon.com.ua կայքի 01.07.2010թ. դրույթամբ:

⁸ Տե՛ս Հղումն ըստ համացանցի http://gov.gov.md/www.gov.md/file/cadrul_juridic/ru/ Закон об административном суде.pdf կայքի 01.07.2010թ. դրույթամբ:

⁹ Տե՛ս Հղումն ըստ համացանցի http://en.wikipedia.org/wiki/Administrative_courts_in_Greece կայքի 06.09.2010թ. դրույթամբ:

¹⁰ Տե՛ս Հղումն ըստ համացանցի http://en.wikipedia.org/wiki/Supreme_Administrative_Court_of_the_Poland կայքի 06.09.2010թ. դրույթամբ:

¹¹ Տե՛ս Հղումն ըստ համացանցի <http://www.legaltext.ee/en/andmebaas/tekst.asp?loc=text&dok=X30054K8&keel=en&pg=1&ptyyp=RT&tyyp=X&query=%Court> կայքի 04.09.2010թ. դրույթամբ:

¹² Տե՛ս Հղումն ըստ համացանցի <http://www.legislationline.org/documents/action/popup/id/5731> կայքի 03.09.2010թ. դրույթամբ:

¹³ Տե՛ս Դրա վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Маклаков В.В. Административная юстиция во Франции. Перевод/РАН. ИНИОН, М., 2006. С. 12-18.

¹⁴ Տե՛ս Հղումն ըստ համացանցի <http://www.danistay.gov.tr/eng/index.html>և http://www.legalisplatform.net/hukuk_metinleri/2575%20Nr.%20Code.pdf կայքերի 03.09.2010թ. դրույթամբ:

¹⁵ Տե՛ս Бочарников Ю. Ф. (Юрий Фабиевич). Конституционно-правовой статус органов административной юстиции Италии :Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2007. С. 10, 14-16.

¹⁶ Տե՛ս Հղումն ըստ համացանցի http://www3.lrs.lt/pls/inter2/dokpaieska.showdoc_1?p_id=216134 կայքի 03.09.2010թ. դրույթամբ:

¹⁷ Տե՛ս Դրա վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Берман У. Правовая система США. 3-й выпуск. Новая юстиция, 2007. С. 339-349.

¹⁸ Տե՛ս ԱՍՆ-ի ողջ տարածքը բաժանվում է 13 շրջանների, որոնց մեջ մտնում են համապատասխան նահանգների տարածքները, ինչով էլ պայմանավորված դաշնային վերաբերիչ դատարանների թիվը նույնականացնում է 13-ի: Այդ ամենը սահմանված է ԱՍՆ-ի միացյալ նահանգների օրենքի 28-րդ տիտղոսի, 1-ին մասի 3-րդ գլուխ 48-րդ պարագրաֆի a/ մասի դրույթով (U.S. Code Title 28, Part 1, Chapter 3, « 48)- հղումն ըստ համացանցի http://www.law.cornell.edu/uscode/28/usccode_28_00000048—000-.html կայքի 05.09.2010թ. դրույթամբ:

¹⁹ Տե՛ս Նշված կանոնների ամբողջական տեքստին կարելի է ծանոթանալ համացանցի http://en.wikipedia.org/wiki/Federal_Rules_of_Appellate_Procedure կայքում, հղումը 01.09.2009թ. դրույթամբ:

²⁰ Տե՛ս ԱՍՆ դատական համակարգի կառուցվածքի մասին տե՛ս Բерман У. Правовая система США. 3-й выпуск. Новая юстиция, 2007. С. 1208, ինչպես նաև Ֆրիդմեն Լ. Введение в американское право: Пер. с англ./Под ред. Калантаровой М. М.: Прогресс, 1992. С. 51-55:

²¹ Տե՛ս Նշված կանոնների ամբողջական տեքստին կարելի է ծանոթանալ համացանցի <http://www.supremecourt.gov/ctrules/2010RulesoftheCourt.pdf> կայքում, հղումը 01.09.2010թ. դրույթամբ:

ԳԱՐԻԿ ՍՏԱԲՈԼՅՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի հայցորդ



ԱՆՄԻՋԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱԾՆՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՀԱՍՏԱԿԱՐԳՈՒՄ

Տեղական ինքնակառավարման համակարգում անմիջական ժողովրդավարությունը իրենից ներկայացնում է քաղաքացիների ուղղակի մասնակցությունը տեղական նշանակության հարցերի քննարկման, մշակման և որոշումների կայացման, ինչպես նաև այդ որոշումների կյանքի կոչման վերահսկողության մեջ:

Տեղական ինքնակառավարումը պետության վարչատարածքային միավորներում հանրային իշխանության կազմակերպման երկու ձևերից մեկն է, մարդկության պատմության մեջ ժողովրդավարության կարևոր ինստիտուտներից մեկը: Նրա ստեղծման առաջին պատճառը տեղային համայնքների կամքն էր, որը իրականացվում էր բնակչության ինքնակազմակերպման, ինքնագործունեության և ինքնակարգավորման սկզբունքների միջոցով:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը հոչակում է. «Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովրդին իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքենների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով» (հոդված 3): Ժողովրդավարությունը, որպես սահմանադրական կարգի հիմք, ենթադրում է ժողովրդի կողմից իր իշխանության անմիջական իրացում, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների (Ռուսաստանի Դաշնության Սահմանադրություն, մաս 2, հոդ. 3):

Ինչպիսի՞ն է անմիջական ժողովրդավարության և տեղական ինքնակառավարման հարաբերակցությունը: Ըստ Վ.Յ. Կիրովի, ինքնակառավարումը պետք է մեկնարանվի ազատության և ժողովրդավարության ենթատերատում: Ժամանակակից հասարակությունում ինքնակառավարման միտունը արտա-

հայտված է ժողովրդի ինքնուրույնության սկզբունքում և մեծամասնության կանոնում, որը հանդիսանում է որոշումների ժողովրդավարական կայացման, ժողովրդավարական կառավարման սկզբնադրյուրը¹: Տեղական ինքնակառավարման համակարգի համար անմիջական ժողովրդավարության նշանակությունը որոշում է նաև նրանով, որ խմբակցությանը, որը կազմված է մի քանի հարյուրյակից կամ մի քանի հազար մարդուց, ավելի հեշտ է ձևավորել անմիջական մասնակցության հիման վրա, քան երկրի, որում ապրում են մի քանի միլիոն բնակչություն, կամ կայսրության, որտեղ նրանք հարյուր միլիոն են²:

Տեղական ինքնակառավարման կազմակերպման մեջ առավել վառ արտահայտվում է իշխանության՝ ժողովրդին մոտենալու գաղափարը: «Հասարակության մեջ ժողովուրդը իշխանության աղբյուրն է, գրել է Ա. դե Տոկվիլը, սակայն ավելի անմիջական, քան համայնքում. նա ոչ մի տեղ չի իրացնում իր իշխանությունը»³:

Անմիջական ժողովրդավարություն և տեղական ինքնակառավարությունների համադրումը հնարավորություն է տալիս բացահայտել այն ընդհանուր գծերը, որոնք բնութագրում են այնպիսի հասարակական երևույթների միասնական բնույթը, ինչպիսիք են անմիջական ժողովրդավարությունը և ինքնակառավարումը, և որոշել նրանց տարբերությունը:

Անմիջական ժողովրդավարության և ինքնակառավարման նմանությունը կայանում է նրանում, որ երկու ինստիտուտները ժողովրդավարության տարատեսակներն են, որը ենթադրում է քաղաքացիների մասնակցությունը տեղական նշանակության հարցերի քննարկման և որոշումների կայացման մեջ: Նրանք ունեն ընդհանուր նպատակ՝ ինքնակառավարման մեջ քաղաքացիների առավել լայն և արդյունավետ ներգրավվածությանը հետզինետ անցում:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Անմիջական ժողովրդավարության և տեղական ինքնակառավարման տարրերությունն այն է, որ ինքնակառավարումը, նախ և առաջ, տեղական միության տեղական նշանակության խնդիրների լուծման հատկանիշ(որպես): Այն իրականացվում է ինչպես ընտրական մարմինների, որոնք ձևավորվում են տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի համաձայն, այնպես էլ այլ մարմինների միջոցով, որոնք ստեղծվում են մունիցիպալ մարմինների կանոնադրության հիման վրա, տարածքային հասարակական ինքնակառավարման և անմիջական ժողովրդավարության ինստիտուտի միջոցով: Հետևաբար անմիջական ժողովրդավարությունը հանդես է գալիս որպես կազմակերպական մեխանիզմի մաս, որը ապահովում է այդ հատկանիշի իրացումը, որը իր մեջ ներառում է տեղական ինքնակառավարման մեջ քաղաքացիների անմիջական մասնակցության միջոցների և ձևավորման մեջ ներկայակարգը: Այլ կերպ ասած՝ տեղական ինքնակառավարությունը հարաբերակցվում են որպես նրա իրացման հատկանիշ և ձև: Տեղական ինքնակառավարությունը իրենց ներկայացնում է անմիջական և ներկայացնության ժողովրդավարության օրգանական համակցություն, իրացման հնարավորություններով և ձևերով ավելի լայն է, քան անմիջական ժողովրդավարությունը:

Անմիջական ժողովրդավարությանը կարելի է ներկայացնել համակարգի տեսքով, որը ունի երեք մակարդակ՝ հիմնարար արժեքներ, ինչը կազմում է բովանդակությունը, անմիջական ժողովրդավարության էությունը, ժողովրդավարության արժեքների իրացման և ձեռքբերման մեխանիզմ, սահմանադրական-իրավական ինստիտուտներ և նորմեր, որոնց միջոցով վերը նշված արժեքները ստանում են անմիջական հիմնավորում, ամրագրում և որոշում են իրավական նշանակությունը:

Անմիջական ժողովրդավարության՝ որպես առավել ընդհանրական համակարգի՝ ժողովրդավարության, ենթահամակարգի բովանդակությունը կազմում է քարոյական, քաղաքական, իրավական արժեքների ամրողությունը: Հեղինակները, որոնք տարբեր հայեցակարգերի կողմնակիցներ են և սահմանում են ժողովրդավարությունը որպես պետության ձև, քաղաքական ռեժիմ, քաղաքական գաղափարախոսություն, քաղաքական գործընթաց, քաղաքական շարժում, դրա հետ մեկտեղ՝ այս բոլոր սահմանումներում, որպես ժողովրդավարության հիմնարար արժեք,

նշում են մեծամասնության իշխանությունը փոքրամասնության, անհատի ազատության և քաղաքական իրավունքները, անհատների հավասարության, պետության կողմից մարդու իրավունքները հարգելու պայմանով: Այս բարոյական և քաղաքական արժեքները իրավական ամրագրում են ստացել ժամանակակից ժողովրդավարական պետություններում և ունեն միջազգային ճանաչում:

Անմիջական ժողովրդավարությունը, որպես արժեքների համակարգ, իրականացվում է այն սահմանադրական կարգի հիմքների միջոցով, որոնք գործում են տեղական ինքնակառավարման համակարգում՝ ընտրություն, պյուրալիզմ, իրավական օրենքներով և, նախ և առաջ, Սահմանադրությամբ առաջնորդում: Տվյալ ինստիտուտների թվարկումը թույլ կտա տեսնել, որ անմիջական ժողովրդավարությունը իրականացվում է ոչ բերարկատական, բռնի, մարդուն ճնշող միջոցների հիման վրա, այլ նրանցով, որոնք «դեմքով ուղղված են դեպի մարդը»: Այսպես՝ անմիջական ժողովրդավարությունը, որպես կառավարման մեխանիզմ, իրենց ներկայացնում է ինստիտուտների, որոշումների մշակման գործընթացների ամրողություն, որը ապահովում է, ժողովրդավարության արժեքներին համաձայն, տեղական ինքնակառավարման համակարգի գործումներությունը, որն էլ հնարավորություն է ստեղծում հաշվի առնել տեղական կյանքի հարցերի գծով տեղական համայնքի կարծիքը:

Անմիջական ժողովրդավարությունը կարելի է դիտարկել օբյեկտիվ և սուբյեկտիվ տեսանկյունից:

Օբյեկտիվորեն տեղական ինքնակառավարման համակարգում անմիջական ժողովրդավարությունը բնութագրում է իրավական նորմերի ամրողությունը, որը կազմում է ինչպես Ռուսաստանի Դաշնության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի գերազույն ինստիտուտը և տեղական ինքնակառավարման իրականացման ժամանակ կարգավորում է տեղական համայնքի անդամների կամքի անմիջական արտահայտման ձևերը:

Սուբյեկտիվորեն անմիջական ժողովրդավարությունը քաղաքացու իրավունքն է կամքի անմիջական արտահայտման միջոցով մասնակցել տեղական ինքնակառավարման իրականացմանը: Տեղական համայնքի անդամների կամքի անմիջական արտահայտման միջոցով տեղական ինքնակառավարման

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

իրականացմանը մասնակցելու իրավունքը իրացվում է հասարակական բնույթի մունիցիպալ իրավունքների խմբի միջոցով: «Հասարակական-իրավական ոլորտում քաղաքացու գործունեությանը բնորոշ է իրավունքի և ազատության իրացումը ինքնաիրացման ճանապարհով հասարակական ինստիտուտների միջոցով: Ի տարբերություն մասնավոր իրավունքի նորմերի, որոնք քաղաքացուն հնարավորություն են տալիս քույլատրելի օրինական ձևերով ինքնուրույն իրացնել իր իրավունքները, այստեղ մշտապես առաջանում են երկողմանի հարաբերություններ: Որպես մի կողմ մշտապես հանդես է գալիս իշխանական հարաբերությունների սուբյեկտը, որին օրենքով առաջարված է քաղաքացիների ազատության, իրավունքների իրացմանը նպաստելու և երաշխավոր լինելու պարտավորությունը»⁴:

Օբյեկտիվ և սուբյեկտիվ տեսանկյունից անմիջական ժողովրդավարությունների միջև գոյություն ունի սերտ փոխկապվածություն, օրգանական կախվածություն և փոխազդեցություն: Դրա համար էլ կարելի է խոսել մի սոցիալ-իրավական երեսույթի երկու կողմերի(օբյեկտիվ և սուբյեկտիվ) մասին, որոնց փոխազդեցության բացակայության դեպքում չի կարող գոյություն ունենալ և կյանքի կոչվել տեղական նշանակության հարցերի լուծման ժամանակ տեղական համայնքի անդամների կամքի անմիջական արտահայտումը: Անմիջական ժողովրդավարությունը, որպես սոցիալ-իրավական երեսույթ, ենթադրում է ոչ միայն իրավական նորմերի առկայություն, որոնք ներառված են օրենսդրությունում և այլ առյուրներում, այլ նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց սուբյեկտիվ իրավունքները և իրավասությունները: Տեղական մակարդակով անմիջական ժողովրդավարության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքներից դուրս գոյություն չունի ընդհանուր նորմերի իրացումը, որոնք կազմում են անմիջական ժողովրդավարությունը օբյեկտիվ կողմը:

Օբյեկտիվ տեսանկյունից անմիջական ժողովրդավարության առարկա են հանդիսանում այն հարաբերությունները, որոնք առաջանում են տեղական ինքնակառավարման համակարգում տեղական նշանակության հարցերի լուծման ուղղությամբ քաղաքացիների կամքի անմիջական արտահայտման հետ կապված:

Իրավահարաբերությունները, որոնք կազմում են անմիջական ժողովրդավարության ինստիտուտի առարկան, կարելի է դիտարկել լայն և մեղ իմաստով՝

իրավական նորմերի հարաբերությամբ առանձնացնելով նրանց երկու տեսակ: «Լայն իմաստով՝ իրավահարաբերություն ասելով հասկանում ենք մինչև օրենքը օբյեկտիվորեն առաջացող սոցիալական փոխազդեցության հատուկ ձև, որի մասնակիցները ունեն փոխադարձ, միմյանց լրացնող իրավունքները և պարտավորությունները և դրանք իրացնում են պետության կողմից չարգելված հատուկ կարգով իրենց պահանջմունքների և շահերի բավարարման նպատակով: Նեղ իմաստով՝ իրավահարաբերություն ասելով հասկանում ենք սոցիալական հարաբերության տարատեսակ, որը կարգավորվում է իրավական նորմերով, և որի մասնակիցները ունեն փոխադարձ, միմյանց լրացնող իրավունքները և պարտավորությունները և դրանք իրացնում են պետության մարմինների կողմից երաշխավորված և պաշտպանված հատուկ կարգով իրենց պահանջմունքների և շահերի բավարարման նպատակով: Այլ կերպ ասած՝ այս տեսակի իրավահարաբերություն ասելով՝ հասկանում ենք իրավական նորմերը, և որի մասնակիցները ունեն փոխադարձ, միմյանց լրացնող իրավունքները և պարտավորությունները և դրանք իրացնում են պետության մարմինների կողմից երաշխավորված և պաշտպանված հատուկ կարգով իրենց պահանջմունքների և շահերի բավարարման նպատակով: Այլ կերպ ասած՝ այս տեսակի իրավահարաբերություն ասելով՝ հասկանում ենք իրավական նորմերի հիման վրա, իրացնում է պետական կամքը»⁵:

Լայն իմաստով՝ սահմանված իրավահարաբերությունը կազմում է անմիջական ժողովրդավարության փաստացի ինստիտուտների հիմքը: Նրանք, ինչպես արդեն նշվել է, առաջանում են մինչև օրենքը, «ծառայում են որպես իրավական նորմերի աղյուր, այսինքն՝ ձևակորում են հասարակական, այսինքն՝ նաև պետական կամքը»⁶: Նեղ իմաստով արտահայտված՝ իրավահարաբերությունը, որը առաջանում է իրավական նորմերի հիման վրա, իրացնում է պետական կամքը (Ուսաստանի Դաշնության և նրա սուբյեկտների ակտեր) կամ հասարակական կամքը (տեղական ինքնակառավարման մարմինների ակտեր), կրում է ընդհանուր (անդեմ) բնույթը, երաշխավորվում և պաշտպանվում է պետության կողմից: Նրանք կազմում են անմիջական ժողովրդավարության ինստիտուտների իրավական հիմքը:

Այն իրավահարաբերությունների տեսակները, որոնք առաջանում են նորմերի հիման վրա, որոնք օբյեկտիվորեն կազմում են անմիջական ժողովրդավարությունը, կարելի է տարբերակել հիմնավորված դասակարգման միջոցով:

Կախված իրավական կարգավորման առարկայից՝ նրանք բաժանվում են տեղական ընտրությունների, տեղական հանրաքենների, քաղաքացիների հավաքների, հավաքների և հանրային ցույցերի, պատգամավորների և տեղական ինքնակառավարման ընտրության պաշտոնատար անձանց հաշվետվու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների քաղաքացիների դիմումների, հանրագրերի, ժողովրդի իրավաստեղծ նախաձեռնությունների անցկացման ոլորտի հարաբերությունների:

Հստ նորմերի բնույթի, որոնք կարգավորում են քաղաքացիների կամքի անմիջական արտահայտման ոլորտում հարաբերությունները, նրանք բաժանվում են նյութափակականի և դատավարականի: Նյութական իրավահարաբերությունները առաջանում են նյութական իրավունքի նորմի հիման վրա: Նրանցում իրացվում է իրավունքների և պարտավորությունների բովանդակությունը: Դատավարական իրավահարաբերությունները առաջանում են դատավարական նորմերով և դիտարկում են սուբյեկտների իրավունքների և պարտավորությունների իրացման ընթացակարգերը:

Հարաբերությունները, որոնք օբյեկտիվ տեսանկյունից կազմում են անմիջական ժողովրդավարության առարկան, կարող են լինել ընդհանուր և կոնկրետ: Ընդհանուր իրավահարաբերությունների հիմքում ընկած են սահմանադրական և այլ նորմերը, որոնք որոշում են մունիցիպալ իրավունքները և տեղական համայնքի անդամների ազատությունը: Նրանք իրենցից ներկայացնում են իրավական վիճակ: Կոնկրետ իրավահարաբերությունները առաջանում են որոշակի մունիցիպալ իրավունքի և տեղական համայնքի անդամների ազատության իրացման ժամանակ:

Օբյեկտիվ տեսանկյունից անմիջական ժողովրդավարության առարկան կազմող իրավահարաբերությունների բովանդակությանը բնորոշ են որոշակի առանձնահատկություններ:

Նախ և առաջ, դա նման հարաբերությունների հանրային բնույթն է: Վառ օրինակ կարող են ծառայել հարաբերությունները, որոնք առաջանում են տեղական ընտրությունների, հանրաքենների, հանրային ցույցերի անցկացման գործընթացում:

Բացի այդ, հարաբերությունները, որոնք օբյեկտիվ տեսանկյունից կազմում են անմիջական ժողովրդավարության առարկան, ըստ իրենց բնույթի, երկկողմանի են: Եվ մի կողմով մշտապես հանդես է գալիս իշխանության իրավասությամբ սուբյեկտը, որի վրա օրենքով դրված է քաղաքացու ազատության, իրավունքի իրացման օժանդակման և դրանց երաշխավոր լինելու պարտավորությունը: Անվիճելի է սահմանադրական իրամանը. «Մարդու և քաղաքացու

իրավունքների և ազատության ճանաչումը, պահպանումը և պաշտպանումը պետության պարտավորությունն է» (Ուսասատանի Դաշնության Սահմանադրություն, հոդված 2):

